նպատակով անհրաժեշտ են քաղաքականության հետագա բարեփոխումներ: Ագրոբիզնեսի ոլորտը հզորացնելու համար տեղում աշխատանք տանելու անհրաժեշտություն կա. հատկապես հարկ է լուծել հումք ծառայող գյուղմթերքի արտադրության հատվածականության հարցը: Զուգահեռաբար, պետք է անդրադառնալ արտահանմանն առնչվող երեք մարտահրավերների, որոնց լուծումը թույլ կտա Հայաստանը կապել ագրոբիզնեսի գլոբալ արժեքի շղթային. այդ մարտահրավերներն են՝ արտահանման սահմանափակ խթանումը, արտահանման մասով սահմանափակ գիտելիքները և հմտությունները (ինչպես օրինակ՝ արտասահմանյան գործընկերների հետ գործարար հարաբերություններ հաստատելու ունակությունը), արտահանման ենթակառուցվածքով և իրավակարգավորման դաշտով պայմանավորված խոչընդոտները, ինչպես նաև սահմանափակ տեղեկատվությունը, արժույթի հետ կապված ռիսկերը, քաղաքական և իրավական ռիսկերը:

Արտահանման ոլորտում առկա մարտահրավերների հասցեագրում

Առաջին. Հայաստանի արտահանման ծավալները, արտահանման խթանումը, արտահանման մասով գիտելիքներն ու հմտությունները սահմանափակ են: Հայաստանի վերամշակված մրգերն և բանջարեղենը հայտնի են հիմնականում Ռուսաստանի և ԱՄՆ երկրների շուկաներում և ոչ այնքան հայտնի՝ այլ շուկաներում (Եվրոպական Միությունում, ավելի քիչ՝ Միջին և Հեռավոր Արևելքում). իշխանությունները շատ քիչ բան են արել երկրի/ապրանքի բրենդ ստեղծելու և զարգացնելու ուղղությամբ: Ավելին, տեղական ՓՄՁ-ները չեն տիրապետում օտարերկրյա շուկաների վերաբերյալ բավարար տեղեկատվության, որը նրանց անհրաժեշտ է հաջողությամբ արտահանում իրականացնելու համար: Գյուղմթերքի վերամշակմամբ զբաղվող ՓՄՁ-ների արտահանման հմտությունները սահմանափակ են, իսկ արտահանման խթանմամբ զբաղվող գործակալությունը չի ցուցաբերում բավարար աջակցություն:

Երկրորդ. արտահանման ենթակառուցվածքը և իրավակարգավորման դաշտը բարելավման կարիք ունեն: Հայաստանի ներքին շուկան փոքր է, իսկ արտահանման տարբերակները՝ սահմանափակ՝ պայմանավորված այն հանգամանքով, որ Հայաստանը ծովային ելք չունեցող երկիր է: Առկա

դժվարությունները չեզոքացնելու համար հարկ է, որ երկիրն ունենա արտահանման բարձրորակ ենթակառուցվածք: Այս զեկույցի շրջանակում ընդգրկված չեն ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտային ցանցերի կառուցման երկարաժամկետ աշխատանքները, սակայն պահեստները և մանրածախ առևտրի կազմակերպման կետերը մատնանշվել են որպես բարելավման ուղղություններ: Կենտրոնական պահեստի առկայությունը թույլ կտա փոքր արտադրողներին համախմբել իրենց արտադրանքը՝ այսպիսով հաղթահարելով հատվածական և փոքրամասշտաբ ագրոբիզնեսի մի քանի թույլ կողմերը: Իրավակարգավորման դաշտում՝ օրեր են վատնվում դասակարգման և արտահանման հավաստագրերի ստացման վրա, ինչը լրացուցիչ ծախս է արտահանողների համար: Գործընթացի բարելավումը և օպտիմալացումը թույլ կտա կրճատել մաքսազերծման համար պահանջվող ժամանակը և հնարավորություն կտա արտահանողներին օգտվել հավաստագրման որակյալ ծառայությունից:

Երրորդ. արտահանողները, մասնավորապես ՓՄՁ-ները, հանդիպում են ռիսկերի, որոնք կապված են օտարերկրյա գնորդների հուսալիության վերաբերյալ սահմանափակ տեղեկատվության, տարադրամի տատանումների, քաղաքական ռիսկերի և որևէ խնդրի առաջացման դեպքում բարդ իրավական ընթացակարգերի հետ: Արտաքին պատվերները կատարելու համար, որոնք հաճախ շատ ավելի մեծ են ներքին պատվերներից, արտահանողները նաև ավելի շատ շրջանառու միջոցների կարիք են ունենում: Հայաստանի ագրոբիզնեսի փոքրամասշտաբ վերամշակող ձեռնարկությունները հաճախ ի զորու չեն ապահովել իրենց արտահանման ռիսկերից կամ օգտվել լրացուցիչ վարկային գծերից: Փաստացի, մասնավոր հատվածը արտահանման ֆինանսավորում չի տրամադրում: Արտահանման ապահովագրական նորաստեղծ գործակալությունը ֆինանսական աջակցություն է առաջարկում Հայաստանի ագրոբիզնեսի ոլորտի ՓՄՁ-ներին, սակայն այն դեռ սաղմնային փուլում է:

Այս զեկույցում բերված են առաջարկություններ առ այն, թե ինչպես կարելի է հաղթահարել այս երեք մարտահրավերները:

Արտահանման խթանման, արտահանման ենթակառուցվածքի և արտահանման ֆինանսավորման մասով անհրաժեշտ քաղաքականության քայլեր

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ արտահանման ընդլայնմանը ցուցաբերվող համալիր հովանոցային մոտեցումը ամենանպաստավորն է ՓՄՁ-ներին գլոբալ արժեքի շղթաներին կապակցելու համար: Նման մոտեցումը պետք է ուղղված լինի արտահանման խթանման հաջող քաղաքականությունների հիմքը կազմող երեք հենասյուներին. դրանք են՝ ինտենսիվ մարքեթինգ և հմտությունների զարգացման նախաձեռնություններ, արտահանման ենթակառուցվածքի ստեղծում և արտահանման վարկերի տրամադրում:

Հիմք ընդունելով միջազգային պատշաճ գործելակերպը և Հայաստանում առկա իրավիճակը՝ հարկ է, որ ՀՀ կառավարությունն իրականացնի հետևյալ քայլերը.

- **Բարելավել արտահանման խթանման և արտահանման մասին տեղեկատվության տարածման աշխատանքները.** համապատասխան պետական մարմինները պետք է տեղեկանան թիրախային արտաքին շուկաների և պոտենցիալ օտարերկրյա գնորդների մասին, այնուհետև այդ գիտելիքը փոխանցեն թե՛ առկա և թե՛ պոտենցիալ արտահանողներին՝ տրամադրելով արտահանմանն առնչվող թեմաներով ուսուցում: Սերտորեն աշխատելով մասնավոր հատվածի հետ՝ Հայաստանի արտահանման խթանման գործակալությունը պետք է մշակի երկրի և/կամ ոլորտի բրենդավորման մոտեցում արտահանվող ապրանքների մարքեթինգի համար:

- **Բարելավել արտահանմանն առնչվող հիմնական ենթակառուցվածքը.** բարեփոխումների արդյունքում պետք է օպտիմալացվեն արտահանման կարգավորման ընթացակարգերը և մաքսային ու արտահանման հավաստագրման համար ներդրվի մեկ պատուհանի սկզբունքը: Փոքրամասշտաբ լոգիստիկ կենտրոնների հիմքի վրա ՀՀ կառավարությունը պետք է ուսումնասիրի մեկ միասնական պահեստ և շուկա ստեղծելու տարբերակը, որտեղ կխմբավորվեն փոքր արտադրողների

արտադրանքները և հարմարություններ կստեղծվեն ապրանքների պահեստավորման, դասակարգման, փաթեթավորման և սակարկությունների միջոցով վաճառքի համար:

• **Շարունակել զարգացնել արտահանման ֆինանսավորումը**. երկրի բանկերի հետ սերտ գործընկերության պայմաններում ՀՀ կառավարությունը պետք է լիարժեք աջակցի նորաստեղծ՝ Արտահանման ապահովագրական գործակալությանը և ապահովի համապատասխան օրենսդրություն: Միջնաժամկետ հեռանկարում գործակալության կապիտալը պետք է բաց լինի մասնավոր հատվածի համար, և նրա արտահանման ֆինանսավորման պրոդուկտները պետք է կատարելագործվեն:

ԳԼՈՒԽ 1. ԳԼՈԲԱԼ ԱՐԺԵՔԻ ՇՂԹԱՆԵՐ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ՈԼՈՐՏԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Անհրաժեշտ է, որ Հայաստանի ագրոբիզնեսի ոլորտի տեղական ընկերությունները հարմարվեն գլոբալացվող աշխարհին, որտեղ միջոցների ներգրավումը կատարվում է համաշխարհային մասշտաբով, և ապրանքների մեծ մասն իրացվում է բազմազգ ընկերությունների կողմից՝ իրենց միջազգային արժեքի շղթաների ներսում: Կապակցումը բարձրակարգ պարենային ապրանքների աճող գլոբալ պահանջարկին, երևի թե, կխթանի Հայաստանի ագրոբիզնեսի ոլորտի արդյունավետությունը և այդպիսով՝ նաև մրցունակությունը: Հայաստանի ագրոբիզնեսն ունի հարաբերական առավելություն բարձրակարգ մրգերի և բանջարեղենի արտադրության մեջ, որոնք հարմարեցված են տեղի կլիմայական պայմաններին և հմտություններին: Կանխատեսվում է բաձրակարգ ապրանքների, այդ թվում՝ մրգերի և բանջարեղենի նկատմամբ համաշխարհային պահանջարկի աճ, և աճման միտումը շարունակվելու է կարճաժամկետից՝ միջնաժամկետ հեռանկարում: Սակայն արտահանման խթանման և գլոբալ արժեքի շղթայի հետ կապակցվելու առումով Հայաստանի գյուղմթերք վերամշակողները բախվում են մի շարք մարտահրավերների, ներառյալ՝ 1) ավելի լավ մարքեթինգային ջանքերի անհրաժեշտություն, 2) արտահանման ոչ բավարար ենթակառուցվածք և 3) դեռևս սաղմնային փուլում գտնվող արտահանման ֆինանսավորում:

Արտահանումը թույլ է տալիս տեղական ընկերություններին հասնել ավելի մեծ շուկաներ, սակայն դա բարդ բիզնես գործընթաց է: Ներքին իրացման գործառնությունների համեմատ այստեղ ռիսկն ավելի մեծ է, և պահանջվում են ավելի մեծ շրջանառու միջոցներ ու բիզնես նրբությունների իմացություն: Փոքր և միջին ձեռնարկությունները (ՓՄՁ-ներ) սովորաբար դժվարանում են ռեսուրսների հայթայթման հարցում, ինչն անհրաժեշտ է արտահանման գործարքներ ձեռնարկելու համար: Հաճախ ՓՄՁ-ներն արտադրում են այնպիսի ապրանքներ կամ ծառայություններ, որոնք տվյալ արժեքի շղթայում միջանկյալ արտադրանք են և, այդ իսկ պատճառով, նրանք սահմանակվում են ավարտուն ապրանքների միայն տեղական արտադրողներին մատակարարելով: Գլոբալ արժեքի շղթաներին կապակցելը, այդուամենայնիվ, կարող է լինել ավելի մեծ շուկաների հասնելու այլընտրանքային եղանակ: Սա ենթադրում է ուղղահայաց ինտեգրմամբ բազմազգ արժեքի շղթաների մաս դառնալը՝ նրանց տրամադրելով մասնագիտացված միջանկյալ արտադրանքներ կամ ծառայություններ: Որպեսզի բազմազգ ընկերությունները իրենց միջանկյալ արտադրանքները ստանան տեղական ՓՄՁ-ներից, վերջիններս պետք է ունեն հուսալի գործընկերոջ վարկանիշ և առաջարկեն այնպիսի որակի ու մասշտաբի արտադրանք, որը կբավարարի բազմազգ ընկերությունների պահանջներին: Դրան հասնելու համար քաղաքականության հարթությունում ՓՄՁ-ներին տրամադրվող աջակցությունը կարող է բերել դրական ածանցյալ ազդեցություններ: Վերջին հաշվով՝ դա թույլ կտա նրանց աճել և իրավամբ մուտք գործել արտահանման շուկաներ:

Հայաստանն ունի շատ փոքր ներքին շուկա և մոտավորապես 3 միլիոն բնակչություն, տարեկան համախառն ներքին արդյունքը կազմում է 10.4 միլիոն ԱՄՆ դոլար, որից ագրոբիզնեսի ոլորտին բաժին է ընկնում 20%-ը: Այդ իսկ պատճառով, ագրոբիզնեսով զբաղվող ընկերությունների մեծ մասն ունի առավելագույնը 250 աշխատող և ոչ ավել քան 20 միլիոն ԱՄՆ դոլարի շրջանառություն. այսպիսով, այս ընկերությունները համարվում են ՓՄՁ-ներ (CIA, 2014թ., EC, 2014թ.): Աճելու համար այս ընկերությունները պետք է փորձեն իրենց արտադրատեսակներն իրացնել արտաքին շուկաներում, սակայն մինչ այժմ գրանցված հաջողված օրինակները դեռ փոքրամասշտաբ են, և սովորաբար սահմանափակվում

են Ռուսաստանի և Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) երկրների շուկաներով:

Հայաստանի ագրոբիզնեսի ոլորտը, արտահանման ծավալներն ընդլայնելու իր ջանքերում, հանդիպում է մի շարք բիզնես խնդիրների, որոնք քաղաքականության պատասխանատուների ուշադրությունն են պահանջում: Դրանցից մի քանիսն ընդհանուր բնույթի մարտահրավերներ են, որոնց բոլոր ՓՄՁ-ներն առնչվում են իրենց փոքր մասշտաբի պատճառով: Այդ մարտահրավերներից մի քանիսն, այդուամենայնիվ, վերաբերում են Հայաստանի գործարար միջավայրին և երկրի ագրոբիզնեսի վիճակին: Այս գլխում վերլուծության են ենթարկվել վերջին երկուսը, և ամփոփված են այն առանցքային մարտահրավերները, որոնք պետք է հաղթահարել: Հաջորդ գլխում քննարկվում են քաղաքականության այն մեխանիզմները, որոնք կարող են խրախուսել հայկական ընկերություններին, որպեսզի վերջիններս փորձեն կապվել բազմազգ ընկերությունների արժեքի շղթաներին, ինչպես նաև խրախուսել բազմազգ ընկերություններին՝ գյուղատնտեսական արտադրանքներ ձեռք բերելու հայկական ընկերություններից: Եվ վերջում՝ զեկույցում բերված են քաղաքականության մասով առաջարկություններ՝ ՏՀԶԿ երկրների հաջողված գյուղմթերք արտահանողների փորձի լույսի ներքո: Այս առաջարկությունները մասնավորապես նպատակաուղղված են այն հիմնական մարտահրավերների հաղթահարմանը, որոնց հայրենական ՓՄՁ-ները դեմ են առնում ագրոբիզնեսի գլոբալ արժեքի շղթաներին միանալիս: Դրանք քաղաքականության գործիքներ են, որոնք կարող են լինել շուկային ուղղված լայնընդգրկուն հանրային քաղաքականության գլխավոր հենասյուները: Դրանք սպառիչ չեն արտահանման խթանման մեխանիզմների առումով, սակայն կարող են հիմք հանդիսանալ արտահանման խթանման ընդհանուր ենթակառուցվածքի համար: Դրանք, այդուամենայնիվ, բավարար են Հայաստանի ագրոբիզնեսի ոլորտի արտադրական հատվածների արտահանման կողմնորոշման գործընթացին զարկ տալու համար և կբարելավեն դրանցից օգտվող ընկերությունների մրցունակությունը, ինչպես նաև այս ոլորտի համընդհանուր արտադրողականությունը:

Կապակցումը գլոբալ արժեքի շղթաներին խրախուսում է աճը և նորարարությունը

Արտահանումը տեղական ընկերություններին միացնում է համաշխարհային շուկաներին և արժեքի շղթաներին

Ըստ սահմանման՝ գլոբալ արժեքի շղթան (ԳԱՇ) ընդգրկում է գործունեության բոլոր այն տեսակները, որոնցով ընկերությունները զբաղվում են իրենց երկրում և արտասահմանում՝ սկսած մտահղացումից մինչև իրացում (ՏՀԶԿ, 2013թ.): Այս գործողությունների շարքն ընդգրկում է միջոցառումներ՝ սկսած նախագծումից, արտադրությունից, լոգիստիկայից և բաշխումից մինչև վերջնական սպառողին աջակցելը: Արժեքի շղթան կազմող գործողությունները կարող են պարփակվել մեկ ընկերությունում (հաճախ՝ մեկ մեծ բազմազգ ընկերությունում) կամ բաշխվել տարբեր ընկերությունների միջև: Գերակշռող դեպքերում արժեքի շղթաները ընդգրկում են մի շարք տարածաշրջաններ և երկրներ, թեև դրանք կարող են սահմանափակվել նաև միայն մեկ աշխարհագրական տարածքով:

Գլոբալ շուկաներին և ԳԱՇ-երին կապակցվելը պետք է լինի Հայաստանի տեղական ընկերությունների կարևոր նպատակը՝ ելնելով այն հանգամանքից, որ ապրանքների և ծառայությունների համաշխարհային առևտրի մոտ 80%-ը տեղի է ունենում բազմազգ ձեռնարկությունների միջազգային արտադրական ցանցերում (Ալթոմոնտե և այլոք, 2012թ.): Դա հատկապես կարևոր է ՓՄՁ-ների համար, որոնք ունեն արտադրության արդիական շղթաներ ստեղծելու փոքր հնարավորություն և չունեն համապարփակ մարքեթինգային արշավների համար պահանջվող ռեսուրսներ: Եթե Հայաստանի ՓՄՁ-ները բաց լինեն առևտրի համար, անկախ նրանից, թե նրանք ներմուծում, թե՞ արտահանում են հումք կամ կիսապատրաստի միջանկյալ ապրանքներ, ապա նրանք կարող են հաջողությամբ ինտեգրել իրենց արտադրանքը գլոբալ արժեքի շղթաների որոշ հատվածներում: Այս կերպ կարելի է մեղմացնել հետագա զարգացման ճանապարհին հանդիպող մի շարք խոչընդոտները՝ ներքին շուկայի փոքր չափը, ներքին իրավակարգավորման զսպող պահանջները և ներքին մրցակցության սահմանափակող մակարդակը:

Ավելի մեծ շուկաներին միանալը և աճող միջազգային պահանջարկից օգտվելը

Գլոբալ աճը և առևտուրն աճում են, և ըստ կանխատեսումների՝ 2014-2015 թվականներից հետո այդ աճը կարճաժամկետից միջնաժամկետ հեռանկարում շարունակվելու է: Սա 2008-2009 թվականների խորը ճգնաժամին հաջորդած բարելավված տնտեսական գործունեության և մինչ այժմ գրանցված դանդաղ վերականգնման արդյունք է: Առաջատար տնտեսությունների վերականգնումը այս աճի հիմքն է: Այդ տնտեսությունները հիմնականում խույս են տվել հետճգնաժամային առաջին ամիսների գնանկման ռիսկից: Նոր առաջացող շուկաները՝ զուգակցված Չինաստանի կայուն աճի հետ, նույնպես նպաստում են դրական հեռանկարներին (ԱՄՀ, 2014ա): Չնայած տնտեսական աճի գործընթացում ակնկալվող որոշ տատանումներին՝ կանխատեսվում է, որ համաշխարհային առևտուրը 2014թվականին կաճի 4.7%-ով, և այդ աճը կշարունակվի՝ 2015 թվականին հասնելով 5.3%-ի (ԱՀԿ, 2014 թ.):

Ագրոբիզնեսի գլոբալ արժեքի շղթայում պարենի նկատմամբ համաշխարհային պահանջարկը մեծանում է բնակչության աճի, եկամուտների ավելացման և միջին դասի ընդլայնման արդյունքում (տե'ս Գծապատկեր 1-ը): Ուրբանիզացիան՝ հատկապես զարգացող երկրներում, ավելացնում է այն մարդկանց թիվը, ովքեր կախված են ուրիշներից՝ իրենց համար սննդամթերք աճեցնելու կամ արտադրելու հարցում: Ակնկալվում է, որ պարենի նկատմամբ պահանջարկը համաշխարհային մասշտաբով կգրանցի տարեկան 2% աճ՝ ընդհուպ մինչև 2022 թվականը: Այս աճը հիմնականում պայմանավորված է զարգացող աշխարհով և նրանում ձևավորվող միջին դասով (ՏՀԶԿ և ՊԳԿ, 2014 թ.): Պարենի բոլոր հիմնական հատվածներում, ինչպես նաև կենսավառելիքի մասով կանխատեսվում է սպառման ծավալների աճ:

Գծապատկեր 1. Բնակչության գլոբալ աճի և պարենի սպառման սեգմենտները՝ ըստ կալորիաների



Աղբյուր. Դյուպոն, (2013 թ.) Գոլդման Զախսի անվան ագրոբիզնեսի 17-րդ ամենամյա կոնֆերանսին ներկայացված շնորհանդես, Նյու Յորք, 26-ը փետրվարի, 2013թ. http://phx.corporate-ir.net/External.File?t=1&item=VHlwZT0yfFBhcmVudElEPTQ5MDA5MDh8Q2hpbGRJRD00OTU1OTM=:

Արտահանումն ընձեռում է միջազգային կորպորատիվ պատշաճ գործելակերպի և տեխնոլոգիաների տարածման հնարավորություն

Փորձից ելնելով կարելի է ասել, որ միջազգային առևտուրը ասոցացվում է ավելի բարձր համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) և տնտեսական աճի հետ (Նյուֆարմեր և Զտաժերովսկա, 2012թ.): Համաշխարհային արժեքի շղթաներով իրականացվող առևտուրն ապահովում է արտադրողականության աճ: Քանի որ ընկերությունները մասնագիտանում են նրանում, ինչը նրանց մոտ ամենալավն է ստացվում, և իրենց համար ոչ առանցքային աշխատանքները ձեռք են բերում արտասահմանից ավելի փոքր ծախսերով, հետևաբար արտադրողականությունը բարելավվում է, ծախսերը կրճատվում են, իսկ բարելավված մրցունակությունը հնարավորություն է տալիս ընդլայնել արտադրանքի ծավալները և, թերևս, զբաղվածությունը: Կլայնը (2004թ.) եկել է այն եզրակացության, որ առևտուր-ՀՆԱ հարաբերակցության մեջ 10 տոկոսային կետով աճը միջինում կստեղծի աշխատանքի

արդյունավետության 1.4%-9.6% երկարաժամկետ աճ: Մարինը (2010թ.) նշել է, որ օֆշորային գոտիներ մասնաճյուղերը տեղափոխելու և արժեքի շղթայի որոշ մասերը Արևելյան Եվրոպա, Ռուսաստանի Դաշնություն և Ուկրաինա աութսորսինգի արդյունքում ստացված բարձր արտադրողականությունը եղել է վերջին տարիներին Գերմանիայի արտահանման կայուն մրցունակության հիմնական պատճառներից մեկը:

Գոյություն ունեն բարելավված արտադրողականությունը փոխանցելու բազմաթիվ ուղիներ: Գլոբալ արժեքի շղթաները տեղական ընկերություններին ընձեռում են ինովացիոն տեխնոլոգիաների և միջազգային կորպորատիվ պատճաշ գործելակերպի հասանելիություն, որոնք երկուսն էլ պայմանավորում են բազմազգ ընկերությունների բարձր արտադրողականությունը: Էմպիրիկ տվյալները վկայում են բազմազգ ընկերությունների արժեքի շղթաներին կապակցվելու և առևտրի մեջ ընդգրկվելու ազդեցությունների մասին: Բերնարդը և այլոք (2007թ.) նշել են, որ ընկերությունների պարագայում ռեսուրսների վերաբաշխումը՝ ավելի արտադրողական գործունեության, բարձրացնում է ռացիոնալությունը, միևնույն ժամանակ, ընկերությունները առևտրային գործընկերներից որդեգրում են ավելի լավ գործելակերպեր: Կապիտալ ապրանքների և միջանկյալ արտադրանքի ներմուծման և արտահանման մեջ տեխնոլոգիաներ ներդնելը կարող է ավելի բարձրացնել տեղական արտադրողականությունը, քան վերջնական ապրանքների այնպիսի ներմուծման և արտահանման դեպքում, երբ տեղական արտադրական գործընթացը որևէ փոփոխության չի ենթարկվում (Կելլեր, 2004թ.): Այս դեպքում համաշխարհային շղթային կապակցվելն ավելի կարևոր է, քան պարզապես առևտրի մեջ ներգրավվելը: Միրոուդոտը և այլոք (2009թ.) ցույց են տվել, որ ՏՀԶԿ երկրներում ներմուծվող միջանկյալ արտադրանքի ավելի մեծ տեսակարար կշիռ ունեցող արտադրությունները միջինում ավելի բարձր արտադրողականություն ունեն, քանի որ օտարերկրյա արտադրական միջոցները պարունակում են ավելի շատ արտադրական տեխնոլոգիաներ և ռեսուրսների վերաբաշխման շրջանակն ընդլայնում են՝ այն ուղղելով դեպի առավել բարձր արդյունավետություն: Եվ վերջապես, առևտրի բաց լինելը հաճախ ստիպում է կառավարություններին հետամուտ լինել մակրոտնտեսական քաղաքականությունների, սեփականության իրավունքի պատշաճ պաշտպանության, արդյունավետ

կարգավորման և ընդհանուր առմամբ՝ բիզնեսի համար բարենպաստ միջավայրի ապահովման:

Հայաստանի ագրոբիզնեսի ոլորտի ընկերությունները կարող են միայն շահել առևտրից: Նրանք ոչ միայն կկարողանան աճել՝ ելնելով նրանից, որ արտաքին շուկաներն ավելի մեծ են և ունեն համապատասխան որակով արտադրանքի ավելի մեծ քանակների պահանջարկ, այլև նրանք կօգտվեն վերը նկարագրված տիպի ոչ նյութական արտադրողականության բարելավումից: Գործնականում հնարավոր են երկու միաժամանակյա ռազմավարություններ.

- Ուղղահայաց ինտեգրմամբ խոշոր հայաստանյան ագրոբիզնեսները կարող են բարձրացնել արտադրողականությունը՝ վերամշակված բարձրարժեք վերջնական պարենային ապրանքները դեպի համապատասխան թիրախային շուկաներ ուղղակիորեն արտահանելու միջոցով:

- Այնուհանդերձ, ՓՄՁ-ների համար գլոբալ արժեքի շղթաներին միանալն անխուսափելի է: Այնուհետև նրանք կարող են մասնագիտանալ տվյալ արժեքի շղթայի գործունեության տեսակներից որևէ մեկում, օրինակ՝ մրգերի օրգանական չորացման մեջ մասնագիտանալը, և օգտվելը արտադրողականության բարելավման մի շարք հնարավորություններից, ինչպիսիք են՝ ավելի որակյալ արտադրական միջոցները, մարքեթինգի և բրենդավորման դասերը կամ ‹‹ճիշտ ժամանակին›› առաքելու հասկացությունը: Այնուհետև նրանք կարող են վաճառել միջանկյալ արտադրանքը մեկ այլ ՓՄՁ-ի կամ անմիջապես որևէ բազմազգ դիստրիբյուտորի կամ մանրածախ առևտրով զբաղվող ընկերության:

Սակայն գլոբալիզացման աճը ենթադրում է նաև մեծ մրցակցություն, որը ստեղծում են միջազգային ընկերությունները: Մասնավորապես, ՓՄՁ-ները պետք է իրենց ունեցած փոքր ռեսուրսներով հարմարվեն մրցակցային իրականությանը: Oxford Economics-ը հրապարակել է 2013 թվականին կատարված տարբեր ոլորտների և 21 երկրների ավելի քան 2 000 ՓՄՁ-ների տնօրենների հարցախույզը. նրանք նշել են, որ համաշխարհային մրցակցության աճը ՓՄՁ-ների վրա ազդող ամենաուժեղ

միտումն է, միաժամանակ շեշտել են, որ դեպի համաշխարհային արժեքի շղթաներ ընդլայնումը աճի և մրցունակության առավել կարևոր ռազմավարական շարժիչ ուժ է, քան ներքին էքսպանսիան (Oxford Economics, 2013թ.):

Քաղաքականության պատասխանատուների դերն է աջակցել ՓՄՁ-ներին համաշխարհային առևտրին և արժեքի շղթաներին ինտեգրման հարցում՝ առաջարկելով մի շարք քաղաքականություններ, որոնք քննարկված են սույն զեկույցում: Քաղաքականության գործիքները մշակվել են այնպիսի ձևով, որ մեծացնեն Հայաստանի ագրոբիզնեսի ոլորտի ՓՄՁ-ների պատրաստվածությունը համաշխարհային արժեքի շղթաներում կատարվող գործարքներին:

Արտահանման դերը Հայաստանի տնտեսության մեջ

Գլոբալ տնտեսական ճգնաժամից հետո արտահանման ծավալները դժվարությամբ են վերականգնվում

Հայաստանի արտահանման ծավալը 2012 թվականին կազմել է 1.6 մլրդ. ԱՄՆ դոլար, սակայն որպես ՀՆԱ-ի տեսակարար կշիռ այն համեմատաբար փոքր է նմանատիպ երկրների համեմատ: Գծապատկեր 2-ում Հայաստանը համեմատվում է հարևան Վրաստանի և Ադրբեջանի, ինչպես նաև վերջերս Եվրոպական Միությանը միացած Բուլղարիայի և Ռումինիայի, և Եվրոպական առաջատար արտահանող տնտեսություն ունեցող Գերմանիայի հետ: Այս խմբում Հայաստանն ունի արտահանման ամենացածր տեսակարար կշիռը՝ մոտ 25% ՀՆԱ-ի կազմում:

Հայաստանի տնտեսությունն ունի արտահանման ընդլայման հետ կապված մի շարք խոչընդոտներ: Այն ծովային սահման չունեցող երկիր է, իսկ մուտքը ծովային նավահանգիստներ սահմանափակ է:

ծապատկեր 2. **Ապրանքների և ծառայությունների արտահանումը ՀՆԱ-ի կազմում (տոկոսային արտահայտությամբ)**



Աղբյուրը. Համաշխարհային Բանկ (2014թ.). ‹‹Ապրանքների և ծառայությունների արտահանում (ՀՆԱ-ի %)››, Համաշխարհային բանկի տվյալների շտեմարան՝ http://data.worldbank.org/indicator/NE.EXP.GNFS.ZS, մուտքը՝ 29-ը հուլիսի, 2014թ.:

2008-2009 թվականների համաշխարհային տնտեսական ճգնաժամը միանշանակ վատթարագույն ժամանակաշրջանն էր Հայաստանի արտահանման կայուն նվազեցման առումով (վերցված որպես ՀՆԱ-ի տոկոս), որը սկսվել էր դեռևս 2003 թվականին: Սկսած 2009 թվականից՝ Հայաստանի արտահանումը սկսել է վերականգնվել, սակայն դեռևս չի հասել ՀՆԱ-ի՝ անկմանը նախորդող ավելի քան 30% մակարդակին:

Հիմնականում արտահանվում են բարձրարժեք հումքային ապրանքներ

Հայաստանից արտահանվող հիմնական ապրանքներն են բարձրարժեք հումքը կամ վերամշակված արտադրանքները: Սա շատ տեղին է՝ ելնելով երկրի ծովային ելք չունենալու հանգամանքից և, ըստ ամենայնի, տրանսպորտային մեծ ծախսերից: Աղյուսակ 1-ում բերված են Հայաստանից արտահանվող հիմնական ապրանքախմբերը:

Աղյուսակ 1. Հայաստանից արտահանվող հիմնական ապրանքախմբերը (ընդհանուր արժեքի %), 2013 թ.

Հիմնական արտահանում Հայաստանից (%)	2013
Մետաղ	23 %
Ագրոբիզնեսի ոլորտի ապրանքներ (ներառյալ՝ ալկոհոլ, ծխախոտ, սննդամթերք, կենդանական և բուսական ծագման ապրանքներ)	21 %
Օգտակար հանածոներ	18 %
Թանկարժեք մետաղներ	14 %
Մեքենաներ	8 %
Տրանսպորտ	5 %
Քիմիական ապրանքներ	2 %
Տեքստիլ ապրանքներ	2 %
Այլ	5 %

Աղբյուրը. ՏՀՁԿ (2014թ.), «Հայաստանի արտահանման, ներմուծման և առևտրային գործընկերների նկարագիրը» http://atlas.media.mit.edu/profile/country/arm/ (մուտքը 2014 թ. հուլիսի 29-ին):

Արտահանման մեծ մաս են կազմում թանկարժեք և ոչ թանկարժեք մետաղները և հանքանյութերը: Ագրոբիզնեսի ոլորտի արտադրանքը կազմում է արտահանման երկրորդ ամենակարևոր խումբը: Այն ներառում է հիմնականում վերամշակված արտադրատեսակներ, ինչպիսիք են՝ ալկոհոլային խմիչքները, ծխախոտը և վերամշակված սննդամթերքը (պահածոյացված մրգեր և բանջարեղեն, հյութեր, և այլն):

Աղյուսակ 2-ում պատկերված է այդ ապրանքների հետագա բաշխվածքը՝ ըստ Հայաստանից ամենաշատ արտահանվող հինգ ապրանքատեսակների: Դրանց բաժին է ընկնում ընդհանուր արտահանման 45.2%-ը: Արտահանումը շատ կենտրոնացված է հանքանյութերի և մետաղական հումքի վրա: Ալկոհոլային խմիչքները արտահանվող ապրանքների երկրորդ ամենամեծ խումբն է և ամենամեծ հինգ ապրանքախմբերից՝ միակ ոչ հումքայինը:

Աղյուսակ 2. Ամենաշատ արտահանվող հինգ ապրանքները (Հայաստան, ընդհանուրի %, 2013 թ.)

Հայաստանից ամենաշատ արտահանվող հինգ ապրանքները (%)	2013
Պղնձի հանքաքար	13 %
Ալկոհոլ	10 %
Ոսկի	9 %
Ֆեռոհամահալվածք	7 %
Պղնձի հումք	6 %

Աղբյուրը. FAOSTAT (2014թ.), FAOSTAT տվյալների շտեմարան՝ http://faostat3.fao.org/faostat-gateway/go/to/home/E (մուտքը 2014 թ. հուլիսի 29-ին)

Գծանպատկեր 3-ից երևում է, որ արտահանման ծավալների վերականգնումը առաջին հինգ ապրանքային խմբերում անհամաչափ է: Թանկարժեք քարերը և մետաղները, ոչ թանկարժեք մետաղները և հանքային ապրանքներն ունեցել են թույլ տեմպերով վերականգնում մինչև 2011 թվականը: Մինչև 2011 թվականը տեքստիլ արդյունաբերությունը չէր սկսել վերականգնվել: Ագրոբիզնեսի ոլորտի ապրանքների խումբը միակն է, որ դրսևորել է կայուն և անընդհատ աճ:

Ծապատկեր 3. Հինգ հիմնական ապրանքային խմբերի արտահանման էվոլյուցիան (մլն. ԱՄՆ դոլար)



Աղբյուրը. ԶՀԳ (2014ա), ‹‹Հայաստանի հիմնական արտահանվող ապրանքատեսակները››, 2008-2013թ., ԶՀԳ վեբ կայք՝ http://www.ada.am/eng/for-exporters/export-statistics/macroeconomic-indicators/ (մուտքը 2014 թ. հուլիսի 29-ին)

Ագրոբիզնեսը կարևոր և առաջընթացի հնարավորություն ունեցող ոլորտ է

Գյուղատնտեսությունը Հայաստանի տնտեսության խոշոր և աճող ճյուղ է

Ներկայումս ագրոբիզնեսը Հայաստանի ամենախոշոր ոլորտներից մեկն է ինչպես զբաղվածության, այնպես էլ ՀՆԱ-ի կազմում տեսակարար կշռի առումով. 2012 թվականին ոլորտն ապահովել է ՀՆԱ-ի մոտ 20%-ը: Գծապատկեր 4-ում բերված է գյուղատնտեսական արտադրանքի վերջին 30 տարիների աճը բացարձակ թվերով, իսկ Գծապատկեր 5-ում՝ արտադրողականության մակարդակները: Դրանք վկայում են, որ արտադրողականությունը սկսել է բարելավվել հողի սեփականաշնորհումը սկսելուց հետո. արտադրության ծավալները սկսել են աճել 2000-ականների սկզբից: Արտադրական փոքր ծավալները 1990-ականներին պայմանավորված է եղել մշակվող հողատարածքների փոքր տարածությամբ:

1990-ականներին հողի սեփականաշնորհման արդյունքում գյուղացիական տնտեսությունները ներկայումս ունեն միջինում 1.4 հեկտար հող, որից 1.1 հեկտարը վարելահող է: Կատարվել են հողերի խոշորացման փորձեր, և կոոպերատիվ կառույցների խրախուսման հզոր շարժում է նկատվում ինչպես միջազգային կազմակերպությունների կողմից, ինչպիսին է ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալությունը (ԱՄՆ ՄԶԳ), այնպես էլ միջազգային հովանավորությամբ գործող տեղական կազմակերպությունների կողմից, ինչպիսին է Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնը (ICARE):

Հաշվի առնելով տեղական շուկայի փոքր չափը՝ արտադրողականությունը և արտադրանքի ծավալները կշարունակեն աճել միայն եթե քաղաքականությունները նպատակաուղղվեն արտահանման խթանմանը, որի դեպքում պահանջվող մեծ քանակները կնպաստեն խոշորացմանը՝ միաժամանակ բարելավելով գյուղացիներին առաջադրվող որակի ստանդարտները և տեխնիկական գիտելիքները:

Գծապատկեր 4. Համախառն գյուղատնտեսական արտադրանքի ինդեքս (1992=100)



Աղբյուրը. ԱՄՆ գյուղդեպարտամենտ (2014թ.), Տնտեսական հետազոտությունների կենտրոն, www.ers.usda.gov (մուտքը 2014 թ. սեպտեմբերի 23-ին)

Գծապատկեր 5. Գյուղատնտեսական ընդհանուր արտադրական գործոնների ինդեքսը (1992=100)

Աղբյուրը. ԱՄՆ գյուղատնտեսության դեպարտամենտ (2014թ.), Տնտեսական հետազոտությունների կենտրոն, www.ers.usda.gov, (մուտքը 2014 թ. սեպտեմբերի 23-ին)։

Ոլորտի ներկայիս մրցակցային առավելությունը պայմանավորում են աշխարհագրությունը և կլիման

Հայաստանի համեմատական առավելությունը վկայում է, որ ամենամեծ պոտենցիալն ունեն մրգերը և բանջարեղենը, բարձրորակ և օրգանական ապրանքները, ինչպես նաև վերամշակված ապրանքները: Հայաստանը հարուստ չէ հողով, և վարելահողը կազմում է ամբողջ հողային տարածքի ընդամենը 15.2%-ը (Ավետիսյան, 2010թ.): Այն հարմար չէ հացահատիկի մշակման համար, սակայն առատ արևի լույսը և ընդհանուր առմամբ չոր կլիման՝ լեռնային շրջանների հալչող ձյունից առաջացած ջրի հետ միասին, այն բարենպաստ է դարձնում մրգերի և բանջարեղենի արտադրության համար:

Խորհրդային ժամանակներում Հայաստանը համարվում էր Խորհրդային Միության մրգերի զամբյուղ: Միրգը և բանջարեղենը թարմ և վերամշակված վիճակում արտադրվում էին ավելի մեծ քանակությամբ, քան այսօր: Հին ենթակառուցվածքներից շատերը դեռ կան, սակայն չեն օգտագործվում: Դրանք վերականգնելու համար զգալի ներդրումներ կպահանջվեն:

Ջանքեր են գործադրվում երկրի մրցակցային առավելությունների ամրապնդման ուղղությամբ: Փոքրամասշտաբ արևի չորացուցիչների և ջերմոցների քանակն աճում է (ինչը հաստատում են ՏՀՁԿ-ի դաշտային հետազոտության արդյունքները և տեղի արտադրողների հետ անցկացված հարցազրույցները): Արտադրող և վերամշակող ընկերությունները հասկանում են, որ Հայաստանում շահութաբեր գյուղատնտեսական ոլորտ ունենալու համար կարևոր է ուշադրության կենտրոնում պահել բարձրակարգ, ավելացված արժեք ունեցող ապրանքները, որոնք կարող են արտահանվել ավելի մեծ արտաքին շուկաներ:

Ագրոբիզնեսը և, հատկապես, արտահանման նպատակով վերամշակումը ՀՀ կառավարության գերակա ուղղություններից են

ՀՀ կառավարությունը 2011 թվականին հրապարակել է *Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունը*, որով առանձնացվում են բարելավման հինգ հիմնական ոլորտներ (Զարգացման հայկական

գործակալություն, 2014թ.)։ Յուրաքանչյուր ոլորտի համար ծրագիրը ենթադրում է զարգացման ռազմավարություն, որի շրջանակներում կուսումնասիրվեն և կիրագործվեն արտադրողականության և արտահանման հնարավորությունները խթանող նախաձեռնությունները։

Ագրոբիզնեսը հանդիսանում է այդ առաջնային ոլորտներից մեկը։ Ագրոբիզնեսի հիմնական նպատակային ոլորտներն են արտահանման դիվերսիֆիկացումը, մրցունակության բարելավումը ավելացված արժեք ունեցող ապրանքների ստեղծման և աշխատանքի արդյունավետության բարելավման միջոցով։

Այս զեկույցը կարևորում է այդ խնդիրները՝ նպատակ ունենալով վերլուծել ագրոբիզնեսի ոլորտի ավելացված արժեք ունեցող հիմնական ապրանքների զարգացման և աճի խոչընդոտները։

Մրգերի և բանջարեղենի արտահանման պոտենցիալը

Վերամշակված մրգերը և բանջարեղենը ունեն արտահանման պոտենցիալ, որը Հայաստանը դեռ լիարժեք չի օգտագործում

Հաշվի առնելով արտահանման հետ կապված տրանսպորտային դժվարությունները՝ Հայաստանը արտահանման խթանման ջանքերը պետք է նպատակաուղղի դեպի բարձրակարգ չփչացող ապրանքներ։ Ագրոբիզնեսի ոլորտի համար սա ենթադրում է հիմնականում վերամշակված արտադրանք։ Վերամշակված ապրանքները և բանջարեղենը երկար են դիմանում, իսկ դրանց արտադրությունը և վաճառքը կախված չէ սեզոնայնությունից։ Սակայն անհրաժեշտ համապատասխան մշակումը, պահեստավորումը և սառեցումն ավելի շատ կապիտալատար են և պահանջում են ավելի մեծ ներդրումներ։

Հայաստանը ունեցել է վերամշակված մրգերը և բանջարեղենը նախկին Խորհրդային Միություն արտահանելու հաջողված պատմություն։ Արտահանման ծավալները կրճատվել են 1990-ականներից ի վեր, սակայն առևտրի նախկին ուղիները դեռևս կան, և հայկական արտադրատեսակները դեռևս հայտնի են Ռուսաստանի և ԱՊՀ շուկաներում։

Հայաստանի ագրոբիզնեսում արդեն իսկ կան ենթաոլորտներ, որտեղ ընկերությունները, այդ թվում՝ ՓՄՁ-ները կարողացել են ճանապարհ հարթել դեպի համաշխարհային շուկաներ: Սա հիմնականում վերաբերում է ալկոհոլային խմիչքների, ինչպես նաև ծխախոտի և սիգարետի ավանդաբար զարգացած արտադրությանը: Ներկայումս այս երկու ենթաոլորտներին բաժին է ընկնում Հայաստանից արտահանվող գյուղատնտեսական ապրանքների մոտ 80%-ը (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Ամենաառաջնային գյուղատնտեսական ապրանքների արտահանումը 2011 թ. (արժեքի մաս)

Ապրանք	Ընդհանուրի տոկոսը
Ալկոհոլային խմիչքներ (վերամշակված խաղող)	71%
Սիգարետ	9%
Խաղող	4%
Ծիրան	3%
Ջուր, սառույց	3%
Վերամշակված միրգ	3%
Բովված սուրճ	3%
Ոչ ալկոհոլային խմիչքներ	2%
Խնձորի քացախ	2%
Ռաֆինացված շաքար	1%

Աղբյուրը. FAOSTAT (2014թ.), FAOSTAT տվյալների շտեմարան՝ http://faostat3.fao.org/faostat-gateway/go/to/home/E (մուտքը 2014 թ. հուլիսի 29-ին)

Վանդակ 1-ում նկարագրվում է Հայաստանի գինու արտադրության փոքր ենթաոլորտի հաջողության պատմությունը՝ Խորհրդային Միության քանդվելուց հետո նրա աստիճանական զարգացման խթանման մասին: Խորհրդային կարգերի քայքայման արդյունքում տեղի ունեցավ շուկաների կորուստ, հին սարքավորումների բաժանման կամ մասնակի սեփականաշնորհման արդյունքում կապիտալի քայքայում, ներդրումային ներհոսքերի բացակայություն և որ ամենակարևորն է՝ տեխնոլոգիաների և նոու-հաուի կորուստ: Գինու ենթաոլորտը սկսեց վերականգնվել՝ հին գործարանների և սարքավորումների վերանորոգման, նոու-հաուի ներմուծման նպատակով օտարերկրյա ներդրումների ներգրավման,

ինչպես նաև նոր մշակված արտադրական միջոցները և ապրանքներն արտահանման շուկաներ հանելու միջոցով:

Վանդակ 1. Հայկական գինի. հաջող տեղավորում գլոբալ արժեքի շղթայում

Հայաստանում գինեգործությունը հինգ տարիների ընթացքում՝ մինչև 2011 թ. աճել է միջինը 14%-ով: Այն գրանցել է դանդաղ վերկանգման միտում անցումային շրջանի կտրուկ անկումից հետո: Արտահանման ծավալները ղեռևս շատ փոքր են բացարձակ թվերով արտահայտված՝ 2011թ. կազմելով ընդամենը 5.2 մլն. դոլար: 2004 – 2011 թ.թ. այն սկսեց արագ աճել՝ սկսելով շատ փոքր բազայից և գրանցելով 35% տարեկան միջին աճ:

Խոշոր արտաքին ներդրումներ. կատարվել են մեծ օտարերկրյա ներդրումներ, հատկապես՝ նոր տեխնոլոգիաների գնման և արտադրական գործընթացի բարելավման մասով: Որոշ օտարերկրյա ներդրողներ Հայաստանում ստեղծել են խաղողի այգիներ՝ արտահանման նպատակով:

Միջանկյալ ապրանքների ներմուծում. Հայաստանի գինի արտադրող ընկերությունները միջազգային շուկաներից հիմնականում գնում են հետևյալ արտադրական միջոցները. 1) որոշ սարքավորումներ և օժանդակ արտադրական միջոցներ (թթխմոր և այլն) եվրոպական արտադրողներից (Ֆրանսիա, Գերմանիա և Բուլղարիա), 2) շշերն արտադրվում են տեղում կամ ներմուծվում Իտալիայից և 3) խցանները ներմուծվում են Պորտուգալիայից:

Կրկին մուտք գործել ռուսական շուկաներ. գինու արտահանողները հաջողությամբ մուտք են գործել ռուսական շուկա (որտեղ գինու սպառումը և ներմուծումն աճել է 2000-ականների սկզբներից), որին մշտապես բաժին է ընկել արտահանվող ծավալների մոտավորապես 70%-ը: Սակայն պարզվել է, որ դժվար է տեսականին ընդլայնել, երբ արտահանման փոքր մասն է գնում ԱՄՆ, ԵՄ երկրներ և Չինաստան:

Աղբյուրը. ԻՎի Քոնսալթինգ (2012թ.), *Հայաստանի գինեգործության ոլորտի գնահատումը. Զարգացման ռազմավարություն և գործողությունների ծրագիր,* ԻՎի Քոնսալթինգ. http://www.ada.am/files/934/documents/Eng-Wine-Sector-Strategy-Action-Plan-16-10-12.pdf

Աղյուսակ 4-ում ներկայացվում է, որ մրգերի և բանջարեղենի ենթաոլորտներն ընձեռում են արտահանման այլ հնարավորություններ: Հայաստանն արտադրում է մրգեր և բանջարեղեն, որոնք, պայմանավորված երկրի հողով և կլիմայական պայմաններով, բարձր տեղադիրքով և քիմիական պարարտանյութերի սահմանափակ օգտագործմամբ, հարուստ են և ունեն յուրահատուկ համ: Ժամանակակից վերամշակման և փաթեթավորման տեխնոլոգիաների շնորհիվ հայկական մրգերի և բանջարեղենի արտադրատեսակները ունեն միջազգային շուկաներ հաջողությամբ մուտք գործելու պոտենցիալ: Աղյուսակ 4-ում պատկերված է առկա չորացված մրգերի լայն բազմազանությունը, ինչպես նաև արտադրության խիստ տարբեր ծավալները: Ներկայումս ծիրանը գերակշռում է շուկայում, սակայն առաջարկի բազմազանությունը պահելը կարևոր է, որպեսզի հնարավոր լինի արձագանքել արտաքին պահանջարկին:

Աղյուսակ 4. Հայաստանում վերամշակվող մրգերը և բանջարեղենը

Վերամշակված մրգերի և բանջարեղենի ենթաոլորտ	**Արտադրանք**
Պահածոյացված միրգ	Ջեմ, ժելե, շշալցված միրգ, մրգի պահածոներ, արագ սառեցման մրգեր
Պահածոյացված բանջարեղեն	Տարաներում և թիթեղամաններում փաթեթավորված բանջարեղեն
Մրգային հյութեր	100%-անոց մաքուր հյութ, նեկտար, և մրգային ըմպելիք
Տոմատի հյութ	Տոմատի հյութ
Չորացրած մրգեր	Հիմնականում ծիրանի և սալորի չիր, ինչպես նաև՝ դեղձի, թզի, խնձորի և այլ չրեր
Չորացրած բանջարեղեն	Չորացված պղպեղ, սմբուկ, կանաչ ոլոռ և այլն.

Աղբյուրը. ՏՀԶԿ և ԻՎի Քոնսալթինգ (2014թ.), Հայաստանի ագրոբիզնեսի ոլորտի վերամշակողների հարցախույզի ամփոփ հաշվետվություն, ՏՀԶԿ և ԻՎի Քոնսալթինգ (հրապարակված չէ):

Սննդամթերքի վերամշակումը հանդիսանում է Հայաստանի կառավարության նախանշած գերակա ոլորտներից մեկը: Այս ոլորտի ուժեղ կողմերն են ինչպես տեղական գյուղատնտեսական ապրանքների բարձր որակը, այնպես էլ որոշ չօգտագործված արտադրական հզորությունները, որակյալ աշխատողների առկայությունը և համեմատաբար էժան աշխատուժը: Փորձագետները գտնում են, որ այն ունի զարգացման մեծ պոտենցիալ՝ մասնավորապես օտարերկրյա

համագործակցության և ներդրումների միջոցով («Ամերիա» ընկերությունների խումբ, 2013թ.):

Ի լրումն արտահանման պոտենցիալի՝ վերամշակված միրգն ու բանջարեղենը հանդիսանում է ագրոբիզնեսի արժեքի շղթայի բարձրարժեք և արտադրողական մաս: Ինչպես երևում է Աղյուսակ 3-ից, դրանք արդեն իսկ ամենից շատ արտահանվող արտադրատեսակների ցանկում են՝ չնայած տեսակարար կշիռների մեծ տարբերությանը: Արտահանվող հիմնական արտադրատեսակները ալկոհոլային խմիչքներն ու ծխախոտն են, սակայն դրանց ներքին արտադրողականության արդյունքներն այնքան էլ տպավորիչ չեն: Գծապատկեր 6-ում համեմատվել է աշխատուժի արտադրողականությունը վերամշակվող միրգ-բանջարեղենի, խմիչքների (ալկոհոլային և ոչ ալկոհոլային) և ծխախոտի մասով: Վերամշակվող միրգ-բանջարեղենի մասով արտադրողականությունը 2004-2011 թվականների ընթացքում գրեթե կրկնապատկվել է: Մյուս կողմից՝ խմիչքների և ծխախոտի մասով արտադրողականությունը շատ ավելի անհաստատուն է եղել և կա՛մ անփոփոխ է մնացել (ծխախոտի պարագայում), կա՛մ լրջորեն տուժել 2008 թվականի ֆինանսական ճգնաժամից (խմիչքների պարագայում):

Ծապատկեր 6. Աշխատանքի արտադրողականությունը վերամշակման ոլորտում.

(թողարկվող արտադրանքը մեկ աշխատողի հաշվով, ԱՄՆ դոլար, հզր.)



Աղբյուրը. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն (2014բ), ‹‹Հայաստանի Հանրապետության տնտեսական և ֆինանսական տվյալներ››, ՀՀ ԱՎԾ վեբ կայք՝ http://docs.armstat.am/nsdp/, մուտքը 2014թ. հուլիսի 29-ին:

Վերամշակված մրգերի ու բանջարեղենի գլոբալ պահանջարկն աճում է

Վերջին տասնամյակի ընթացքում վերամշակված միրգ-բանջարեղենի գլոբալ պահանջարկը գրանցել է դանդաղ, բայց կայուն աճ: Ըստ կանխատեսումների՝ այն է՛լ ավելի արագ կաճի հաջորդ հինգ տարիների ընթացքում՝ առնտրի ծավալների հետ միասին (Գծապատկեր 7):

Հայաստանն արտադրում է վերամշակվող մրգերի ու բանջարեղենի այս տեսակներից շատերը. օրինակ՝ չորացրած և պահածոյացված մրգեր և բանջարեղեն, ինչպես նաև հյութեր և պյուրեներ (Գծապատկեր 8): Դա թույլ է տալիս հայ արտադրողներին ոլորտի գլոբալ աճի մաս կազմել:

Գծապատկեր 7. Մրգերի և բանջարեղենի գլոբալ վերամշակումը (մլն. դոլար)



Աղբյուրը. IBIS World (2013թ.), Պտուղ-բանջարեղենի գլոբալ վերամշակում. շուկայի ուսումնասիրության մասին զեկույց, IBIS World, վեբ կայք՝ www.ibisworld.com/industry/global/global-fruit-vegetables-processing.html

Գծապատկեր 8. Ապրանքները և ծառայությունները վերամշակված մրգերի և բանջարեղենի գլոբալ շուկայում, 2013թ.

(ընդհանուր եկամուտների տեսակարար կշիռը 2013 թ. հավասար է 180 մլրդ. դոլարի)



Աղբյուրը. IBIS World (2013թ.), *Պտուղ-բանջարեղենի գլոբալ վերամշակում. շուկայի ուսումնասիրության մասին զեկույց,* IBIS World, վեբ կայք՝ www.ibisworld.com/industry/global/global-fruit-vegetables-processing.html

Համաշխարհային մասշտաբով շահույթի բարձր մարժաները այս ոլորտը գրավիչ են դարձնում

Կայուն աճող համաշխարհային պահանջարկից օգտվելու համար Հայաստանի ագրոբիզնեսի ոլորտի ընկերությունները և մասնավորապես՝ ՓՄՁ-ները պետք է մասնագիտանան ոչ միայն ապրանքների տեսականու, այլև սպասարկման տարբեր ոլորտներում: Արժեքի շղթաներում միջազգային առևտրի զարգացումը պայմանավորում է միջանկյալ ապրանքների և ծառայությունների վրա կենտրոնանալու անհրաժեշտությունը, և այստեղ տեղական ընկերությունները կարող են արժեք ավելացնել: Հայաստանի ՓՄՁ-ները պետք է լիարժեք օգտվեն ավելի էժան արտադրական միջոցներ ներմուծելու և իրենց հարաբերական առավելությունը համաշխարհային արժեքի շղթայի երկայնքով օգտագործելու կարողությունից:

Գծապատկեր 9-ում ներկայացված է վերամշակված բարձրակարգ սննդամթերքի արժեքի շղթան և շահույթի մարժան, ինչպես նաև համաշխարհային շուկայի չափը՝ ըստ ենթաոլորտների: Արտադրական միջոցների մատակարարների մոտ շահույթի մարժան ամենաբարձրն է, սակայն գումարային առումով նրանք գործում են միջին չափի շուկայում: Այս ենթահատվածում հարաբերական առավելություն ունեցող շուկայի խաղացողներն արտադրում են չափազանց մեծ մասշտաբով և կարողանում են թելադրել համաշխարհային գները: Նույն կերպ, հատուկ բաղադրամասեր վերամշակող ընկերություններն ունեն բարձր մարժաներ և փոքր շուկա, քանի որ կան մասնագիտացված քիմիական ընկերություններ, որոնք ունեն արտոնագրեր, որոնցով պաշտպանում են իրենց մարժաները: Մանրածախ վաճառքով զբաղվող ընկերություններն ունեն բավականին փոքր մարժաներ, սակայն գործում են ամենամեծ շուկայում, քանի որ հաջողության հասնելու համար նրանց մասշտաբայնություն է պետք:

Հայաստանի վերամշակող ՓՄՁ-ները գործում են երկու ենթաոլորտներում. չփաթեթավորված բաղադրամասեր և փաթեթավորված սննդամթերք ու ըմպելիք: Չփաթեթավորված բաղարամասերն ապահովում են փոքր մարժաներ, և համաշխարհային շուկան նույնպես փոքր է և գնահատվում է 50 մլրդ դոլարի չափով (ինչը Հայաստանի չափորոշիչներով բավականին մեծ շուկա է):

Փաթեթավորված սննդամթերքը և ըմպելիքները, որոնք ապահովում են շահույթի բարձր մարժա և երկրորդ ամենամեծ համաշխարհային շուկան, ընձեռում են շահութաբեր հնարավորություն: Գլոբալ հարթությունում փաթեթավորած սննդամթերքի և ըմպելիքների ենթաոլորտը ներկայացված է գլխավորապես ալկոհոլային խմիչքներով, մինչդեռ ենթաոլորտի մյուս մասը ներկայացնում են այնպիսի ապրանքները, ինչպիսիք են հյութերը, խյուսերը, կոմպոտները և ջեմերը՝ ի թիվս Հայաստանում սովորաբար արտադրվող ապրանքների:

Գլոբալ արժեքի շղթան կարևոր հնարավորություն է վերամշակմամբ զբաղվող հայրենական ՓՄՁ-ների համար, որը կապահովի մեծ մասշտաբայնություն և աճող պահանջարկ, ինչպես նաև շահույթի մարժա, ինչը խրախուսում է մուտքը շուկա: Այն նաև հանդիսանում է մրցակցային միջավայր, որը դժվարացնում է մուտքը այդ շուկա: Սակայն երկարաժամկետ հեռանկարում այն Հայաստանի ագրոբիզնեսի ոլորտի վերամշակող ընկերությունների համար արտադրողականության կայուն բարելավում ապահովող միակ տարբերակն է:

Գծապատկեր 9. Վերամշակված սննդամթերքի գլոբալ արժեքի շղթան. շահութաբերությունն՝ ըստ սեգմենտների



Աղբյուրը. Դյուպոն, (2013թ.), Գոլդման Զախսի 17-րդ ամենամյա ագրոբիզնեսի կոնֆերանսին ներկայացված շնորհանդես, Նյու Յորք, 26-ը փետրվարի 2013թ.,

http://phx.corporate-ir.net/External.File?t=1&item=VHlwZT0yfFBhcmVudElEPTQ5MDA5MDh8Q2hpbGRJRD00OTU1OTM=

Հայաստանում վերամշակվող մրգերի և բանջարեղենի արտադրությունը համեմատաբար փոքրածավալ է և կենտրոնացված, սակայն արտահանվող սննդամթերքի կազմում մեծ մասնաբաժին ունի

Չնայած տեղական արտադրության վերամշակված սննդամթերքի որոշ մասը իրացվում է տեղական մակարդակում՝ շուկաներում և սուպերմարկետներում, սակայն վերամշակվող սննդամթերքի մեծ մասն արտադրվում է արտահանման նպատակով (Գծապատկեր 10): Եթե հաշվի չառնենք ալկոհոլային խմիչքները, ապա վերամշակված մրգերին ու բանջարեղենին բաժին է ընկնում ողջ սննդի արդյունաբերության ընդամենը 5%-ը, սակայն վերամշակված մրգերը և բանջարեղենը գերիշխում են պարենային մթերքի արտահանման ոլորտում՝ 2013 թ. կազմելով արտահանման 70%-ը (Գծապատկեր 11): Սա ցույց է տալիս այս ենթաոլորտի հարաբերական առավելությունը և առաջարկում ավելի շատ ջանքերի գործադրում վերամշակված մրգերի և բանջարեղենի արտադրությունն ավելացնելու նպատակով:

Ուղղակի վաճառքի մասով արտահանման հիմնական օտարերկրյա շուկաներն են Ռուսաստանը, Ուկրաինան և Միացյալ Նահանգները, ինչպես նաև Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) և Արևելյան Եվրոպայի երկրները: Արտահանումն ավելի թանկ է տեղական վերամշակող ընկերությունների համար, քանի որ նրանք պարտավոր են բավարարել այնպիսի առավել խիստ պահանջներ և ստանդարտներ, ինչպիսիք են՝ սննդամթերքի անվտանգության մասով օրգանական լինելը հաստատող հավաստագրումը և վտանգի աղբյուրի վերլուծությունը և կրիտիկական կետերի հսկումը (ՎԱՎԿՀ), և Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ՍՄԿ) ստանդարտները. բացի այդ, այն պահանջում է նաև արդիական լոգիստիկա և նախապատրաստման նոու-հաու:

Այս ենթաոլորտում միայն քիչ թվով ընկերություններ են ունակ հասնելու օտարերկրյա շուկաներ: Հետևյալ ամենամեծ խաղացողներին միասին բաժին է ընկնում վերամշակվող մրգերի և բանջարեղենի ընդհանուր տեղական արտադրության, ներառյալ՝ հյութերի արտադրության մոտ 90%-ը. այդ ընկերություններն են Արտաշատի պահածոների գործարանը, Եվրոթերմը, Արարատի սննդի կոմբինատը, Նիկոլա Ինթերնեյշնալ Արմենիան և ՍԻՍ Նատուրալը, որոնց միասին

վերցրած բաժին է ընկնում տեղական վերամշակման մրգերի և բանջարեղենի, այդ թվում՝ հյութերի ընդհանուր արտադրանքի մոտ 90%-ը (Ամերիա Բանկ, 2013թ.)։

Գծապատկեր 10. Տեղական արտադրության վերամշակված մրգերի և բանջարեղենի արտահանումը և ներքին սպառումը

(մլն. ԱՄՆ դոլար)



Աղբյուրը. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն (2014բ), ‹‹Հայաստանի Հանրապետության տնտեսական և ֆինանսական տվյալներ››, ԱՎԾ վեբ կայք՝ http://docs.armstat.am/nsdp/, (մուտքը 2014 թ. հուլիսի 29-ին)։

Գծապատկեր 11. Վերամշակված մրգերը և բանջարեղենը՝ արտադրվող և արտահանվող սննդամթերքի կազմում

(արժեքի առումով՝ համապատասխանաբար ընդհանուր վաճառքի և արտահանման տոկոս)



Աղբյուրը. ՏՀԶԿ և ԻՎի Քոնսալթինգ (2014թ.), Հայաստանի ագրոբիզնեսի ոլորտի վերամշակողների հարցախույզի ամփոփ հաշվետվություն, ՏՀԶԿ և ԻՎի Քոնսալթինգ (հրապարակված չէ)։

Ագրոբիզնեսի ոլորտում Հայաստանից արտահանվող արտադրանքի ծավալների ընդլայնման մարտահրավերները

Հայաստանի ագրոբիզնեսի մարտահրավերներից մի քանիսն արդեն քննարկվել են վերը: Երկիրն անցել է բավականին մեծ ցնցման միջով Խորհրդային Միության անկումից հետո՝ կապիտալի քայքայման (հին սարքավորումները դուրս էին գալիս կիրառությունից), հատվածավորման (մեծ կոլեկտիվ տնտեսություններից անցում փոքր մասնավոր հողակտորներով տնտեսությունների) և շուկաներ կորցնելու (Խորհրդային Միությունում շուկայի պլանային բաշխումից մինչև այնպիսի շուկայական մեխանիզմներ, որոնց դեպքում գները և մրցակցությունն են որոշում վաճառքը) առումով: Սույն զեկույցում մասնավորապես անդրադարձ է կատարվում նշվածներից վերջինին, իսկ առաջին երկուսը կքննարկվեն ընդհանուր գծերով՝ առանց առաջարկելու հատուկ մշակված քաղաքականության լուծումներ:

ՏՀԶԿ-ը և խորհրդատվական ԻՎի Քոնսալթինգ հայկական ընկերությունը համատեղ 2014 թվականի մայիսին հարցախույզ են իրականացրել սննդամթերքի վերամշակման ոլորտի գործադիր տնօրենների շրջանում (տե'ս Հավելված 1-ը): Ի թիվս այլ խնդիրների՝ պատասխանողներին խնդրել են խմբավորել, ըստ իրենց, ոլորտում առկա արտահանման խոչընդոտները (Գծապատկեր 12): Նրանք պետք է արտահանողներին սովորաբար հանդիպող հնարավոր տնտեսական խոչընդոտների մեծ թվից՝ յուրաքանչյուր խոչընդոտը գնահատեին 1-ից 6 սանդղակով, որտեղ 1-ը ամենաքիչ կարևորն է, իսկ 6-ը՝ ամենակարևորը: Տոկոսային գնահատումը հիմնվում է գումարային միավորի վրա՝ որպես յուրաքանչյուր կատեգորիայի հնարավոր ընդհանուր միավորի կոտորակ: Վերհանված հիմնական խոչընդոտները կապված են արտահանմանը ներհատուկ միջոցառումների հետ, ինչպիսիք են թիրախային շուկաներ հասնելը, հայկական ապրանքների մարքեթինգն արտասահմանում, կարգավորման խոչընդոտները նվազագույնին հասցնելը և արտահանմանը ֆինանսապես աջակցելը: Միակ խոչընդոտը, որն արտացոլում էր ագրոբիզնեսի ոլորտի ընդհանուր պրոբլեմը, ցածր գնային մրցունակությունն էր, որը բխում է Հայաստանում չվերամշակված մրգի բարձր գնից:

Գծապատկեր 12. Հայաստանի վերամշակված սննդամթերք արտահանողներին հանդիպող խոչընդոտները

(պատասխանների գումարային տոկոսներով դասակարգում)



Աղբյուրը. ՏՀԶԿ-ի և ԻՎի Քոնսալթինգ (2014թ.), Հայաստանի ագրոբիզնեսի ոլորտի վերամշակողների հարցախույզի ամփոփ հաշվետվություն, ՏՀԶԿ և ԻՎի Քոնսալթինգ (հրապարակված չէ):

Մինչ օրս Հայաստանում անհամաչափ և մասնակի ջանքեր են ձեռնարկվել նոր շուկաներին հասնելու ուղղությամբ: Ագրոբիզնեսի ոլորտի շատ փոքր թվով արտահանողներ են հաջողել առանձին բրենդների ստեղծման հարցում, սակայն դրանք ճանաչելի են միայն հայկական ապրանքների ավանդական շուկաներում, այսինքն՝ Ռուսաստանում և ԱՊՀ երկրներում: Քիչ բան է հայտնի այլ պոտենցիալ թիրախային շուկաների մասին, իսկ արտահանման մասով ներկայիս փորձերն արվում են կապերի ոչ ֆորմալ ցանցերի և տեղական էթնիկ խանութների միջոցով: Ավելին, արտահանողները չեն կարողանում մուտք գործել մեծամասշտաբ դիստրիբյուտորների՝ սուպերմարկետների շղթաներ: Արտահանմանն օժանդակող ենթակառուցվածքները, օրինակ՝ համապատասխան պահեստների հեշտ հասանելիություն և արագ կարգավորող և մաքսային ընթացակարգեր, նույնպես լիարժեք չեն գործում: Սա ագրոբիզնեսի ոլորտի արտահանողների և հատկապես՝ ավելի շուտ փչացող ապրանքներ արտահանողների պարտավորությունն է: Եվ վերջապես, արտահանման վարկ կամ նման ֆինանսական պրոդուկտ ձեռք բերելու հնարավորությունները շատ սահմանափակ են:

1) Արտահանման մասով սահմանափակ գիտելիքներ և խթանման ջանքեր

Արտահանմանն ուղղված աճը պետք է ուղղորդվի պահանջարկով, այլ ոչ առաջարկով. Հայաստանի ագրոբիզնեսի ոլորտի արտադրողները և արտահանողները պետք է վերանպատակաուղղեն իրենց արտադրությունը՝ արտացոլելով արտաքին պահանջարկը, այլ ոչ՝ փորձեն բավարարել միայն Հայաստանի առկա սահմանափակ առաջարկը: Նրանք շուկայի մասին հանգամանալից տեղեկատվության հավաքման և արտահանման գործընթացի կանխատեսման կարիք ունեն: Արտադրության և վերամշակման աշխատանքները պետք է արձագանքեն օտարերկրյա պահանջարկի աճին և լինեն բավականին ճկուն, որպեսզի կարողանան մեկ արտադրանքից անցնել մյուսին: Ոլորտի չօգտագործված ենթակառուցվածքային հզորությունների մեծ մասը թերևս պետք է փոխարինվի ժամանակակից վերամշակման սարքերով՝ համապատասխանեցվելով երկրի հարաբերական առավելություններին:

Այս գործընթացին սատարելու համար պետք է կատարվեն քաղաքականության մասով վճռորոշ քայլեր: Ներկայումս արտահանման խթանման քաղաքականության մեջ կան բազմաթիվ բացեր: Առկա են հետևյալ մարտահրավերները.

Տնտեսվարող սուբյեկտների շրջանում առկա է պոտենցիալ օտարերկրյա շուկաների վերաբերյալ գիտելիքի պակաս. հաճախ ագրոբիզնեսով զբաղվող հայկական ընկերությունները քիչ գիտելիքներ ունեն արտաքին շուկաների հզորությունների մասին ավելի շատ արտահանում կլանելու առումով, ինչպես նաև այն մասին, թե որ ապրանքների պահանջարկն է աճում և թե ինչպես կարելի է օգտագործել դրանց կարողությունները:

Թիրախային շուկաները շատ քիչ բան գիտեն Հայաստանի պարենային ապրանքների և ընդհանրապես Հայաստանի մասին՝ պայմանավորված արտահանման խթանման սահմանափակ ջանքերով, չնայած այն բանին, որ Զարգացման հայկական գործակալությունը ձեռնարկել է որոշակի մարքեթինգային ջանքեր: Հաջողված արտահանող երկրներն ունեն հեռուն գնացող և ներթափանցող շուկայական նախաձեռնություններ, որոնք կենտրոնացված են բրենդի վրա: Նպատակն է կրթել օտարերկրյա սպառողներին երկրի ապրանքների, ինչպես նաև՝

տվյալ արտադրանքին բնորոշ բրենդների մասով՝ ապահովելով իրենց պարենային ապրանքների որակի, համի և անվտանգության մասին տվյալներ պարունակող այդ ուղերձի փոխանցումը:

Հնարավոր արտահանողները, և մասնավորապես ՓՄՁ-ները չունեն հմտություններ: ՓՄՁ-ներին պետք է տեղեկացնել թիրախային շուկաներ մուտք գործելու համար անհրաժեշտ պահանջների, ինչպես նաև արտահանման սկզբնական փուլերում առկա ռիսկերի մասին:

2) Արտահանման ոչ բավարար ենթակառուցվածք

Քաղաքականության պատասխանատուները կարող են ուղղակիորեն բարելավել տեղական արտահանող ընկերությունների մրցունակությունը՝ արտահանման ծախսը նվազեցնելու միջոցով: Դրան կարելի է հասնել արտահանմանն առնչվող ենթակառուցվածքը բարելավելու միջոցով:

Հայաստանի կարգավորող միջավայրի սահմանափակումները նշանակում են, որ ըստ հաղորդված տեղեկությունների՝ տեղի արտադրողներից միջինը 16 օր է պահանջվում ապրանքը մինչև Հայաստանից դուրս գտնվող արտահանման շուկա փոխադրելու համար (Համաշխարհային Բանկ, 2013թ.): Համաշխարհային բանկի *Գործարարությամբ զբաղվելու (Doing Business) վերաբերյալ զեկույցում* Հայաստանի արտահանման լոգիստիկան՝ պահեստավորումը, սորտավորման հարմարանքները և մաքսային անցակետերը, միջին է գնահատվել:

Բացի այդ, տնտեսվարող սուբյեկտների համար դեռևս շատ մեծ է կարգավորման բեռը՝ չնայած պետական իշխանությունների և միջազգային դոնոր կազմակերպությունների (Ներդրումային միջավայրի խորհրդատվական ծառայություններ, 2011թ.) ընթացիկ նախաձեռնություններին: Սահմանային առևտուրը, հարկերը և ստուգումները շարունակում են մնալ որպես ծանր բեռ: Առևտրի խոչընդոտները, ինչպիսիք են անարդյունավետ մաքսային և տեխնիկական հսկման ընթացակարգերը, խոչընդոտում են բիզնեսին և արտահանման աճին: Ռիսկի վրա հիմնված ստուգումները լայն կիրառություն չունեն ներմուծման և արտահանման մասով, և բեռները հիմնականում ենթարկվում են ֆիզիկական ստուգման:

Միջին չափի բիզնեսները տարեկան 636 ժամ են ծախսում՝ փորձելով կատարել հարկային օրենսդրության պահանջները: Բիզնեսների ստուգումները բարդացվում են բազմաթիվ կարգավորող մարմինների՝ 18 պաշտոնական ստուգող գործակալությունների, մեծ թվով լիցենզավորող կամ թույլտվություն տվող գործակալությունների և ստուգման լիազորություն ունեցող՝ սակայն հաճախ անորոշ և կրկնվող մանդատներով տեղական մարմինների առկայությամբ (Համաշխարհային Բանկ, 2013թ.): Չափազանց շատ պահանջները և սննդի անվտանգության հսկման ժամանակավրեպ համակարգերը խոչընդոտում են Հայաստանի ագրոբիզնեսի ոլորտի տնտեսվարողների զարգացմանը և հատկապես խնդրահարույց են ագրոբիզնեսի ոլորտի ՓՄՁ-ների համար: Գծապատկեր13-ում ներկայացվում է Հայաստանի և նմանատիպ մի քանի երկրների համեմատականը՝ Համաշխարհային բանկի *Գործարարությամբ զբաղվելու (Doing Business) վերաբերյալ զեկույցի* ցուցանիշների միջոցով: Սա հիմնավորում է կարգավորման և մաքսային բեռի ռացիոնալացման անհրաժեշտությունը:

Բացի այդ, սննդի անվտանգությունը կարգավորող օրենսդրությունը և ստուգման ընթացակարգերը պետք է համապատասխանեցնել միջազգային պատշաճ գործելակերպին: Վարչարարական ընթացակարգերը պետք է բարելավվեն, և ներմուծման ու արտահանման գործարքների համար ծախսվող ժամանակը պետք է կրճատվի: Ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված Համաշխարհային բանկի ծրագիրն արդեն իսկ աշխատում է սննդի անվտանգության ռիսկային հենքով (և առավել արդյունավետ) ստուգումների մեթոդների իրականացման գործնական ուղեցույց առաջարկելու ուղղությամբ: Այդ ուղեցույցն արդեն հրապարակվել է չորացված մրգերի և բանջարեղենի մասով՝ ապահովելու համապատասխանությունը միջազգային սանիտարահիգիենիկ պահանջներին: Այն նաև դիտարկում է մաքսային գնահատման առավել արդյունավետ մեթոդների և ընթացակարգերի, արտահանման ընթացակարգերի փոխգործուն քարտեզագրման և հավաստագրման ընթացակարգերի մասով առաջարկությունների տրամադրումը՝ արտահանման համար պահանջվող ժամանակը նվազեցնելու նպատակով: Այս աշխատանքը համահունչ է սույն զեկույցի Գլուխ 3-ում ներկայացված առաջարկություններին:

Գծանկար 13. Հայաստանի արտահանման ենթակառուցվածքի գնահատական



Աղբյուրը. Համաշխարհային բանկ (2013թ.), Գործարարությամբ զբաղվելը 2014թ.: Փոքր և միջին ձեռնարկությունների կարգավորումները հասկանալը, Համաշխարհային Բանկի խումբ, Վաշինգտոն ԴիՍի:

ՏՀԶԿ-ի և ԻՎի Քոնսալթինգի հարցմանը (տե'ս Հավելված 1-ը) մասնակցած Հայաստանի սննդամթերք վերամշակող ընկերությունների գործադիր պաշտոնյաների մոտավորապես մեկ երրորդը լիովին համաձայն է այն բանի հետ, որ հավաստագրումը և որակի դասակարգումը դառնում են խնդիր, երբ դրանք վերաբերում են արտասահմանում հայկական ապրանքների իրացմանը (Գծապատկեր 14): Այլ կարևոր խնդիրներից են տեղական հավաստագրման և միջազգային ստանդարտների անհամատեղելիությունը, հավաստագրերի

ձեռքբերման ծախսերը և Հայաստանում միջազգայնորեն ճանաչված հավաստագրման մարմինների բացակայությունը:

Գծապատկեր 14. Հավաստագրումը որպես արտահանման խոչընդոտ

(գնահատվել է որպես յուրաքանչյուր գործոնի կարևորության գումարային մասնաբաժին)

Աղբյուրը. ՏՀԶԿ և ԻՎի Քոնսալթինգ (2014թ.). Հայաստանի ագրոբիզնեսի ոլորտի վերամշակողների հարցախույզի ամփոփ հաշվետվություն (չի հրապարակվել)

Այսպիսով՝ հայկական ագրոբիզնեսի արտահանման փորձի բարելավման ճանապարհին կան երկու հիմնական մարտահրավերներ.

- **Կարևոր օրեր են վատնվում ճիշտ դասակարգման և արտահանման հավաստագրերի ձեռք բերման վրա, ինչն արտահանողների համար բերում է լրացուցիչ ծախսերի:** Ի տարբերություն իր մրցակիցների՝ Թուրքիայի և Վրաստանի, ապրանքները թիրախային շուկա հասցնելու համար հայ արտահանողներից զգալիորեն ավելի երկար ժամանակ է պահանջվում:

- **Բացակայում է կենտրոնացված պահեստավորման, դասակարգման և մաքսային ենթակառուցվածքը:** Օտարերկրյա շուկաները պահանջում են կանոնավոր կերպով

մատակարարում՝ մեծ քանակներով: Նման մասշտաբայնության հասնելու համար վերամշակողները պետք է հումք գնեն մեծ թվով գյուղացիներից, ինչը վերամշակող ընկերության համար առաջացնում է գործարքների բարձր ծախս: Հումքը մեծ թվով անկախ փոքր արտադրողներից դեպի վերամշակող գործարան և հետո օտարերկրյա շուկա հասցնելը ծախսատար է: Որոշ արտահանող-վերամշակող ընկերություններ անցել են ուղղահայաց ինտեգրման՝ ներառելով իրենց լոգիստիկայի և առաքման կարողությունները սեփական ընկերության ներսում: Դասակարգման և մաքսային գրասենյակով համալրված կենտրոնական պահեստային կառույցի առկայության դեպքում հիմնական արտադրող և վերամշակող ընկերությունները կունենային մի այնպիսի վայր, որտեղ նրանք կկարողանային բերել, կենտրոնացնել և վաճառել իրենց ապրանքները: Օտարերկրյա գնորդների համար նույնպես կլիներ մի կենտրոնացված վայր, որտեղ նրանք կկարողանային փնտրել հայկական ապրանքներ:

3) Արտահանման ֆինանսավորումը ձևավորման փուլում է

ՀՀ կառավարությունը միայն վերջերս է սկսել մշակել արտահանման ֆինանսավորման քաղաքականության մեխանիզմներ արտահանմանն աջակցելու համար: Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալությունը վերջերս է ստեղծվել (պաշտոնական որոշումը ՀՀ կառավարությունն ընդունել է 2013 թվականի հոկտեմբերին, և գործակալությունը ֆիզիկապես տեղակայվել է 2014 թվականի հունվարին՝ այս ծրագրի իրականացման ժամանակահատվածում), այն ունի մոտ 5 միլիոն ԱՄՆ դոլար կապիտալ և պետական հատվածի հինգ բաժնետեր (ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն և ՀՀ արտաքին գործերի նախարարություն):[1] Առայսօր այն չի սկսել իր գործունեությունը: Մարմնի պաշտոնական գործառույթն է հայրենական արտահանման ծավալների ընդլայնումը և արտահանման ուղղությունների դիվերսիֆիկացումը՝ պայմանագրերի կնքումից հետո ապահովագրություն տրամադրելով բոլոր ոլորտներում կատարվող արտահանման գործարքների մասով, բոլոր

տեսակի և մեծության ընկերություններին, բայց մինչև ապրանքները փոխանակելը: Այն իրավասու չէ առաջարկել այնպիսի պրոդուկտներ, ինչպիսին են արտահանման վարկերի երաշխիքները, մինչ արտահանման փուլում շրջանառու միջոցների կամ ֆակտորինգի տրամադրումը:

Արտահանող ընկերությունները ֆինանսական առումով ավելի մեծ ճնշման են ենթարկվում, քան մյուս տնտեսվարողները, քանի որ արտահանման պայմանագրի վճարման ժամանակացույցն ավելի երկար է: Ագրոբիզնեսով զբաղվող ընկերությունների համար արդեն իսկ գործում է սեզոնային վճարումների ժամանակացույց, երբ նրանք ներդրումները կատարում են տարվա սկզբին, բայց վճարումները ստանում միայն բերքահավաքից հետո: Նրանց գործունեության հետ կապված ռիսկերը հավասարապես բաշխվում են ամբողջ արտադրական գործընթացով: Ե՛վ ՓՄՁ-ները, և՛ ավելի մեծ ընկերությունները բախվում են դժվարությունների, երբ վարկային կազմակերպություններին փորձում են համոզել ճիշտ ժամանակին տրամադրել իրենց վարկերը, սակայն ՓՄՁ-ների համար, որպես կանոն, ֆինանսական միջոցների հասանելիությունը ավելի դժվար է: Համաձայն *ՏՀԶԿ-ի «ՓՄՁ-ների համար ֆինանսական միջոցների հասանելիության գնահատման սանդղակ, 2014թ.» հաշվետվության*՝ բոլոր 31 երկրներում ֆինանսական միջոցների հասանելիությունը ոչ միայն ավելի դժվար է եղել ՓՄՁ-ների համար, այլև այն է՛լ ավելի է դժվարանում բանկային իրացվելիության ցանկացած ձախողման ընթացքում՝ ըստ 13 հիմնական ցուցանիշներով գնահատման (ՏՀԶԿ, 2014բ):

Երբ արտահանող սուբյեկտը չի կարողանում վարկ վերցնել պոտենցիալ եկամտաբեր արտահանման գործարքները ֆինանսավորելու համար, ապա դա շուկայի ձախողում է: Նման դեպքերում պետական հատվածի կողմից աջակցության տրամադրման միջամտությունը երաշխավորված է: Հայաստանում այս բացերին կարելի է լուծում տալ երկու եղանակով.

- **Հարկ է, որ Հայաստանը հետևողականորեն հետամուտ լինի իր պլանների իրականացմանը՝ տրամադրելու արտահանման ապահովագրություն, մեծացնելու գործակալության կապիտալը և ընդլայնելու առաջարկվող պրոդուկտների ցանկը.** դա կարող է արվել երաշխավորման հիմնադրամի, ապահովագրական

ընկերության կամ ուղղակի վարկավորող հաստատության միջոցով:

- **Ընդլայնել արտահանման ֆինանսական պրոդուկտների առաջարկը.** մասնավոր շուկան տրամադրում է որոշ պրոդուկտներ, որոնք, սակայն, բավարար չեն: Արտահանման նորաստեղծ ապահովագրական գործակալությունը կարող է ընդլայնել արտահանման համար առաջարկվող ֆինանսավորումը՝ համագործակցելով մասնավոր հատվածի հետ և ընդլայնելով ներկայումս սահմանափակ ֆինանսական միջոցների առաջարկը, որպեսզի այն հասանելի լինի ՓՄՁ-ներին և ագրոբիզնեսով զբաղվող ընկերություններին:

Հարակից՝ արտահանմանը չվերաբերող մարտահրավերներ

Հայաստանի ագրոբիզնեսի ոլորտում ***առկա են մի շարք շատ կարևոր մարտահրավերներ, որոնց պետք է լուծում տալ***: Դրանք չեն վերաբերում կոնկրետ արտահանմանը և այդ պատճառով ամենայն խորությամբ ուսումնասիրված չեն այս զեկույցում: Դրանք, այդուամենայնիվ, հիշատակվում են հաջորդող պարբերություններում, քանի որ Հայաստանի քաղաքականության պատասխանատուների բարեփոխումներ օրակարգի մասն են, և այդ հարցերը պետք է հասցեագրվեն արտահանմանն առնչվող մարտահրավերների լուծմանը և այս զեկույցում առաջ քաշված առաջարկությունների իրականացմանը զուգահեռ:

Ագրոբիզնեսի ոլորտի մարտահրավերներից ամենակարևորը գյուղացիական տնտեսությունների փոքր չափն է՝ միջինը 1.4 հա մակերեսով, և դրանց հատվածականությունը: Գյուղատնտեսությամբ զբաղվող ՓՄՁ-ների համար լրացուցիչ խնդիր է ֆինանսական միջոցների հասանելիությունը, ինչպես նաև ապահովագրության բացակայությունը գյուղատնտեսության արժեքի շղթայի արտադրական փուլում: Ոլորտում կան հմտություններին առնչվող հավելյալ խնդիրներ ևս, որոնք վերաբերում են ինչպես տեխնիկական հմտություններին, այնպես էլ՝ կորպորատիվ հմտություններին:

Գծապատկեր 15-ում ներկայացվում է ագրոբիզնեսի ոլորտին հատուկ ընդհանուր խնդիրների դասակարգումը՝ ըստ սննդամթերքի

վերամշակման ոլորտի մասնագետների ընկալման (տե՛ս Հավելված 1-ը): Հումքի բարձր գները, առաջնային ոլորտի ցածր արտադրողականությունը, և ֆինանսական միջոցների ու ապահովագրության հասանելիության խնդիրները շատ կարևոր են: Կարևոր է նաև շուկաների սահմանափակ հասանելիությունը՝ պայմանավորված փոքր տեղական շուկայով և հայկական ապրանքների արտահանման կենտրոնացված շուկայով:

Գծապատկեր 15. Ագրոբիզնեսի ոլորտի ընկերություններին հանդիպող խոչընդոտները



Աղբյուրը. Հայաստանի գյուղմթերք վերամշակողների հարցախույզ (տե՛ս Հավելված 1-ը):

Բոլոր հետխորհրդային անցումային երկրներում գյուղատնտեսությանը բնորոշ է փոքր մասշտաբը և հողակտորների հատվածականությունը: Սա նախկինում պետական սեփականություն հանդիսացող մեծ գյուղացիական տնտեսությունների հողերի սեփականաշնորհման և բաշխման հետևանք է: Սեփականաշնորհման գործընթացը նպաստել է գյուղատնտեսական արտադրանքի ծավալի անկմանը, ինչպես նաև արտադրողականության կրճատմանը: Արտադրական մասշտաբների կրճատմանը զուգահեռ՝ ներդրման մակարդակը կտրուկ անկում է ապրել, և նկատվել է հմտությունների որոշակի կորուստ:

Հայաստանի փորձը շատ նման է մնացած անցումային երկրների փորձին: 1991 թվականից փոքր հողակտորները վերաբաշխվել են մասնավոր սեփականատերերի միջև: Ֆերմերները հիմնականում

ապահովում էին իրենց ապրուստը, քանի որ չունեին միջոցներ առավել արտադրական տեխնոլոգիաներ և կապիտալ ներդնելու համար: Մշակաբույսերի արտադրությունը տեղաշարժ է գրանցել բարձրարժեք միրգ-բանջարեղենից դեպի հիմնական գյուղատնտեսական մշակաբույսեր, ինչպիսիք են հացահատիկային բույսերը և կարտոֆիլը, որոնց մասով Հայաստանը չունի հարաբերական առավելություն:

Հողերի հատվածականության պրոբլեմը դեռևս կա, չնայած ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) համատեղ ծրագրով իրականացվել են հողերի խոշորացմանն ուղղված որոշ ջանքեր: 2006 թվականի մայիսին ՊԳԿ-ը ներկայացրեց հողերի խոշորացման ազգային ռազմավարության նախագիծը: Պետական գերատեսչությանը հանձնարարված էր իրականացնել պիլոտային ծրագիր, սակայն ինչ-ինչ պատճառներով ծրագիրը առաջխաղաղացում չունեցավ, և շարունակում է մնալ կառավարության օրակարգում: Առաջարկի տարբեր շղթաներ վերստեղծելու մյուս ջանքերի արդյունքում ավելացել են արտադրանքի ծավալները և արտադրողականությունը: Օրինակ՝ մեկ տասնամյակում՝ 1998-2008 թվականներին կաթի արտադրությունն աճել է ավելի քան 50%-ով (Հարթվիգսեն, 2013թ.), չնայած կաթի մեծ մասը դեռևս շարունակվում է արտադրվել ընդամենը երկու-երեք կով ունեցող գյուղացիների կողմից:

Հողի սեփականությունը նույնպես տուժում է նույն հիմնախնդիրների պատճառով: Կա մոտավորապես 330 000 գյուղացիական տնտեսություն՝ 1.4 հա հողակտորներով, մոտ 20 000-30 000 գյուղացիական տնտեսություն՝ 3-5 հա տարածքով: Բոլոր գյուղացիական տնտեսություններից ընդամենը 6%-ն է, որ ավելի քան 10 հա տարածքով դասակարգվում է որպես խոշոր տնտեսություն: Մոտավոր հաշվարկներով բոլոր գյուղացիական տնտեսությունների միայն մոտ 30%-ն է, որ արտադրում է միայն շուկայի համար և չունի ապրուստ հոգալու բաղկացուցիչ: Այս իրավիճակը սրվում է Հայաստանում հողերի գրանցման թույլ ընթացակարգերով, քանի որ գյուղացիները չեն կարողանում հեշտությամբ գնել և վաճառել, ու այդպիսով՝ մեծացնել իրենց հողակտորները: Հողի վաճառքների քանակը վկայում է տարեկան կտրվածքով հողակտորների շատ փոքր շրջանառության մասին, որը կազմում է ընդհանուր հողատարածքների մոտավորապես 0.3%-0.8%-ը (Հարթվիգսեն, 2013թ.):

Որպես դրական երևույթ պետք է նշել, որ ի պատասխան շուկայական ուժերի՝ 1995-2010 թվականներին գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի (հացահատիկային բույսեր և կարտոֆիլ) աճեցման նպատակով օգտագործվող հողատարածքների թիվը նվազել է, սակայն ավելացել է մրգերի և բանջարեղենի աճեցման նպատակով օգտագործվող հողատարածքների թիվը: Դա վկայում է, որ ենթարկվելով շուկայական ուժերի ազդեցությանը և մրցակցությանը՝ Հայաստանի գյուղատնտեսությունը փոխում է իր ուղղվածությունը՝ կողմնորոշվելով դեպի այն ապրանքները, որտեղ ունի հարաբերական առավելություն:

ԳԼՈՒԽ 2. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ՈԼՈՐՏԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆԸ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ

Ի պատասխան Գլուխ 1-ում ուրվագծված մարտահրավերների՝ այս գլխում բերված են Չեխիայի Հանրապետության, ԵՄ-ի և Մեքսիկայի օրինակները, որոնք ցույց են տալիս, թե ինչպես կարող է արտահանման խթանման համալիր գործառույթներ ունեցող գործակալությունը օգտակար լինել արտահանողների համար: Այս գործակալություններն ունեն հստակ նպատակներ, տրամադրում են գիտելիք, ինչպես նաև վերապատրաստում, և իրենց մարքեթինգի ջանքերի կենտրոնում դնում են երկրի բրենդը: Ծաղիկների արտահանման հոլանդական կառույցը և պորտալը կենտրոնացված պահեստի և մեկ պատուհանի սկզբունքով գործող կարգավորման մեխանիզմի մի օրինակ է, որն ամրապնդում է Հոլանդիայի արտահանման հաջողությունը ծաղկաբուծության ոլորտում: Էստոնիայում և Իտալիայում պետական հովանավորությամբ գործող՝ արտահանումը վարկավորող հաստատությունները վառ օրինակ են, որ արտահանման վարկավորման հարցում աջակցությունը կարող է արդյունավետ լինել, եթե դա արվում է թափանցիկ, մասնավոր հատվածի հետ գործընկերային հարաբերություններով և ռիսկերի գնահատման համապատասխան մեխանիզմներով:

Սույն գլխում ներկայացված օրինակները հատկապես օգտակար են Հայաստանի քաղաքականություն մշակողների համար: Այս օրինակներն ընտրվել են որպես արտահանման հաջողված փորձ ունեցող երկրների հաջողված քաղաքականություններ:

CzechTrade-ի (Չեխիայի Հանրապետություն) և Bancomext-ի (Մեքսիկա) օրինակները ցույց են տալիս, թե արտահանման խթանման համալիր մոտեցումն ինչպես կարող է հաջողված լինել արտահանման կողմնորոշում ունեցող երկրների համար: Չեխիայի Հանրապետությունը փոքր, ծովային սահմաններ չունեցող և տնտեսական առումով բաց տնտեսություն է, որը, ինչպես և Հայաստանը, անցել է պլանային տնտեսությունից՝ շուկայականի: Արդյունքում՝ Չեխիայի քաղաքականության պատասխանատուները կառույցներ ստեղծեցին, որոնք տեղացի արտադրողներին կուսուցանեին նոր շուկաներ մուտք գործելու օգուտների մասին և նրանց կտային դրան հաջողությամբ հասնելու համար պահանջվող բիզնես հմտություններ: Այդ իսկ պատճառով, ի լրումն խթանման այլ ծառայությունների՝ CzechTrade-ն ունի ուսուցման խիստ արդյունավետ պորտալներ և ծառայություններ:

Bancomext-ը նույնատիպ հովանոցային կազմակերպություն է, որը մեկտեղում է արտահանման խթանման գործողությունների ողջ սպեկտրը: Կազմակերպությունը հատուկ շեշտադրում է արտասահմանում ներկայացուցչություն ունենալու և մեքսիկական արտադրատեսակները այնպիսի շուկաներում խթանելու հարցը, որոնք հակառակ պարագայում նրանց անծանոթ կմնային: Հայաստանի նման՝ մեքսիկական արտահանումը շատ կենտրոնացված է մեկ շուկայում՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում, և աշխատանքներ են տարվում արտահանումը աշխարհագրական առումով դիվերսիֆիկացնելու համար: Կազմակերպության առաջարկած՝ արտահանման խթանման ծառայությունների համակողմանիությունը, արտադրող մասնավոր ընկերությունների հետ սերտ կապերը և արտաքին աուդիտի շեշտադրումը՝ ուղղված պոտենցիալ շուկաներում՝ մեքսիկական արտադրանքների արժեքի մասին իրազեկմանը, Bancomext-ը դարձնում են օրինակ Հայաստանի համար:

Flora-Holland-ը՝ ծաղկի շուկայի ամենախոշոր դերակատարը աշխարհում, օրինակ է այն մասին, թե ինչպես ստեղծել ենթակառուցվածք

և նվազագույնի հասցնել կարգավորման բյուրոկրատական քաշքշուկը արտահանողներին ամենայն արդյունավետությամբ օժանդակելու համար: Նիդերլանդների հատվածական և հաճախ փոքրամասշտաբ ծաղիկ արտադրողների համար այն ապահովում է միասնական շուկա և այս կերպ բավարարում է մասշտաբային արտահանողների պահանջարկը: Հայաստանում հումքի և վերամշակվող ագրոբիզնեսի ոլորտի համար նույնատիպ մեխանիզմի կարիք կա:

Հայաստանի նման՝ Էստոնիան ևս փոքր և բաց տնտեսություն է, որն անցել է դժվար տնտեսական անցումային փուլ: Երկրի տնտեսական լանդշաֆտը բաղկացած է հիմնականում ՓՄՁ-ներից, որոնց համար ընդհանուր առմամբ դժվար է վարկեր ստանալը, սակայն նրանք է՛լ ավելի վատ կացության մեջ են արտահանման գործառնությունների ֆինանսավորման համար վարկեր ստանալու հարցում: Էստոնիայի կառավարությունը հիմնախնդիրը լուծել է արտահանման և վարկավորման երաշխիքային հիմնադրամի՝ KredEx-ի ստեղծման միջոցով, որի գլխավոր գործառույթը ՓՄՁ-ներին օժանդակելն է: Հայաստանի քաղաքականություն մշակողները կարող են ոգեշնչվել այս փորձից՝ հաշվի առնելով երկրի ագրոբիզնեսի ոլորտում վարկավորման ընդհանուր խոչընդոտները և, մասնավորապես, արտահանման համար ֆինանսական միջոցների խիստ սահմանափակ հասանելիությունը:

Արտահանման խթանումն ագրոբիզնեսում. միջազգային պատշաճ գործելակերպ

Բիզնեսի խթանումը և մարքեթինգը սովորաբար կազմում են յուրաքանչյուր առանձին կազմակերպության բիզնես պլանի բաղկացուցիչ մասը: Նման միջոցառումների համար ծախսվում են գործառնական միջոցներ, իսկ դրանց բերած օգուտներն ի հայտ են գալիս միջնաժամկետից՝ երկարաժամկետ հեռանկարում: Բացի այդ, երկրում գործող մյուս ընկերությունները կամ ոլորտները կարող են անվճար օգտվել արտասահմանում որևէ մի ընկերության գովազդից: Այսպիսով պետական հովանավորությամբ գործող կազմակերպություններին տրվում է երկրի արտահանման խթանման և պոտենցիալ թիրախային շուկաների մասով հետազոտությունների կատարման կարևոր դերը՝ տեղական բիզնես համայնքի հետ դրանք համատեղ օգտագործելու նպատակով:

Արդյունավետ արտահանման խթանման գործակալությունն իր մեջ համատեղում է մարքեթինգը, հետազոտությունը և վերապատրաստումը

Արտահանման խթանմանը ցուցաբերվող աջակցությունն անհրաժեշտ է, որպեսզի և՛ արտահանման շուկաները, և՛ արտահանվող ապրանքատեսականին լինի բազմազան: Դա կարող է օգնել ավելացնել արտահանող կազմակերպությունների քանակը և ՓՄՁ-ների մասնաբաժինը: Վանդակ 2-ում նկարագրվում է Չեխիայի կառավարության արտահանման խթանմանն ուղղված ջանքերը, ինչը լավ գործելակերպի օրինակ է, որն ունի հստակ նպատակներ, և որը հաջողություն է գրանցել Հայաստանի տիպի ծովային սահման չունեցող փոքր բաց տնտեսությանն աջակցելու հարցում:

Վանդակ 2. CzechTrade. մոտեցում և գործիքներ

Մոտեցում

Չեխիայի Հանրապետությունն իրենից ներկայացնում է փոքր և բաց տնտեսություն: Իր աշխարհագրական դիրքով այն դեպի ծովային սահման ելք չունեցող երկիր է, սակայն ունի սահմաններ առաջատար տնտեսություններ ունեցող Գերմանիայի և Ավստրիայի, և արագ տնտեսական աճ գրանցող Լեհաստանի հետ: Ունենալով փոքր ներքին շուկա՝ Չեխիայի տնտեսությունն ունի բարձրարժեք ապրանքների արտահանման ուղղվածություն:

Չեխական ընկերությունների արտահանմանն աջակցելու նպատակով ստեղծվել է Չեխիայի կառավարությանն առընթեր CzechTrade արտահանման խթանման գործակալությունը: Նրա մանդատն է գործել Չեխիայի Հանրապետության տարածքում՝ ներքին ընկերություններին հետևյալ ուղղությամբ ուսուցանելու նպատակ հետապնդելով. ինչպես մուտք գործել արտահանման շուկաներ, ինչպես օգտագործել առկա օժանդակ կառույցները և հասանելի դարձնել առկա ռեսուրսները: Ներքին շուկայի շրջանակից դուրս այս գործակալության մանդատն է խթանել Չեխիայի ապրանքների մասին տեղեկատվությունը, և ներկայացնել չեխական ընկերությունները և ապրանքները արտասահմանյան ներկայացուցիչների ցանցի միջոցով: Այն իր առջև դրված առաջադրանքը կատարում է բիզնես խթանման առաքելություններ և տոնավաճառներ խրախուսելու, և արտահանման խթանման միջոցառումներում բիզնեսների և պետական հատվածի համագործակցությանը նպաստելու միջոցով: Վերջապես, CzechTrade-ն ունի միջազգային առևտրային բանակցությունների ընթացքում Չեխիայի Հանրապետության համար առավել բարենպաստ բազմակողմ և երկկողմ առևտրային միջավայրի ապահովման մանդատ:

Գործիքներ

Ներքին օժանդակություն

Բիզնես ծառայությունների աջակցման մեկ պատուհանի սկզբունքով պորտալ, BusinessInfo.cz

Երկրի ներսում՝ CzechTrade-ն առաջարկում է համապարփակ աջակցություն գիտելիքների ապահովման, կրթական ծառայությունների (դասընթացների օնլայն պորտալ և ինքնուսուցում ու դասախոսություններ) առումով և մի քանի նորարարական միջոցառումներ, ինչպիսիք են՝ արտահանողներին օժանդակող մեկ պատուհանի սկզբունքը ԵՄ-ին առնչվող ծառայությունների մասով, և մեկ պատուհանի սկզբունքը չեխ արտահանողների համար: CzechTrade-ը ստեղծել է խորհրդատվական համակարգ բոլոր տիպի բիզնես խնդիրների համար, ներառյալ՝ իրավական գիտելիքները կամ տեխնիկական և կարգավորման մասով աջակցությունը: ***Single Point of Contact-ը*** ՝ ***BusinessInfo.cz*** տիպի գործիքների միջոցով տրամադրում է տեղեկատվություն այն մասին, թե ինչպես սկսել բիզնեսը, ինչպես հաղթահարել բիզնեսի հետ կապված տարբեր խնդիրները, ինչպես սկսել արտահանումը: *SOLVIT Centre-ն* ապահովում է իրավական աջակցություն Չեխիայի կամ օտարերկրյա իշխանությունների գործողությունների դեմ ներկայացված բողոքների կապակցությամբ բիզնես վեճերը լուծելու նպատակով, եթե առկա է ապրանքների, ծառայությունների և մարդկանց ազատ տեղաշարժի սկզբունքների մասով հակասություն: *Contact Point for Products*–ը մեծ ընկերություններին, ՓՄՁ-ներին և մասնավորապես արտահանողներին տրամադրում է տեղեկատվություն եվրոպական կարգավորումներին ենթակա նոր ապրանքներին առաջադրվող տեխնիկական պահանջների վերաբերյալ:

==

Արտաքին օժանդակություն

CzechTrade-ի թիրախային շուկայի տեղեկատվական պորտալ

Չեխիայի արտահանման խթանման ջանքերի արտասահմանյան աջակցության ցանցը հանդիսանում է աջակցության կարևոր գործիք: Օտարերկրյա ներկայացուցիչների գրասենյակները միաձուլվել են օտարերկրյա ներդրումները խրախուսող գործակալության գրասենյակների հետ միջոցներ խնայելու նպատակով: Աջակցության նպատակն է ապահովել, որպեսզի Չեխիայի բիզնեսները կարողանան գտնել տեղեկատվություն և աջակցություն այն հիմքով, որ արտասահմանում բիզնես անելիս նրանք պետք է լինեն հաջողակ: Կատարվում են նաև մեծ թվով միջոցառումներ, ինչպիսիք են բիզնես առաքելությունները (2013թ. չեխական ընկերությունները մասնակցել են 196 տոնավաճառների), և այլ հանդիպումներ տնտեսական և առևտրային համագործակցության թեմաներով: Այս միջոցառումները խրախուսում են Չեխիայի արտահանման խթանման գործակալության՝ մարքեթինգին ուղղված ջանքերը և կազմում ամբողջ աշխարհով Չեխիայի ընկերությունների և ապրանքների գովազդման մասով այդ գործակալության հանձնառության մի մասը:

Կառավարության և CzechTrade-ի առաջնահերթություններից են բազմակողմ և երկկողմ բանակցությունները՝ ուղղված չեխական ընկերությունների վրա դրված միջպետական կարգավորման բեռը թեթևացնելուն: Առևտրային բանակցային ռազմավարությունն է ապահովել չեխական ընկերությունների համար նոր շուկաներ մուտքի խոչընդոտների վերացումը և էժան արտադրական միջոցների ապահովումը բարձրարժեք ապրանքների արտադրության գործում, ինչն իր հերթին կհանգեցնի նոր շուկաների հասանելիության: Այսպիսով՝ երկկողմ և բազմակողմ բանակցությունները հանդիսանում են համաշխարհային արժեքի շղթային Չեխիայի բիզնեսների ինտեգրման ռազմավարության մի մասը:

Չեխիայի Հանրապետության արտահանման խթանման ռազմավարությունն ունի նաև պաշտոնական մոնիթորինգի և գնահատման ծրագիր, որը ղեկավարվում է ուղղորդող հանձնաժողովի կողմից՝ Արդյունաբերության և առևտրի նախարարի բարձրաստիճան նախագահությամբ: Այն երաշխավորում է, որպեսզի ռեսուրսները տրամադրվեն և համապատասխանեն սահմանված պահանջներին:

Աղբյուրը. ՏՀԶԿ վերլուծություն

ՏՀԶԿ երկրների արտահանման խթանման գործակալությունների հաջողած օրինակները վկայում են, որ արտահանման խթանման գործակալությունը պետք է համատեղի մի շարք կարևորագույն գործառույթներ: Ամենատարրական, սակայն առանցքային գործառույթը այնպիսի մարքեթինգային միջոցառումների օգտագործումն է, ինչպիսիք են բրենդավորումը, տեղական ապրանքների խթանումը՝ հիշվող սյուժետային գծի և թիրախային շուկաներ կանխազդիչ այցելությունների միջոցով: Նմանատիպ կանխազդիչ մոտեցումներն անհրաժեշտ են տեղական ընկերություններին և հատկապես ՓՄՁ-ներին արտահանման հնարավորությունների մասով ուսուցանելիս: Բիզնես հմտությունների բարելավումը և օտարերկրյա շուկաների և ապրանքների մասին գիտելիքներն էական են արտահանմանն ուղղված յուրաքանչյուր հաջողված ռազմավարության համար, իսկ արտահանման խթանման գործակալությունը առանցքային դեր է խաղում դրանում: Արտահանման շուկայում՝ հենց տեղում այդ շուկաների կարգավորումների և առանձնահատկությունների մասին տեղեկացված կապեր ունենալը, կարող է անփոխարինելի լինել ցանկացած տեղական ընկերության համար, որը փորձում է մուտք գործել տվյալ շուկա սեփական ապրանքներով: Վերջիվերջո, արտահանման խթանման հաջող ռազմավարությունների կարևոր բաղադրիչ է նաև տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) համակարգերի օգտագործումը: Դրանք կարելի է օգտագործել, օրինակ, որպես հեռավար ուսումնառության նյութ տեղեկատվության տրամադրման ծախսերը կրճատելու, ուսուցման պորտալներ պատրաստելու և անհրաժեշտ փաստաթղթերի հեշտ հասանելիությունն ապահովելու նպատակով:

Մեքսիկայի արտահանման խթանման հաստատությունը՝ BANCOMEXT-ը մեկ «հովանոց» կազմակերպության ներքո այս բոլոր գործառույթների համատեղման հաջողված օրինակ է (տե'ս Վանդակ 3-ը): Այն նաև տրամադրում է արտահանումների ֆինանսավորման աջակցություն՝ որպես արտահանման խթանման այլ միջոցառումների մասով եկամտի ստացման եղանակներից մեկը:

Վանդակ 3. Մեքսիկայի արտահանման ռազմավարության իրականացումը BANCOMEXT-ի կողմից

Մեքսիկայի արտահանման ռազմավարությունը հետամուտ է մակրոտնտեսության կայունացմանը, առևտրի ազատականացմանը, առևտրային պայմանագրերի կնքմանը և առևտրի խթանմանը: Համաշխարհային շուկաների հասանելիությունը իրականություն է դարձել Մեքսիկան բազմակողմ առևտրային համակարգին լիարժեքորեն ինտեգրելու, Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) և ՏՀԶԿ-ի տիպի բազմակողմ կազմակերպություններին անդամակցելու, ինչպես նաև երկկողմանի առևտրային պայմանագրեր կնքելու միջոցով: Մակրոտնտեսական կայունությունը համարվում է օտարերկրյա ուղղակի ներդրումներ (ՕՈՒՆ) ներգրավելու և տեղական ընկերությունների մրցունակությունը խթանելու միջոց: Կառավարությունը ստանձնել է համակարգողի դեր դաշնային և տեղական կառավարությունների, ինչպես նաև պետական-մասնավոր գործընկերության բոլոր կազմակերպությունների կողմից միևնույն նպատակի ուղղությամբ աշխատանքների ապահովման հարցում: Հիմնական նախաձեռնությունը եղել է մրցակցային և առևտրի խթանման միջավայրի ստեղծումը: Որպես նման միջավայրին աջակցելու միջոց՝ միակ կազմակերպություն Bancomext-ը օգտագործում է առևտրի խթանման, ուսումնական և տեխնիկական աջակցության և ֆինանսական գործիքներ:

Bancomext-ի նպատակները հստակ սահմանված են: Այն պետք է ապահովի ավելի մեծ թվով ՓՄՁ-ների մուտքն արտաքին շուկաներ: Կառույցը պետք է իր արտահանման շուկաներն ավելի ընդլայնի՝ դուրս գալով իր արտահանման ավելի քան 80%-ի նպատակային երկիր Միացյալ Նահանգների սահմաններից: Այն պետք է մեծացնի Մեքսիկայից արտահանվող ապրանքների բազմազանությունը:

Bancomext-ը արտահանման խթանմանն առնչվող իր բոլոր գործառույթները կենտրոնացնում է մեկ տեղում: Այն ձևավորվել է այնպես, որ իր սեփական ռեսուրսներով ֆինանսավորի իր գործունեության ոլորտները: Կառույցը տրամադրում է արտահանման վարկեր և երաշխիքներ, հավաքում է շուկայի մասին տեղեկատվություն, տրամադրում է խորհրդատվություն և վերապատրաստում և խթանում է մեքսիկական ապրանքներն արտասահմանում: Այն ունի 35 տարածաշրջանային ներկայացուցչություններ Մեքսիկայում և 31-ը՝ արտասահմանում: Առևտրի խթանման բոլոր գործողությունները մեկ տանիքի ներքո հավաքելը Bancomext–ին թույլ է տվել օգտվել գիտելիքների ավելի լայն ոլորտներից, ինչպես նաև՝ ֆինանսավորել երկարաժամկետ շահույթ հետապնդող գործունեության տեսակները (ինչպիսիք են մարքեթինգը և վերապատրաստումը) կարճաժամկետ շահութաբեր գործունեության (ինչպիսիք են վարկերի և երաշխիքների տրամադրումը) հասույթների միջոցով: Կազմակերպության ֆինանսական միջոցների վերջնական երաշխավորը հանդիսանում է Մեքսիկայի կառավարությունը:

Bancomext-ի գործունեության տեսակների ամբողջական շղթան

Հաջողության հիմնական գործոնները.

- Արտահանողների համար այն գործում է մեկ պատուհանի սկզբունքով՝ մեկ կտուրի տակ համախմբելով արտահանման շղթայի բոլոր անհրաժեշտ ծառայությունները:
- Այն մեծապես կարևորում է մասնավոր հատվածի մասնակցությունը նոր պրոդուկտների մշակման, խորհրդատվության և ռազմավարական պլանավորման գործում:
- Bancomext-ն ակտիվորեն կապեր է ստեղծում արտասահմանի պոտենցիալ հաճախորդների հետ՝ առևտրի տոնավաճառների, արտահանման առաքելությունների և արտասահմանյան առևտրային առաքելությունների միջոցով՝ պարզապես անմիջական մարքեթինգային կապեր ստեղծելու շնորհիվ:
- Գործում է տեղական բիզնեսների և տեղական կառավարության սերտ համագործակցության մշակույթը, ինչը կատարվում է ի շնորհիվ Մեքսիկայի տեղական գրասենյակների:
- Գործում է արդյունավետության ցուցանիշների համակարգ, որն ապահովում է հետադարձ կապը, հետագա գործողությունները և գնահատումը:

Աղբյուրը. ՏՀՁԿ վերլուծություն

Արտահանման խթանման գործակալության (ԱԽԳ) աշխատանքային ռազմավարությունն էական նշանակություն ունի սեփական հաջողության համար: Պատշաճ գործելակերպը ցույց է տալիս, որ անհատականացված և թիրախավորված մոտեցումը լավ է աշխատում: Անհատականացված մոտեցում նշանակում է անհատականորեն գնահատել յուրաքանչյուր հաճախորդի կարիքները: Թիրախավորված մոտեցումը ենթադրում է ռեսուրսների կենտրոնացում այն ոլորտների և ընկերությունների վրա, որոնք հաջողության հասնելու ավելի մեծ հավանականություն ունեն և որոնք գտնվում են լավ հետազոտված շուկաներում: Երկու մոտեցումներն էլ համարվում են ռեսուրսատար: Դրանք ենթադրում են ռեսուրսների կենտրոնացում ավելի քիչ ընկերությունների վրա, ինչն իր հերթին կարող է բերել հաջողության, որը տարածվում է ոլորտի մյուս ընկերությունների վրա: Ե՛վ հետազոտությունը, և՛ հաճախորդների արձագանքը կարևոր գնահատման մեխանիզմներ են այս մոտեցումների համար:

ԱԽԳ-ի արդյունավետ կառավարման և կազմակերպական կառուցվածքը կախված է ազգային ինստիտուցիոնալ շրջանակում նրա զբաղված դիրքից: Թերևս կա նման գործակալությունների դիրքավորման տարբերություններ երկրի դիվանագիտական հաստատությունների կազմում, ինչպիսին է՝ Արտաքին գործերի նախարարությունը, կամ գործակալությանը անկախ կարգավիճակ տալը և մասնավոր հատվածի ներգրավումը խթանելը: Ավստրալիայի, Կանադայի և Չեխիայի Հանրապետության արտահանման խթանման գործակալությունները գտնվում են պետական հատվածի հաստատությունների կազմում, բայց տարբերություններ կան նրանց անձնակազմի կառուցվածքում: Չեխիայի Հանրապետության և Ավստրալիայի՝ ամենահաջողը համարվող գործակալությունները ֆինանսավորվում են պետական միջոցներով, սակայն ունեն մասնավոր հատվածից՝ հաճախ թիրախավորված ոլորտներից մասնագետներ հավաքագրելու հստակ նպատակներ, այն դեպքում, երբ մյուս գործակալությունները սովորաբար հավաքագրում են անձնակազմ պետական հատվածից քաղաքացիական ծառայության միջոցով: Դրան հակառակ՝ Մեքսիկայի և Կոստա Ռիկայի գործակալությունները կիսամասնավոր են և անկախ, և փորձում են հնարավորինս քաջալերել մասնավոր հատվածի ներգրավումը: Նրանց ֆինանսավորումը նույնպես անկախ է և ստացվում է կիսահանրային աղբյուրներից: Մեքսիկայի Bancomext–ը ֆինանսավորվում է իր սեփական

ֆինանսական ապահովման գործարքներից (տե՛ս Վանդակ 3-ը), մինչդեռ Կոստա Ռիկայի գործակալություններն ապավինում են ազատ առևտրի գոտիների հարկերին:

Գործակալությունների ներսում բյուրոկրատական քաշքշուկները նվազագույնի հասցնելու նորագույն մեթոդները ներառում են այսպես կոչված մեկ պատուհանի սկզբունքով նախաձեռնություններ: Դրանք սովորաբար ապահովում են մեկ կոնտակտային կետ բազմաթիվ առաջադրանքների համար՝ լինեն դրանք կարգավորման, տեղեկատվական բնույթի, թե բիզնես ծառայություններ: Դրանք կարող են լինել անփոխարինելի մասնավորապես ՓՄՁ-ների համար, քանի որ վերջիններս հաճախ թերհամալրված են և քիչ գիտելիքներ ունեն արտահանման համար անհրաժեշտ կարգավորող և ադմինիստրատիվ քայլերի վերաբերյալ: Մեկ միասնական գրասենյակի հետ կապը ՓՄՁ-ների առջև կբացի նոր տեղեկատվական աղբյուրներ և կարգավորման պահանջների ամբողջական ցանկ, որը նրանց հասանելի կլինի ծախսարդյունավետ եղանակով: Ագրոբիզնեսի ոլորտի արտադրանքը շահում է նման նախաձեռնություններից, քանի որ դրանց առևտուրը ներառում է բազմաթիվ իրավական քայլեր՝ սկսած որակի մասով դասակարգումից մինչև առողջապահական և անվտանգության ստուգումները, և ընդհուպ՝ մինչև ստանդարտ թվով կարգավորման պահանջները, ինչպիսիք են ծագման հաստատումը և մաքսային հավաստագրերը:

Մեկ պատուհանի սկզբունքով ձեռնարկումները շատ օգտակար են նաև ինտերակտիվ հեշտ հասանելի պորտալների ստեղծման համար, որոնք հավաքագրում են ամբողջ տեղեկատվությունը տեղական արտահանողների համար մատչելի աջակցության վերաբերյալ: Հավաքագրման այս փարժանքը կարևորագույն քայլ է արտահանման աջակցման համապարփակ ծրագիր ստեղծելիս: Սովորաբար կան բազմաթիվ գործակալություններ, ինչպես նաև մասնավոր հատվածի ձեռնարկումներ, որոնք կարող են օգնել ընկերությանը մուտք գործել արտաքին շուկաներ: Հաճախ շատ ծախսատար և ժամանակատար է դրանք առանձին-առանձին հետազոտելը, իսկ տեղեկատվության համադրումն առցանց միասնական պորտալում արդեն իսկ ապացուցել է իր օգտակարությունը պետական մարմինների համար: Վանդակ 4-ում

ներկայացված ՓՄՁ արտահանողներին աջակցող ԵՄ պորտալը այս տիպի հաջող նախաձեռնության օրինակ է, որը հասանելի է և՛ ԵՄ անդամ երկրներին, և՛ ոչ անդամներին:

Վանդակ 4. ՓՄՁ-ների արտահանմանն առնչվող գործող աջակցության արդյունքներ. ՓՄՁ-ներին աջակցության ԵՄ նախաձեռնությունները

Նախքան ՓՄՁ-ների միջազգայնացման աջակցման ծրագրերի արդիականացման քաղաքականությունները ձևավորելը՝ կարևոր է ամփոփել գործող աջակցության արդյունքները. հեշտ հասանելի և հրապարակային տվյալների բազայում հետազոտություն կատարելը և արդյունքներն արձանագրելը պետք է լինի արտահանման խթանման բարեփոխված գործակալության առաջին պրոդուկտներից մեկը:

ԵՄ-ի ձեռնարկությունների և արդյունաբերության վարչությունը կատարել է նման մի վարժանք և կառուցել գլոբալ աջակցության համապարփակ տվյալների բազա, որը նախատեսված է արտահանմամբ հետաքրքրված ՓՄՁ-ների համար: Այն կոչվում է ՓՄՁ միջազգայնացման պորտալ կամ ‹‹Go International››:

Այս տվյալների բազան սպառիչ տեղեկատվություն է տրամադրում այն պետական և մասամբ պետական կազմակերպությունների մասին, որոնք աջակցում են ՓՄՁ-ներին իրենց արտահանման ջանքերում: Այն ապահովում է կոնտակտային մանրամասներ և վեբ հղումներ այդ մարմիններին, և տալիս հակիրճ բացատրություն այն մասին, թե ինչպես դրանք կարող են օգտակար լինել ՓՄՁ-ների համար: Լինելով անվճար ռեսուրս՝ այն հասցեագրված է ԵՄ-ի և ամբողջ աշխարհի ՓՄՁ-ներին:

ԵՄ-ի «Go International» պորտալը և ընդգրկված երկրները

Տվյալների բազան անվճար է և ներառում է մոտ 600 օժանդակ ծառայություններ ընդգրկող 300 ծառայություն մատուցողների: Այն ներառում է մի շարք որոնման կատեգորիաներ. ըստ ծագման երկրի, ըստ ԵՄ անդամ պետություններում գործող ծառայությունների, ԵՄ-ից դուրս առկա ծառայությունների, և թիրախային շուկաներում առկա ծառայությունների:

Այնուհետև ծառայությունները կարելի է խմբավորել ըստ միջազգայնացման տեսակների՝ ներմուծում, արտահանում, ՕՈՒՆ, ինչպես նաև ըստ այն լեզվի, որով խոսում է տվյալ ՓՄՁ-ը:

ԵՄ-ի սահմաններից դուրս ընդլայնվելու նպատակ հետապնդող ՓՄՁ-ների մասով հանրային ծառայություններ մատուցողները հրավիրվում են գրանցվել պորտալի (https://webgate.ec.europa.eu/smeip/) էջի միջոցով, և կարող են ավելացնել իրենց ծառայությունները տվյալների բազայում:

ՓՄՁ միջազգայնացման պորտալը նաև հղում է տալիս Եվրոպական Հանձնաժողովի շուկաների հասանելիության տվյալների բազային (http://madb.europa.eu/), որն առանձին արագ աճող շուկաներին տրամադրում է շուկայի հասանելիության մասով տեղեկատվություն:

ԵՄ-ում առկա են ՓՄՁ աջակցության այլ կառույցներ ևս, և դրանցից մի քանիսն ուղղակիորեն առնչվում են արտահանման գործունեությանը: Դրանց թվում են՝

- **Ձեռնարկատիրության աջակցման եվրոպական ցանցը (EEN)** ձգտում է օգնել փոքր ընկերություններին առավելագույն օգուտ քաղել Եվրոպական Միության ընձեռած բիզնես հնարավորություններից: Սա մեկ պատուհանի սկզբունքով գործող կառույց է՝ ուղղված ՓՄՁ-ների բիզնես կարիքներին, որը բիզնես աջակցության ծառայություններ է տրամադրում ԵՄ-ում, ինչպես նաև մասնավորապես օգնում է ՓՄՁ-ներին արտասահմանում բիզնես գործընկերներ գտնելու հարցում: EEN-ի մասնագիտական կազմը խմբավորված է ըստ ոլորտների, և նրանք մասնագիտանում են ըստ ոլորտների (http://een.ec.europa.eu/about/mission):

- **Փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցման եվրոպական ակտում** (Small Business Act for Europe) արձանագրված լավագույն գործելակերպերը Եվրոպական Հանձնաժողովի հետ համագործակցության միջոցով իրականացվող ՏՀԶԿ ծրագրերի օգնությամբ փոխանցվում են ԵՄ հարևան տարածաշրջաններ (այս զեկույցը նման փորձ է): Այն ուղղակիորեն աջակցում է քաղաքականության մշակողներին որոշումների կայացման գործում և այս կերպ՝ անուղղակիորեն օգնում է տնտեսվարողներին:

- **COSME-ն** ձեռնարկությունների և ՓՄՁ-ների մրցունակության ԵՄ ծրագիր է 2014-2020 թվականների համար: Այստեղ որոշվել են ՓՄՁ աջակցման առաջնահերթ ոլորտները, օրինակ՝ մուտքը շուկաներ, ֆինանսական միջոցների ավելի լավ հասանելիություն, նոր սկսնակ ընկերությունների և բիզնեսի աճի համար բարենպաստ պայմանների ստեղծում (http://ec.europa.eu/enterprise/initiatives/cosme/index_en.htm):

- **East Invest-ը** ՓՄՁ-ների ցանցի, ինչպես նաև գործընկեր երկրների (օրինակ՝ Հայաստան) բիզնես ասոցիացիաների միջոցով առևտրի և ներդրումների խթանմանն ուղղված ծրագիր է: Այն նաև նպատակ ունի բարելավել պետական-մասնավոր երկխոսությունը:

Աղբյուրը. ԵՀ (2014թ.), ՓՄՁ միջազգայնացման պորտալ, https://webgate.ec.europa.eu/smeip/:

Չնայած ՏՀԶԿ երկրներում երկար կիրառված և մեծ տարածում ունեցող գործիք լինելու հանգամանքին՝ արտահանման խթանման քաղաքականությունները հայտնի են գնահատման իրենց դժվարություններով: Սա պայմանավորված է նրանով, որ դրանք հաճախ իրենց մեջ պարունակում են փափուկ, ոչ քանակական բաղադրիչ, ինչպիսիք են մարքեթինգին և բրենդավորմանն ուղղված ջանքերը: Բացի այդ, դրանք ստիպված են գործել ընդհանուր տնտեսական միջավայրում, որը խորքային ազդեցություններ է ունենում առևտրի վրա՝ անկախ խթանման ջանքերի արդյունավետությունից: Այնուհանդերձ, չափելի և իրատեսական նպատակներ սահմանելը հրամայական է արտահանման խթանման ծրագրի պարագայում: Դրանց հասնելու առաջընթացն այնուհետ պետք է մշտադիտարկվի և չափվի անկախ մարմնի կողմից, որը հաճախ կազմված է պետական և մասնավոր հատվածների փորձագետներից: Վանդակ 5-ում բացատրվում է, թե ինչպես է կարելի ձեռնարկել այս միջոցառումները:

Վանդակ 5. Արտահանման խթանման քաղաքականությունների (ԱԽՔ) գնահատման կարևորությունը

ԱԽՔ-ների գնահատումը շատ կարևոր է. վճռորոշ է դրանց ազդեցությունների գնահատման և գործունեության բարելավման, ինչպես նաև՝ ծախսերը ցածր մակարդակի վրա պահելու ուղղությամբ գործադրված ջանքերի ապահովման համար: ԱԽՔ արդյունավետության գնահատումը կարևոր է նաև այն առումով, որ այն կարելի է օգտագործել տեղական արտադրողների մոտ ծրագրի մասին իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով: Այս կերպ՝ գնահատման և մոնիթորինգի քարոզարշավը կարող է կրկնապատկվել որպես արտահանման խթանման մարքեթինգային արշավ, և որպես հենց ծրագիր:

Գոյություն ունեն գնահատման երկու մակարդակներ՝ երկրի մակարդակ և ընկերության մակարդակ. երկրի մակարդակով ԱԽՔ-ները կարող են գնահատվել տնտեսական աճի (հետևելով արտահանմանն ուղղված աճի փաստարկին) կամ եկամուտների և արտարժույթի պահուստների աճի առումով: Ի տարբերություն առաջինի՝ ընկերության մակարդակով գնահատումը հաշվի է առնում ընկերությունների արտահանման հոսքերի, նրանց ձեռնարկատիրական մոտեցումների և շուկաների ու ապրանքների դիվեսիֆիկացիաների փոփոխությունները:

ԱԽՔ-ների գնահատումը հայտնի է իր դժվարություններով և սխալանքների

հակվածությամբ. նույնիսկ լավ մշակված լինելու դեպքում՝ ԱԽՔ հաջողությունը կախված է նաև երկրի հաստատությունների կառուցվածքից և դրա հետ կապված՝ խթանող կառույցներից, ինչպես նաև գործող այլ մակրոտնտեսական կամ ոլորտի զարգացման քաղաքականություններից: Երկրի մակարդակով՝ դրան կարելի է հասնել բազմաթիվ թվային էկոնոմետրիկական ուսումնասիրություններ կատարելու միջոցով, որոնք առանձնացնում են ԱԽՔ-ների ազդեցությունը՝ արտահանման և տնտեսական աճի վրա ազդող այլ գործոններից: Ընկերության մակարդակով կարելի է կատարել նույն վարժանքը, սակայն այստեղ տվյալների հավաքագրումն առավել դժվար է: Էկոնոմետրիկական մոդելի համար պետք է հավաքել ընկերության մակարդակով տվյալների մեծ ընտրանք, որպեսզի այն լինի անկողմնակալ և արդյունավետ:

Աղբյուր. Բելլոկա և Դի Մաիո, (2011),“*Survey of the literature on successful strategies and practices for export promotion by developing countries”/«Զարգացող երկրների կողմից արտահանման խթանման հաջող ռազմավարությունների և գործելակերպերի վերաբերյալ գրականության ուսումնասիրություն*», *IGC Աշխատանքային փաստաթուղթ*, 11/0248, IGC (International Growth Centre), Լոնդոն; Լեդերման և այլոք (2009 թ.), ‹‹*Արտահանման խթանման գործակալություններ. արդյո՞ք դրանք աշխատում են*››, *Journal of Development Economics,* հատոր՝91(2), էջ՝ 257-265:

Արտահանման խթանման քաղաքականությունները դրական են ազդում արտահանման արդյունքների վրա

Թեև երկրների միջև կան շատ տարբերություններ, ԱԽՔ-ներն ապացուցել են իրենց արդյունավետությունը, եթե դրանք կառուցված են եղել նպատակային ու արդյունավետ կերպով: Արտահանման խթանման քաղաքականությունները մեծացնում են ընկերությունների տեղեկատվական և էմպիրիկ գիտելիքի պաշարը: Դրանք ընկերությունների ղեկավարների շրջանում խրախուսում են դրական մոտեցումներ դեպի արտահանումը և ոգևորում, որպեսզի նրանք ավելի նվիրվեն արտահանմանը: Փորձը ցույց է տալիս, որ նման ծրագրերի գործարկման ծախսերի վերադարձը երաշխավորված են: Լեդերմանը և այլոք (2008թ.) ուսումնասիրություն են կատարել 88 զարգացած և զարգացող երկրներում և գտել, որ խթանման գործակալությունները հզոր և վիճակագրական առումով նշանակալի ազդեցություն են ունենում արտահանման ծավալների վրա, ինչն անկախ է մակրոտնտեսական մյուս քաղաքականություններից. արտահանման խթանման վրա ծախսված յուրաքանչյուր լրացուցիչ դոլարը միտված է մեծացնելու արտահանումը մոտ 40 դոլարով:

Բարելավված մաքսային ընթացակարգեր և արտահանմանն առնչվող ենթակառուցվածք

Հայաստանի քաղաքականություն մշակողները կարող են ուղղակիորեն աջակցել Հայաստանի ագրոբիզնեսի ոլորտի արտահանողներին՝ արտահանման ծախսերը և ապրանքները երկրի տարածքից դուրս հանելու համար պահանջվող ժամանակը նվազագույնի հասցնելու միջոցով: Դրան կարելի է հասնել կարգավորման ծախսերը նվազեցնելու և ռացիոնալացնելու, և արտահանման ենթակառուցվածքը բարելավելու միջոցով: Հետագա աջակցություն կարելի է տրամադրել ագրոբիզնեսի արժեքի շղթայի վաղ փուլերում որակի հսկումը բարելավելու միջոցով:

Մաքսային ընթացակարգերի, պահեստավորման և շուկայի ենթակառուցվածքի բարելավումը կարող է դրական ազդել ագրոբիզնեսի ոլորտի արտադրանքի վրա

Առևտրի վրա ծախսվող ժամանակի և ծախսի նվազեցումը խթանում է սահմանային հոսքերի աճը: Մաքսային կետերում ապրանքների և ընթացակարգերի հետ կապված նույնիսկ փոքր անարդյունավետությունները և ժամանակային ուշացումները կարող են հանգեցնել մեծ կորուստների, այն է՝ պետության համար բիզնեսների և եկամուտների կորստի: Սա հիմնականում պայմանավորված է միջազգային առևտրի բնույթով, որը բնութագրվում է գլոբալացված մատակարարման շղթաներով, ճիշտ ժամանակին առաքմամբ և աշխատանքի ու ապրանքների շուկայի ալւթսորսինգով:

Երկարաժամկետ հեռանկարում պետք է բարելավել սահմանային երկրների հետ գործընկերությունը, առևտրային գործընկերների հետ հարաբերությունները և անդամակցությունը բազմակողմ կազմակերպություններին: Կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարներում՝ առևտրին առնչվող ցանկացած ներքին խոչընդոտի և ծախսի վերացումը ամենայն հավանականությամբ կլինի բարենպաստ:

Առևտրի ներքին խոչընդոտները նվազագույնի հասցնելու մասով լավ օրինակները մատնանշում են մաքսային, հավաստագրման և սահմանային անցման գործընթացների ռացիոնալացումը, ինչպես նաև՝

բարելավված ենթակառուցվածքը: Գործընթացները կարող են բարելավվել ներգերատեսչական տեղեկատվական հոսքերը և տվյալների բազան կենտրոնացնելու և արդիականացնելու նպատակով տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումն ավելացնելու միջոցով: Դրա արդյունքում մասնավոր հատվածն ավելի քիչ ժամանակ և փող կծախսի հաշվետվության վրա, իսկ պետական հատվածի մասով մաքսային եկամուտների ավելացումը հաճախակի բնույթ կկրի:

Պատշաճ գործելակերպի քաղաքականությունները նաև ցույց են տալիս, որ ենթակառուցվածքի բարելավումները խթանում են ապրանքների ֆիզիկական հոսքերը և արագացնում ձևակերպումների ընթացակարգերը: Կարևորն այն է, որ մեկ կենտրոնացված մաքսային համակարգի ներդնումն ամենայն հավանականությամբ կմեծացնի մաքսազերծման գործընթացում թափանցիկությունը և կկրճատի ոչ ֆորմալ գործելակերպերը, ինչպես նաև կբարելավի պետական վարչարարության արդյունավետությունը և բարոյական վիճակը:

Վանդակ 6-ը ներկայացնում է ԵՄ՝ մեկ պատուհանի սկզբունքով մաքսային բարեփոխման արդյունքում գործընթացների բարելավման վերաբերյալ գործի ուսումնասիրությունը, իսկ Վանդակ 7-ը՝ Նիդերլանդներում արտահանման ենթակառուցվածքի բարելավումը՝ ծաղիկների արտահանման մեկ կառույցի միջոցով:

Վանդակ 6. Եվրոպայի մեկ պատուհանի սկզբունքով մաքսային ծառայություն

ԵՄ-ն ունի մեկ պատուհանի սկզբունքով (ՄՊ) մաքսային ծառայություն և համակարգված սահմանային կառավարում (ՀՍԿ)՝ առևտրին և տրանսպորտին առնչվող վարչարարական և կարգավորման խնդիրները լուծելու նպատակով, ինչն արդյունք է համապարփակ օրենսդրություն նախատեսելու և ազգային մաքսային մարմինների վարչարարության բարելավման վերաբերյալ որոշման: Մեկ պատուհանի սկզբունքով մաքսային ծառայությունը իրագործում է 1) ԵՄ անդամ երկրներում գործող տարբեր նախաձեռնությունների և 2) ԵՄ տարբեր երկրների համակարգման դժվար գործառույթը: Այս առումով ԵՄ մաքսային մեկ պատուհանը գերազանց օրինակ է առ այն, թե ինչպես պարզեցնել և լավագույնս օպտիմալացնել ընթացակարգերի խրթին փունջը: Մեկ պատուհանի ձևաչափը ձևավորվել է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (ՄԱԿԵՏՀ) սահմանման համաձայն.

«Մեկ պատուհանը մի միջոց է, որը առևտրով և փոխադրմամբ զբաղվող կողմերին թույլ է տալիս ներկայացնել ստանդարտացված տեղեկատվություն և փաստաթղթեր մեկ մուտքով՝ ներմուծմանը, արտահանմանը և տարանցմանն առնչվող պահանջները կատարելու նպատակով: Եթե տեղեկատվությունը էլեկտրոնային է, ապա տվյալների առանձին բաղադրիչները պետք է ներկայացվեն մեկ անգամ» ՄԱԿԵՏՀ (2005թ.):

ՄՊ սկզբունքով մաքսային ծառայությունների նպատակն է դյուրացնել ապրանքների սահմանային տեղաշարժին առաջադրվող պահանջների կատարումը: Համակարգը կապակցում է ԵՄ-ի և ազգային պետությունների սահմանների վրա տնտեսական փոխանակումներն այդ խնդիրներով զբաղվող ԵՄ և ազգային գործակալությունների հետ: Կատարվում է միայն տեղեկատվության երկու փոխանակում տնտեսական գործակալի և մեկ պատուհանի համակարգի մյուս կողմում նստած մարմինների միջև. *ոչ մաքսային ՄՊ-ը* առևտրային ընկերություններից պահանջում է և նրանց տալիս է հնարավորություն ներկայացնելու ոչ մաքսային ամբողջ տեղեկատվությունը նավահանգստի/օդանավակայանի/ցամաքի իշխանություններին, իսկ դրանից հետո *մաքսային ՄՊ-ը* զբաղվում է բոլոր մաքսային խնդիրներով: Կան այդ համակարգերն ինտեգրելու պլաններ: Մաքսային ՄՊ-ը ապահովում է տվյալների սահուն հոսք դեպի գործակալություններ և հակառակը՝ ինտեգրված ՏՏ համակարգի միջոցով:

Համակարգված սահմանային կառավարման համակարգն առնչվում է այն ամենի հետ, ինչը տեղաշարժվում է ԵՄ սահմանով (օրինակ՝ անձնակազմը, ապրանքները, տրանսպորտի միջոցները) և ավելի շատ ֆիզիկական բնույթ է կրում, քան մաքսային ՄՊ-ը: Այն ունի համակարգված սահմանային զրասենյակներ և կիրառում է մեկ պատուհանի սկզբունքը: ՀՍԿ-ի նպատակն է սահմանային հսկման գործակալությունների համակարգման ապահովումը, որտեղ ֆիզիկական ներկայությունը կարևոր է, իսկ ՏՏ համակարգերը կարող են ունենալ միայն օժանդակ դեր:

ԵՄ մեկ պատուհանի մոտեցման մեկ այլ մակարդակ է ազգային մաքսային պորտալի հետ համակարգումը: Հաշվի առնելով ԵՄ-ի բացառիկ կառուցվածքը, որտեղ ապրանքների սահմանային տեղաշարժերի նկատմամբ կիրառվում է և՛ ազգային, և՛ ԵՄ օրենսդրությունը, ինտեգրված և մեկ պատուհանով մոտեցումն ունի գերագույն նշանակություն՝ կարգավորման երկու մակարդակների համալիրությունից բիզնեսներին ազատելու համար: Չնայած ազգային մաքսային պորտալները շարունակում են գործել, սակայն գործընթացը ռացիոնալացվել է այն իմաստով, որ ազգային և ԵՄ օրենսդրության բոլոր պահանջները պետք է մոտ ապագայում կատարվեն ընդհանուր ՄՊ համակարգով:

Աղբյուրը. SKEMA (2014 թ.), ‹‹ԵՄ մեկ մաքսային պատուհան››, SKEMA -ի վեբ կայք՝ http://www.eskema.eu/defaultinfo.aspx?topicid=173&infoid=451&index=2, (մուտքը 2014 թ. հուլիսի 24 -ին):

Վանդակ 7. Արտահանման կենտրոնացված պահեստ Նիդերլանդներում. կակաչների շուկա

Ալսմեր քաղաքում գործող Flora-Holland-ը ծաղիկների ամենամեծ շուկան է աշխարհում: Այն ստեղծվել է ծաղիկների համար շուկա ձևավորելու նպատակով, ծառայում է որպես պահեստ, ապահովում է հեշտ և մեկ պատուհանի սկզբունքով հնարավորություն որակի ստուգման և դասակարգման, ինչպես նաև մաքսային վարչարարության համար: Ծաղիկների շուկան ունի որպես ծաղիկների փոքր և հատվածավորված արտադրողների կենտրոնացման կետ ծառայելու շատ երկար պատմություն, որը ներկայումս հանդիսանում է գերժամանակակից կառույց՝ հատուկ պահեստով և ծաղիկների հատուկ պահանջների համար հարմարեցված տրանսպորտային կապով:

Այն արտահանման մեկ միասնական կանգառ է ծաղիկ արտադրողների համար: Համապատասխան պահեստ տրամադրելու հետ մեկտեղ՝ այն նաև տրանսպորտային հանգույց է, որը շատ մոտ է գտնվում ամենամեծ առևտրային օդանավակայանին և մոտակա նավահանգստին: Նրա կազմում գտնվում է մեկ պատուհանի սկզբունքով սպասարկում կարգավորման կարիքների համար, ինչպես նաև մեկ պատուհան՝ արտահանման մաքսային ձևակերպումների համար: Ի վերջո, այն մարկետ-մեյքեր է, որն օգտագործում է ամենաժամանակակից SS աճուրդային համակարգը, որտեղ պահանջարկը և առաջարկը հանդիպելով՝ ձևավորում են մրցակցային գին:

Մեծ պահեստային շինություն

- Գործում են պահեստը և սառնարան/սառցարանը:
- Ընդհանրապես, Նիդերլանդներում է գտնվում ԵՄ-ի հզորությամբ երկրորդ սառնարանային և սառցարանային պահեստը:

Չնակերպման և բեռնափոխադրման ենթակառուցվածք

- Ալսմերի պահեստում ծաղիկները բերվում են ամբողջ երկրից (և աշխարհից), դասակարգվում են, սայլակով անցնում աճուրդով, վաճառվում և ուղարկվում մերձակա Schiphol օդանավակայան:

Աղբյուրը. ՏՀԶԿ վերլուծություն

Շուկայի թվայնացված աճուրդի մեխանիզմ

- Չնակերպումների և աճուրդի ծախսի ու ժամանակի արդյունավետության բարելավման բանալին գործող ՏՏ համակարգերն են:

Աճի և արտահանման պոտենցիալի վրա ենթակառուցվածքների բարելավման դրական ազդեցությունները քաջ հայտնի են: Համաշխարհային մասշտաբով դրա լավագույն օրինակը Չինաստանն է՝ վերջին երկու տասնամյակում ամենաարագ աճ գրանցող տնտեսությունը, որը 1992-2011 թվականների ընթացքում յոթնապատիկ ընդլայնվել է՝ ընդամենը իր ՀՆԱ-ի 8.5%-ը ծախսելով ենթակառուցվածքների բարելավման վրա (Economist, 2014թ.): Համաշխարհային Բանկի կողմից պատրաստված գրականության ուսումնասիրությամբ նույն կերպ գնահատվել է, որ Լատինական Ամերիկայի ենթակառուցվածքը Արևելյան Ասիայի երկրների նման լավը դարձնելու դեպքում ներկայումս ամենավատ ենթակառուցվածք ունեցող երկրներում տարեկան աճի տեմպերը կավելանան 5 տոկոսային կետով (Կալդերոն և Սերվեն, 2004թ.):

Որակի հսկման և հավաստագրման բարելավումը կարող է հավասար պայմաններ ստեղծել ագրոբիզնեսի ոլորտի ՓՄՁ արտադրողների համար

Հավաստագրման մարմինների ռացիոնալացումը և դրանցից օգտվելն ավելի մատչելի դարձնելը նույնպես կխթանեն արտահանման ծախսարդյունավետությունը: Շատ կարևոր է տեղական հավաստագրման և որակի հսկման գործընթացները միջազգայնորեն լավագույն գործընթացների հետ համեմատելը: Եթե տեղական հավաստագրումը համապատասխանում է հիմնական առևտրային գործընկերների հավաստագրմանը, ապա լրացուցիչ հավաստագրման ձեռքբերման ծախսը առևտրով զբաղվողների համար կիասցվի նվազագույնի:

Ավելի լավ է ունենալ քիչ, բայց լավ ճանաչված որակի և անվտանգության հավաստագրեր, քան մեծ քանակությամբ հավաստագրեր: Ագրոբիզնեսի ոլորտում դժվար է արագորեն կրճատել հավաստագրերի քանակը, քանի որ պահանջները տարբեր են որակի, անվտանգության, ծագման, բրենդավորման, արտադրության ավանդական մեթոդների և կլիմայի/էթնիկական տարբերակման հետ առնչվող տարածաշրջանային առանձնահատկությունների մասով: Գերադասելի է գնալ սահմանափակ թվով այնպիսի հավաստագրեր ունենալու ուղղությամբ, որոնք կապահովեն հիմնական բնութագրիչները, ինչպիսիք են, օրինակ՝ որակը, սննդի անվտանգությունը և ծագման վայրը, և հետո ապավինել մասնավոր հավաստագրմանն այնպիսի ոլորտներում, ինչպիսին բրենդավորումն է: Այս մասնավոր հավաստագրերը պետք է հիմնվեն պետական հատվածի հավաստագրման համապարփակ ուղեցույցի վրա: Այս կերպ հավաստագրերի ձեռք բերման ծախսերը կհասցվեն նվազագույնի, իսկ ավելի վստահարժան և լայնորեն ճանաչելի հավաստագրերի օգուտներն՝ առավելագույնի:

ԵՄ-ի ագրոբիզնեսի ոլորտի ապրանքների հավաստագրման սխեմաների մասով կա հատկապես մեկ դժվարին մարտահրավեր, այն է՝ այն պետք է միասնական եվրոպական շուկայում հավասարապես շուկայահանվող բոլոր ապրանքների մասով համապատասխանի 27 անդամ երկրների սխեմաներին: Վանդակ 8-ում նկարագրված ԵՄ մոտեցումն է մեկ կարգավորման ակտի մեջ միավորել ագրոբիզնեսի կարգավորման հսկմանն առնչվող ամբողջ օրենսդրությունը: Դրա նպատակն է ստեղծել փոքր թվով հիմնական հավաստագրեր, որոնք պարտադիր կլինեն սննդամթերքի ոլորտի բոլոր արտադրող և վաճառող ընկերությունների համար, միաժամանակ ապահովելով համապարփակ ուղենիշներ մասնավոր հատվածի հավաստագրման հավելյալ սխեմաների համար, որոնք, օրինակ, ապրանքները կկապեն բրենդներին:

Վանդակ 8. Պատշաճ գործելակերպին համապատասխան հավաստագրման պահանջներ ԵՄ-ի օրինակով

Որակի համապարփակ պահանջներ երաշխավորելու նպատակով ԵՄ-ն իրագործում է շուկայի ստանդարտների մասով հավաստագրման ընդհանուր հիմնարար պահանջը: Սա գործում է բոլոր գյուղատնտեսական ապրանքների համար, և խրախուսում բարեխիղճ մրցակցություն և շուկայի թափանցիկություն: Այն շուկայից վերացնում է անբավարար որակի ապրանքները, իսկ այդ ստանդարտներին համապատասխանությունն օգնում է բարելավել արտադրության եկամտաբերությունը և պաշտպանել սպառողների շահերը: Որոշ արտադրատեսակների առանձնահատուկ պահանջներով պայմանավորված՝ գոյություն ունի մեկ *Ընդհանուր շուկայական ստանդարտ* (GMS) և մի շարք հատուկ շուկայական ստանդարտներ առանձին ապրանքների համար, ինչպիսիք են, ցիտրուսային մրգերը, կիվին և պոմիդորը: Սա պարտադիր հավաստագիր է, որ ԵՄ-ում յուրաքանչյուր արտահանող, ներմուծող և սննդամթերքի վաճառքով զբաղվող պարտավոր է ունենալ:

ԵՄ-ն մասամբ թարմացրել է ագրոբիզնեսի որակի հսկման իր մոդելը՝ այն կենտրոնացնելով ագրոբիզնեսի որակի ստանդարտների մեկ կարգավորման դաշտում: Սա իր բնույթով կապված է ԵՄ-ի բարձր որակի ապրանքների խթանման, և առողջապահական և անվտանգության ստանդարտների ապահովման գաղափարի հետ: Նման խիստ պահանջները երաշխավորում են Եվրոպայի ագրոբիզնեսի բոլոր ապրանքների ստանդարտները և աջակցում գյուղացիներին և վերամշակող ընկերություններին պահպանել մրցունակությունը և շահութաբերությունը ագրոբիզնեսի գլոբալացված շուկայում: Դրանք պարտադիր հավաստագրեր չեն, սակայն դրանց օգտագործումն ավելի քան խորհուրդ է տրվում:

Գյուղատնտեսական ապրանքների և սննդամթերքի մասով նոր որակի սխեմաները մշակվել և ուժի մեջ են մտել 2013թ. սկզբներին: Այն մի քանի որակի սխեմանների մասով հասել է պարզեցված ռեժիմի՝ դրանք համախմբելով մեկ իրավական փաստաթղթի ներքո, որը նաև ներառում է ագրոբիզնեսի որակյալ ապրանքների պաշտպանության և խթանման համար հստակ շրջանակ: Նոր կարգավորման հիմնական տարրերը ներառում են.

- մեկ միասնական հետևողական և հստակ ուղեցույց ԵՄ որակի սխեմաների մասով
- գործող հաջողված սխեմաների (օրինակ՝ պահպանվող ծագման տեղանուն (ՊԾՏ) և պահպանվող աշխարհագրական նշում (ՊԱՆ)) ուժեղացում
- պահպանվող երաշխավորված ավանդական արտադրանքի (ՊԵԱԱ) սխեմայի փոփոխում և պարզեցում
- արտադրողների կողմից մարքեթինգի համար ընտրված որակի այլընտրանքային պայմանների կարգավորման շրջանակի ընդլայնում՝ սպառողներին ավելի շատ և հեշտ հասանելի տեղեկատվություն տրամադրելու նպատակով:

Այժմ միասնական կարգավորումը հանդիսանում է միակ մուտքը դեպի ԵՄ ագրոբիզնեսի որակի հսկման հիմնական սխեմաներ

Պահպանվող ծագման տեղանուն (ՊԾՏ)

Երաշխավորում է գյուղատնտեսական ապրանքներ և սննդամթերք, որոնք արտադրվում, վերամշակվում և պատրաստվում են տվյալ աշխարհագրական տարածքում՝ ճանաչված նոու-հաու-ի օգտագործման միջոցով

Պահպանվող աշխարհագրական նշում (ՊԱՆ)

Երաշխավորում է աշխարհագրական տարածքի հետ սերտորեն կապված գյուղատնտեսական ապրանքները և սննդամթերքը: Արտադրության, վերամշակման և պատրաստման փուլերից առնվազն մեկը կատարվում է այդ տարածքում:

Պահպանվող երաշխավորված ավանդական արտադրանք (ՊԵԱԱ)

Կարևորում է ավանդական բնույթը արտադրության կազմում կամ միջոցներում:

Օրգանիկ արտադրության

Երաշխավորում է հա-մապատասխանությո ւնը եվրոպական օրգանիկ արտադրանքի ստանդարտներին:

ԵՄ-ն տրամադրում է նաև լավագույն փորձի ուղեցույցներ կամավոր հավաստագրման սխեմաների մասով: Կան բազմաթիվ այսպես կոչված կամավոր սխեմաներ, որոնք գործում են գյուղատնտեսական ապրանքների և սննդամթերքի համար: Ապրանքի կամ դրա արտադրության մեթոդների որոշ ասպեկտներ սահմանվում են արտադրողի կողմից համաձայնեցված մասնագրում, օրինակ՝ Բարեխիղճ առևտրի հավաստագիր սխեմայի ներքո: Բոլոր այս սխեմաները գործում են ի լրումն ԵՄ ընդհանուր պարտադիր շուկայական ստանդարտների:

Հավաստագրման սխեմաների քանակն՝ ըստ ծագման երկրների

Սխեմաների ընդհանուր քանակը=441 (ներառյալ՝ ենթասխեմաները), ԵՄ=424; ոչ-ԵՄ=17



Աղբյուրը. ԵՄ (2009թ.) ‹‹Հավելված Դ. գյուղատնտեսական արտադրատեսակների և պարենամթերքի հավաստագրման սխեմաներ››, Գյուղատնտեսական արտադրատեսակների որակի քաղաքականություն. ազդեցության գնահատում, ԵՄ, http://ec.europa.eu/agriculture/quality/policy/com2009_234/ia_annex_d_en.pdf:

Բացի ԵՄ-ի GMS սխեմաներից, կան նաև առանձին ազգ-պետությունների բազմաթիվ սխեմաներ: Դրանք բաժանվում են ըստ ապրանքների, քաղաքականության ոլորտների, արտադրական գործընթացի, զարգացման գործում ներգրավված գործող մարմնի/ընկերության տեսակի: Բոլոր ԵՄ պետությունները պարտավոր են ընդունել GMS-ը, սակայն կարող են, բացի դրանից, ունենալ այլ՝ այսպես կոչված կամավոր հավաստագրման սխեմաներ: Վերջինս վերագրվում է կամավոր հավաստագրման սխեմաների ԵՄ ուղեցույցներին (որոնց նպատակն է ապահովել լավագույն գործելակերպի մոդելների օգտագործումը):

Հավաստագրման ստուգման պարտականությունները դրված են առանձին պետությունների իշխանությունների վրա: Կան շուկայավարման յուրաքանչյուր փուլում համապատասխանության ստուգումներ կատարելու համար պատասխանատու տեսչական մարմիններ, որոնք ունեն ԵՄ-ում բոլոր մյուս նշանակված մարմինների հետ կապվելու և դրանք համակարգելու համար մեկ պատասխանատու մարմին: Բացի այդ, ցանկացած վաճառվող ապրանք պարտավոր է համապատասխանել GMS-ին և այլ համապատասխան ազգային կանոնակարգերի, և պետք է ունենա համապատասխան ազգային մարմնի կողմից տրված համապատասխանության հավաստագիր: Վաճառվող ապրանքների ստուգումները կատարվում են կանոնավոր ձևով, իսկ ԵՄ ներքին շուկայի համապատասխանության ստուգումները կատարվում են ընտրողաբար՝ հիմնվելով ռիսկերի վերլուծության մեթոդի վրա:

Աղբյուրը. ՏՀԶԿ վերլուծություն:

Արտահանման վարկերի մասով աջակցություն արտահանման երաշխավորման պրոդուկտների միջոցով

Ֆինանսական միջոցների հասանելիությունը ավանդաբար պրոբլեմ է եղել փոքր և միջին ընկերությունների, ինչպես նաև այն ընկերությունների համար, որոնք ներգրավված են բանկերի կողմից դժվար գնահատելի ռիսկային բիզնեսում: ՓՄՁ-ները հաճախ չունեն գրավադրման միջոցներ, և նրանց ֆինանսական կարիքների համար բանկային ծառայությունները դառնում են անհասանելի՝ պայմանավորված այդ ընկերությունների մեծությամբ: Նույնիսկ այն տնտեսվարող սուբյեկտները, որոնք ունեն բանկային լավ պատմություն և գրավի առարկա, կարող են հանդիպել ֆինանսական միջոցների սահմանափակ հասանելիության խնդրին, եթե սկսեն զբաղվել ռիսկային գործարքներով:

Արտահանումը նման գործարքներից մեկն է: Միայն ներքին շուկայում գործող ընկերությունների համեմատ՝ արտահանողները բախվում են է՛լ ավելի շատ ռիսկերի, ինչպիսիք են՝ փոխարժեքի ռիսկերը, ոչ պարտադիր մաքսային գանձումների/ կարգավորումների ռիսկերը, և տրանսպորտի ու լոգիստիկայի ռիսկերը: Սակայն ամենակարևոր ռիսկերն են արտաքին քաղաքական ռիսկերը և ներմուծողի վարկային ռիսկը (արտաքին միջավայրով պայմանավորված՝ դժվար է համոզվել օտարերկրյա ներմուծողի վարկարժանության մեջ): Դրանց ապահովագրումը մասնավոր շուկայում դժվար է և ծախսատար: Այս խնդիրը մասնավորապես սուր է ագրոբիզնեսի ոլորտում, որն ընդհանրապես տուժում է բարձր ռիսկային վարկային պատմությունից:

Պետական հատվածը կարող է իր դերն ունենալ պոտենցիալ շահութաբերություն ունեցող արտահանման ձեռնարկներին աջակցելու հարցում, որոնք մերժվել են մասնավոր վարկային շուկայի կողմից: Շուկայի ձախողման նման օրինակները արդարացնում են կառավարության միջամտությունը:

Կառավարության միջամտությունը կարող է արտահայտվել մի քանի ձևով՝ արտահանման վարկերի երաշխավորման սխեմաներ, արտահանման ապահովագրություն, պետական բանկի կողմից

արտահանման վարկավորում, տոկոսադրույքի սուբսիդավորում և արտահանման ուղղակի սուբսիդավորում: Առաջինը հատկապես արդյունավետ գործիք է, քանի որ այն համահարթեցնում է տրամադրված ռեսուրսները՝ այս կերպ ավելի քիչ ծախսելով պետական հիմնադրամների միջոցները. այն ներգրավում է մասնավոր վարկային շուկան՝ օգտագործելով նրա զարգացած ֆինանսական կարողությունները, և կարող է աջակցել ինչպես տեղական արտահանողներին, այնպես էլ արտերկրյա ներմուծողներին, որոնք տեղի ընկերություններին ապահովում են գործով:

Վերջին ժամանակներս արտահանման վարկային երաշխիքների կիրառման մակարդակը կտրուկ բարձրացել է՝ 2008 թվականի ֆինանսատնտեսական ճգնաժամի, մասնավորապես, միջազգային առևտրի վրա դրա բացասական ազդեցությունների հետևանքով: Արտահանման վարկային գործակալությունների կողմից նոր հանձնառությունները մինչև 2009-ականների կեսերն ընդլայնվել են 30-50%-ով՝ համաշխարհային առևտրի տեսակարար կշիռը ավելացնելով 2008 թվականի՝ 8% ցուցանիշից մինչև 9%-ի 2009 թվականի կեսերին (Ասմունդսոն և այլոք, 2011 թ.):

Արտահանման երաշխավորման պրոդուկտները կարող են աջակցել և՛ տեղական արտահանողներին վարկերի տրամադրման, և՛ օտարերկրյա գնորդներին ֆինանսական աջակցության տրամադրման հարցում

Կան որոշակի առանձնահատկություններ, որոնք պայմանավորում են արտահանման երաշխավորման պրոդուկտների արդյունավետությունը և խնայում պետական գումարները: Վանդակներ 9-ում և 10-ում ներկայացված են Էստոնիայի և Իտալիայի օրինակները, որտեղ երևում են հաջողության գլխավոր պատճառները.

- Հանրային միջոցների հատկացում արտահանման երաշխավորման կապիտալին.
- Մասնավոր հատվածի բանկերի ներգրավում և գործակցություն.
- Հստակ և թափանցիկ կորպորատիվ կառուցվածք, որն ամրապնդվում է մասնավոր հատվածի ֆինանսական փորձ ունեցող նվիրված աշխատուժով.

- Երաշխիքներ կամ ապահովագրական պրոդուկտներ առաջարկող արտահանման ֆինանսավորման գործակալությունը կրթում է իր հաճախորդներին և բարձրացնում իր թիրախային հաճախորդների ֆինանսական գրագիտությունը:

Վանդակ 9. KredEx. Էստոնիայի արտահանման և վարկային երաշխավորման հիմնադրամ

Էստոնիայի կառավարությունը 2001 թվականին ստեղծել է KredEx հիմնադրամը, որն արտահանողներին աջակցող և ՓՄՁ-ների համար ֆինանսական միջոցների հասանելիությունն ապահովող ֆիանասական գործիք է: Զարգանալով՝ KredEx-ը դարձել է մի համապարփակ ֆինանսական խումբ, որի նպատակն է օգնել Էստոնիայի ձեռնարկություններին զարգացման և դեպի արտաքին շուկաներ ընդլայնվելու հարցում՝ նրանց երաշխիքներ, վարկեր, վենչուրային կապիտալ կամ վարկային ապահովագրություն առաջարկելու, ՓՄՁ-ներին բիզնես վարկային երաշխիքներով աջակցելու, ինչպես նաև տեղական գնումների և էներգետիկ արդյունավետության բարելավումների միջոցով:

KredEx-ի հիմնական գործունեության տեսակները բխում են ՓՄՁ-ների, սկսնակ արտահանողների և ռիսկային սոցիալական նախագծերի մասով վարկերի պահանջարկի աճից. հետևաբար, դրա հիմնական գործունեության տեսակներն են՝ 1) զարգացնել ՓՄՁ-ները, 2) խրախուսել արտահանման աճը և 3) աջակցել երիտասարդ ընտանիքներին բնակարանով ապահովման հարցում: Նրա պորտֆելը ներառում է.

- **Արտահանման վարկային երաշխիքներ**. կարող են տրամադրվել արտահանման վարկային երաշխիքների բազմաթիվ տեսակներ՝ կարճաժամկետ ռիսկային երաշխիքներ (վճարման ժամկետները 3-6 ամիս, իսկ գնումներն ընդգրկում են սպառողական ապրանքները և հումքը), երկարաժամկետ ծածկման (կապիտալ ապրանքների համար) և նախաբեռնափոխադրումային ռիսկերի երաշխիքներ (որը ծածկում է իրացումից հաճախորդների դուրս գալու ռիսկը ապրանքն արտադրվելուց հետո): 2013 թվականից KredEx-ն առաջարկում է նաև արտահանման վարկեր Էստոնիայում արտադրված ապրանքների մասով արտաքին գործարքների համար:

- **Սեփական միջոցների հաշվին վարկեր**. հիմնականում նախատեսված են ՓՄՁ-ների համար, որոնք ունեն վաճառքի լավ ցուցանիշներ, սակայն չեն կարողացել գրավով ապահովել բանկի վարկը: Դրանք աջակցում են երկրորդ փուլում գտնվող ընկերությունների (այսինքն՝ ոչ ստարտափերի) բիզնես զարգացմանը և սովորաբար չեն պահանջում գրավ, որի դեպքում վարկը ենթակա է մարման վարկի ժամկետի վերջում: Բանկերը հաճախ պատրաստ են այս վարկերը դիտարկել որպես ընկերության սեփական միջոցներ և ավելի պատրաստակամ են ՓՄՁ-ներին փոխառություն տալու հարցում:

- **Բիզնես վարկերի երաշխիքներ.** սա կարող է գործել երկու ձևով. 1) ներդրումային վարկերի երաշխիքներ կամ երկարաժամկետ երաշխիքներ և 2) շրջանառու կապիտալի վարկային երաշխիքներ կամ կարճաժամկետ երաշխիքներ: Թիրախային ձեռնարկություններն են սահմանափակ գրավապահովում, կարճաժամկետ վարկային պատմություն ունեցող, ինչպես նաև՝ նոր բիզնես բնագավառներում կամ բարձր ռիսկայնության ոլորտներում ներգրավված ձեռնարկությունները:

- **Լիզինգի երաշխիքներ**. նպատակն է օգնել բիզնեսներին կնքել լիզինգի պայմանագրեր մեքենաասարքավորումների մասով:

Տարիներ շարունակ KredEx-ը գործարկել է լավ կառավարվող պորտֆել, որն ընդլայնվել է բավարար իրացվելիություն և կապիտալ ձեռք բերելուց հետո: Այն աշխատում է սերտորեն համագործակցելով այնպիսի միջազգային ֆինանսական հաստատությունների, ինչպիսիք են՝ Եվրոպական ներդրումային հիմնադրամը և Եվրոպական ներդրումային բանկը, ինչպես նաև մի շարք էստոնական վարկային հաստատությունների հետ:

Այս հիմնադրամի հաջողության հիմնական գործոններն են եղել նրա հավատարմությունը շուկայի սկզբունքներին, պետական փողերի ապահովությունը և անկախ ֆինանսական կառույցի արդյունավետությունը:

- Համեմատաբար կարճ ժամանակահատվածում KredEx-ը հաջողությամբ հասել է ֆինանսական կենսունակության առանց ծախսելու պետական միջոցները:
- Այն կայացել է որպես տեղական առևտրային բանկերի և միջազգային ֆինանսական հաստատությունների վստահելի գործընկեր:
- Այն ունի երաշխիքների/վարկերի հաստատման թափանցիկ և արդյունավետ մեխանիզմ, որը շատ հարմար է ՓՄՁ-ների, և պոտենցիալ ստարտափերի և արտահանողների համար:
- Կառավարման կառուցվածքն արտացոլում է մասնավոր հատվածի արդյունավետ ֆինանսական հաստատությունները, և միևնույն ժամանակ այն կատարում է միայն պայմանագրի ժամկետը լրանալուց հետո 24 ամիս հետո մարվող երաշխիքների ապահովման ռիսկերի հավաստի վերլուծություն և սերտ մոնիթորինգ:
  Այն հայտնի է նաև ՓՄՁ հաճախորդներին ֆինանսական և կորպորատիվ խնդիրների մասով վերապատրաստման դասընթացների տրամադրման իր կարողությամբ, այսպիսով՝ ապահովելով վարկերի և երաշխիքների պատշաճ տեղաբաշխումը՝ բիզնեսների հաջողությունը ապահովելու համար:

Աղբյուրը. Չրիչթոն, Դ. (2006 թ.) «Էստոնիայի վարկային և արտահանման երաշխավորման հիմնադրամ» (KredEx), Էստոնիա», ՏՀԶԿ LEED ծրագիր, www.oecd.org/cfe/leed/37963347.pdf; KredEx (2014 թ.), KredEx-ի վեբ կայք. www.kredex.ee/en/ (մուտքը 2014 թ. հուլիսի 25-ին):

Վանդակ 10. SACE. Իտալիայի արտահանման երաշխավորման հիմնադրամ

Իտալիայի արտահանման երաշխավորման հիմնադրամ SACE-ը շուկայում լավագույնը համարվող ֆինանսական երաշխավորման հաստատություն է, որը գործում է տասնամյակներ շարունակ: Սկսած 2004 թվականից այն եղել է սահմանափակ պատասխանատվությամբ բաժնետիրական ընկերություն, որի միակ սեփականատերը *Cassa Depositi e Prestiti* պետական բանկն է (որը հիմնականում Իտալիայի էկոնոմիկայի և ֆինանսների նախարարության սեփականությունն է հանդիսանում):

SACE-ը տրամադրում է տարբեր տիպի խառը ֆինանսական գործիքներ, որոնցից գործող ֆինանսական երաշխիքների 83%-ն առնչվում է ՓՄՁ-ներին: Բացի այդ, այն առաջարկում է արտահանման երաշխիքներ, արտահանման ապահովագրություն և քաղաքական ռիսկերից ապահովագրություն, ակրեդիտիվներ, ֆակտորինգ և պարտատոմսերի թողարկում: Սկսելով հիմնական երաշխիքային պրոդուկտից՝ SACE-ն ընդլայնվել է առաջարկելով յուրաժամանակյա ֆինանսական պրոդուկտների ամբողջական շարք՝ հիմնվելով իր ներքին կարողությունների վրա:

Նրա հաջողությունը ամրապնդվում է հստակ թիրախներով և Իտալիայի տնտեսությանն աջակցելու համար բավարար ռեսուրսներով: Նրա առաքելությունն է աջակցել Իտալիայի արտահանմանը և ՓՄՁ-ներին, սակայն այն միայն տրամադրում է երաշխիքներ, որոնք իրենց հերթին երաշխավորվում են Իտալիայի կառավարության կողմից: Առաջնային ոլորտներն են ենթակառուցվածքները և էներգետիկան, որտեղ այն աշխատում է եվրոպական վարկավորող հաստատությունների հետ, ինչպիսիք են Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎԶԵԲ) և Եվրոպական ներդրումային բանկը (ԵՆԲ): Խառը պրոդուկտները կարող են նկարագրվել հետևյալ կերպ.

- **Ավանդական բիզնես (Իտալիայի արտահանմանն աջակցելու նպատակով)**. 1) արտահանման վարկային ապահովագրություն շուկայի պահանջարկ չունեցող բիզնեսի համար և 2) քաղաքական ռիսկերի ապահովագրություն միջազգայնորեն չկարգավորվող բիզնեսի համար, որի նպատակն է աջակցել իտալական ներդրումներին արտասահմանում քաղաքական ռիսկերի մասով:

- **Նոր շուկաներ** (իտալական ընկերությունների միջազգայնացմանը և Իտալիայի տնտեսության համար ռազմավարական հետաքրքրություն ներկայացնող նախաձեռնություններին աջակցելու համար). 1) միջազգայնացում՝ պահանջարկ ունեցող նոր բիզնեսին աջակցող արտահանում և 2) «շուկայի պատուհան»՝ ենթակառուցվածքների և էներգետիկ ոլորտներում ռազմավարական նախագծերին աջակցող նոր պահանջարկ ունեցող բիզնես:

Հիմնադրամի կարևոր ասպեկտներից են հետազոտական և կրթական ծրագրերը: Դրանք ստեղծվել են ապահովելու իր հաճախորդների պատշաճ կառավարվող

պորտֆելները: Վերապատրաստման և հետազոտական ծառայություններն ապահովում են հաճախորդների համար բարձրորակ բիզնես ծառայությունների հեշտ և մատչելի հասանելիություն, որը բաց շուկայում նրանք իրենց չէին կարողանա թույլ տալ:

- **SACE-ի վերապատրաստման գործառույթը** մեկնարկել է դեռևս 2004 թվականին և արտահանողներին, բանկերին, շահառուներին և ուսանողներին տրամադրում է ուսուցում, ինչպես նաև տեխնիկական աջակցություն: Այս ծառայությունները վճարովի են, սակայն վերապատրաստումը և վճարումները համապատասխանեցվել են հաճախորդի պահանջներին:

- **Հետազոտություն.** տնտեսական հետազոտությունների վարչությունը կատարում է տնտեսական միտումների և համաշխարհային շուկաների վերլուծություն: Ստացված տեղեկատվությունը ոչ միայն սատարում է ներքին կորպորատիվ աշխատանքներին, այլև ակտիվորեն օգտագործվում է վերապատրաստման դասընթացների համար:

Աղբյուրը. ՏՀԶԿ վերլուծություն:

Արտահանման երաշխավորման պրոդուկտները լայնորեն տարածված են արտահանման հաջող փորձ ունեցող երկրներում

Արտահանման երաշխավորման հանրաճանաչության պատճառներից մեկն այն է, որ այն հանդիսանում է արտահանման ֆինանսավորման աջակցության այն ուղղակի մեթոդը, որը թույլատրվում է Առևտրի համաշխարհային կազմակերպության կողմից: Նման պրոդուկտներն ապացուցել են իրենց արդյունավետությունը սահմանափակ պետական ֆինանսական ռեսուրսների հատկացման հարցում: Դրան հակառակ՝ պետության կողմից առաջարկվող բացառապես ապահովագրման մեխանիզմները ավելի մեծ ֆինանսական պարտավորություն են պահանջում: Մասնավոր հատվածի ապահովագրական սխեմաները տուժում են մասնավոր վարկային շուկայի նմանատիպ ձախողումից:

Պարզվել է, որ արտահանման երաշխավորման պրոդուկտները հաջողությամբ մեղմացնում են միջազգային առևտրի քաղաքական ռիսկերը: Մոսերը և այլոք (2006թ.) օգտագործել են Գերմանիայի Euler Hermes արտահանման վարկային գործակալության արտահանման վարկային երաշխիքների խմբային տվյալները, որպեսզի ցույց տան, որ ներմուծող երկրում քաղաքական ռիսկի առկայությունն ակնհայտորեն

խոչընդոտ է արտահանման շուկաների օպտիմալ գործունեության համար, և որ 1991-2003 թվականներին այն վիճակագրական առումով բացասական ազդեցություն է ունեցել Գերմանիայի արտահանման վրա: Նրանք նաև պարզել են, որ Գերմանիայի հանրային գործակալության կողմից տրամադրված արտահանման վարկային երաշխիքներն ունեցել են կարևոր դրական և զգալի ազդեցություն արտահանման վրա: Գնահատվել է, որ արտահանման երաշխիքների արտահանման բազմարկիչը դրական է և մեծ է մեկից, ինչը նշանակում է, որ երաշխիքների վրա ծախսված ամեն մի եվրոն ավելի քան համամասնական աճ է վերադարձրել արտահանման մասով, այսինքն՝ երաշխավորված արտահանումը ստեղծում է հետագա արդյունքներ առանց ապահովվելու արտահանման վարկային գործակալության կողմից:

Նույն կերպ, Բադինգերը և Ուրլը (2012թ.) տրամադրել են Ավստիայի արտահանման վարկային գործակալության կողմից արտահանման վարկային երաշխիքային պարտավորությունների տնտեսական գնահատում՝ օգտագործելով 178 ավստրիական արտահանող ընկերությունների 2008թ. վիճակագրական տվյալներն ընկերության մակարդակով: Նրանք պարզել են, որ արտահանման վարկային երաշխիքների օգտագործման արդյունքում տնտեսապես և վիճակագրորեն եղել են զգալի ազդեցություններ, և որ դրանք կազմել են այդ ընկերությունների արտահանման 80-100%-ով աճ՝ կախված այնպիսի փոփոխականներից, ինչպիսիք են՝ ընկերության մեծությունը, եկամտային ռիսկերի ազդեցությունը, կամ բազմազգ ընկերության մաս լինելը կամ հետազոտության և զարգացման (Հ&Զ) ինտենսիվությունը:

ԳԼՈՒԽ 3. ԲԱՑԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՈՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս գլուխը ներկայացնում է միջազգային լավ գործելակերպի և Հայաստանի ներկա գործելակերպերի միջև առկա բացերի հակիրճ վերլուծությունը, և Հայաստանի քաղաքականություն մշակողներին տալիս քաղաքականության մասով կառուցողական առաջարկություններ այն մասին, թե ինչպես է պետք արձագանքել ագրոբիզնեսի ոլորտի՝ արտահանման շուկաներ մուտք գործելու ցանկություն ունեցող վերամշակող ընկերությունների մարտահրավերներին: Առաջարկվում է.

- Զարգացման հայկական գործակալությունը դարձնել արտահանման խթանման գործակալություն՝ նոու-հաու ձևավորելու, Հայաստանի ագրոբիզնեսի ոլորտի վերամշակող ընկերություններին ուսուցանելու և որպես հայկական ապրանքների խորացված մարքեթինգային գրասենյակ հանդես գալու համապարփակ մանդատով:
- Հիմնել վերամշակված գյուղատնտեսական ապրանքների կենտրոնացված պահեստ՝ համապատասխան մթերանոցով և լոգիստիկ կառույցներով, ինչպես նաև՝ մեկ պատուհանի սկզբունքով ապրանքների դասակարգման և հավաստագրման ծառայություն: Այն կարող է ծառայել նաև որպես մեկ պատուհանի սկզբունքով մաքսային կետ՝ հայկական ապրանքներն օտարերկրյա գնորդներին արտահանելու նպատակով:
- Աջակցել նորաստեղծ՝ Արտահանման ապահովագրական գործակալության պիլոտային ծրագրին՝ խրախուսելով մասնավոր բանկերի գործակցությունը, ապահովելով ոլորտային ռիսկերի վերլուծության հաջողված գործելակերպերի կայուն կիրառումը, մեծացնելով կապիտալը, եթե ապահովվել է հաջողված գործարքների նվազագույն շեմը և ընդլայնել առաջարկվող պրոդուկտների ցանկը՝ ներառելով վարկային երաշխիքները և շրջանառու միջոցների համալրման վարկերի երաշխիքները: Սա պետք է անել *ՏՀԶԿ-ի արտահանման վարկերի տրամադրման կարգի պահանջների համաձայն:*

Ինչպես նշվել է Գլուխ 2-ում, հաջողության հասած արտահողներին որպես կանոն աջակցում են համապարփակ պետական քաղաքականությունները: Արդյունքում ստացվում են պետական աջակցությամբ մարքեթինգային նախաձեռնություններ, համապատասխան ենթակառուցվածք և ֆինանսական միջոցների հասանելիության բարելավում: Երկրի մակարդակով և ընկերությունների մակարդակով իրականացվող մարքեթինգային աշխատանքները երաշխավորում են արտահանվող ապրանքների մասին ներմուծողների իրազեկվածությունը թիրախային շուկաներում, և նմանապես՝ արտահանողների իրազեկվածությունը թիրախային շուկաների մասին: Արտահանման ենթակառուցվածքը այն ֆիզիկական ենթակառուցվածքն է, որն անհրաժեշտ է փոխադրումը և սահմանները կտրելը դյուրացնելու համար, ինչպես նաև արտահանողների համար կարգավորման բարենպաստ միջավայրը: Արտահանման նպատակով ֆինանսական միջոցների հասանելիությունը սատարվում է պետական հատվածի կողմից:

Այս առնչությամբ, սույն զեկույցում առաջարկվում է գործողությունների մի համախումբ՝ քաղաքականության մշակման երեք կարևոր բացերը փակելու և Հայաստանի ագրոբիզնեսով զբաղվող ՓՄՁ-ների արտահանման ջանքերին զարկ տալու համար: Առաջին՝ ցանկալի է ունենալ արտահանման խթանմանն ուղղված հեռահար մարքեթինգային միջոցառումներ: Դրանք պետք է իրականացվեն որպես արտաքին շուկաների վերաբերյալ նոու-հաուի հավաքմանը, արտահանմանն առնչվող հմտությունների մասով վերապատրաստման տրամադրմանը, և ընդհանուր առմամբ՝ Հայաստանի ապրանքների և մասնավորապես՝ վերամշակված սննդամթերքի մասով համապարփակ մարքեթինգային քարոզարշավի ձևավորմանն ուղղված միջոցառումների համախումբ: Երկրորդը մեկ միասնական պահեստի լոգիստիկ կառույցի ստեղծումն է Հայաստանի արտահանման ենթակառուցվածքն ընդլայնելու նպատակով, որտեղ արտահանողները կկարողանան օգտվեկ մաքսային և հավաստագրման մեկ պատուհանից՝ իրենց ապրանքները նախքան արտահանումը դասակարգելու և հավաստագրելու համար: Վերջապես՝ արտահանման նպատակով ֆինանսական միջոցների հասանելիությունը պետք է ընդլայնվի արտահանման ապահովագրումն ընդլայնելու միջոցով՝ պետական երաշխիքներ տրամադրելով արտահանողներին: Դա կօգնի

ընկերություններին բարելավել իրենց կապիտալի բազան և նվազագույնի հասցնել միջազգային գործարքների ռիսկը: Հարկ է այդ ամենը կազմակերպել *ՏՀՋԿ-ի արտահանման վարկերի տրամադրման կարգի պահանջների* համաձայն (ՏՀՋԿ, 2014թ): Գծապատկեր 16-ում ամփոփվում են այս առաջարկությունները և վերջիններիս կապակցում Գլուխ 1-ի վերջին բաժնում նկարագրված մարտահրավերներին:

Գծապատկեր 16. Մարտահրավերների և առաջարկությունների ընդհանուր նկարագրություն



Աղբյուրը. ՏՀՋԿ վերլուծություն:

Այս առաջարկությունները բխում են Հայաստանում գյուղմթերքի վերամշակման ոլորտի վիճակի և, մասնավորապես, արտահանմանն առնչվող հիմնախնդիրների խորքային վերլուծությունից: Դրանք հաստատվում են այս ոլորտի գործադիր տնօրենների շրջանում ՏՀՋԿ-ի և ԻԿի Քոնսալթինգի կողմից կատարված ուսումնասիրությամբ, որի ընթացքում հարցվողներից պահանջվել է վերհանել կառավարության աջակցության այն կարևորագույն ոլորտները, որոնք կկարողանային խթանել վերամշակված սննդամթերքի արտահանումը (տե՛ս Հավելված 1-

ը): Կարևոր համարվող՝ պետական քաղաքականության միջամտությունները բերված են Գծապատկեր 17-ում:

Գծապատկեր 17. Կառավարության աջակցության մասով առաջարկվող ագրոբիզնեսի արտահանման ոլորտները

գնահատված գումարային տեսակարար կշիռ



Աղբյուրը. Հայաստանի ագրո-վերամշակողների հարցախույզ (Հավելված 1)

Զեկույցում առաջարկվող քաղաքականության բոլոր գործիքներն ըստ էության գնահատվել են աղյուսակի ամենաբարձր տեղերում: Բացի կրթական բարեփոխումից, որն այս զեկույցի շրջանակներից դուրս է, կառավարության ամենաառաջնային հինգ միջամտությունները (թիրախային արտաքին շուկաների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման բարելավում, մաքսային և հավաստագրման ընթացակարգերի օպտիմալացում, արտահանման նպատակով ֆինանսավորման բարելավում, ազգային բրենդի ստեղծում, արտահանման ենթակառուցվածքների բարելավում) համապատասխանում են այստեղ նկարագրված հիմնական առաջարկություններին:

Բարելավել արտահանման խթանումը և տարածել արտահանման հմտությունները

Գնահատում. սահմանափակ մարքեթինգային նախաձեռնություններ

Հայաստանի ագրոբիզնեսի ոլորտի արտահանողները չափազանց կենտրոնացված են մի քանի ոլորտներում: Ալկոհոլային խմիչքները շարունակ կազմել են ագրոբիզնեսի ոլորտի արտահանման ծավալների ավելի քան 70%-ը՝ արժեքային արտահայտությամբ: Նույն ձևով արտահանման ավելի քան 25%-ը՝ արժեքային արտահայտությամբ ընդհանուր առմամբ ստացվում է դեպի Ռուսաստան և ԱՊՀ երկրներ արտահանումից: Արտահանողների արձագանքները ցույց են տալիս, որ արտահանման աշխարհագրական դիվերսիֆիկացիան պետք է առաջնային լինի: Պոտենցիալ ՓՄՁ արտահանողներից ստացված պատասխանները ցույց են տալիս, որ նրանք շատ քիչ բան գիտեն արտաքին շուկաների մասին:

Արտահանման և ներդրումների խթանման գործող հաստատությունը՝ Զարգացման հայկական գործակալությունը արդեն իսկ զբաղվում է որոշակի մարքեթինգային գործունեությամբ: Այն մասնակցել է մի շարք առևտրային տոնավաճառների և աշխատել է միջազգային փորձագետ գործընկերների հետ, ինչպիսիք են՝ Միջազգային ֆինանսական կորպորացիան (ՄՖԿ)՝ արտահանման խթանման գործունեության մասով. աշխատանքներից մեկն է եղել, օրինակ, արտահանման ընթացակարգերի առցանց քարտեզը:

Այնուհանդերձ, այն պետք է տրամադրի ավելի բազմակողմանի ծառայություններ: Քանի որ ագրոբիզնեսի վերամշակման ոլորտի արտահանողները ձգտում են ընդլայնվել դեպի նոր շուկաներ, իսկ պոտենցիալ ՓՄՁ արտահանողները ձգտում են մուտք գործել արտահանման շուկաներ, ապա նրանց պետք են խոր գիտելիքներ պոտենցիալ գնորդների, այն կարգավորման դաշտի մասին, որտեղ գործում են շուկաները, և ներդրումներին ուղղված ջանքերի վերաբերյալ՝ դրանք հաջողությամբ արտահանելու նպատակով:

Հարկ է, որ արտահանման խթանման բարեփոխված գործակալությունը մասնակցի երկրի սյուժետային գծի և բրենդի

ստեղծմանն ու առաջ մղմանը: Այնուհետև կախված արտահանման ռազմավարությունից՝ կարելի է ստեղծել նաև առանձին ոլորտի կամ արտադրանքի հովանոցային բրենդ: 2014 թվականի մարտի դրությամբ ՀՀ կառավարությունը պատվիրել է բրենդավորման և գովազդային գործակալություններին՝ GK Brand-ին և Cundari-ին, մշակել առաջին ազգային բրենդը: Այս նախաձեռնությունը դեռ սկզնակ փուլում է, սակայն ճիշտ ուղղությամբ կատարված քայլ է, եթե նույնիսկ այն գլխավորապես նպատակաուղղված է զբոսաշրջության խթանմանը: Դեռևս չկա Հայաստանի բարձրարժեք վերամշակված մրգերի ու բանջարեղենի գովազդման հատուկ ոլորտային/արտադրանքի քարոզարշավ:

Ելնելով Հայաստանի նախորդ փորձից՝ հարկ է, որ բրենդավորման այս աշխատանքներին սեփական նախաձեռնությամբ իր աջակցությունը բերի մասնավոր հատվածը: Նախկինում մի քանի փորձեր են արվել ստեղծելու առանձին ապրանքային բրենդ: Պանիր արտադրող մասնավոր ընկերությունները՝ Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոնի (CARD) օժանդակությամբ, որը ԱՄՆ գյուղդեպարտամենտի կողմից հիմնադրված և ֆինանսավորվող ոչ պետական կազմակերպություն է, իրենց նախաձեռնությամբ ստեղծել են *Հայկական պանիր* բրենդը: Սկզբնական փուլում այս նախաձեռնությունը որոշ հաջողություն ունեցավ, որից հետո այս աշխատանքները իր վրա վերցրեց Զարգացման հայկական գործակալությունը, որը փորձ արեց ընդլայնելու բրենդի աջակցման շրջանակը, սակայն չկարողացավ ներգրավել ավելի շատ մասնավոր հատվածի ներկայացուցիչներ: Ամբողջությամբ մասնավոր հատվածի նախաձեռնությամբ իրականացված ավելի հաջողված փորձ էր «*պատրաստված է Հայաստանում*» բրենդը, որը ստեղծեցին տեքստիլի մանրածախ արտադրողները:[2] Այս նախաձեռնություններից քաղած կարևոր դասը այն է, որ հարկ է կիրառել «ներքևից վերև» մոտեցում, երբ մասնավոր հատվածը լիարժեքորեն ընդգրկված է բրենդի ստեղծման ու խթանման գործընթացում: Միայն այս կերպ ազգային կամ ապրանքային բրենդը կարող է լիարժեք աջակցություն ստանալ և ճանաչվել Հայաստանի գյուղմթերք արտադրողների և վերամշակողների գործարար համայնքի կողմից:

Գինեգործության ոլորտը որոշ քայլեր է կատարել ոլորտի հովանոցային բրենդ և մարքեթինգային ռազմավարություն մշակելու

ուղղությամբ՝ ի սկզբանե ներառելով մասնավոր հատվածին: Գինեգործությունը որպես գերակա ոլորտ ընդգրկվել է ՀՀ կառավարության՝ 2011 թվականին հաստատված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության մեջ (ԻՎի Քոնսալթինգ, 2013թ.): ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը ծրագրում է մարքեթինգային արշավի և *Հայկական գինիներ* ոլորտային բրենդի միջոցով մինչև 2020 թվականը եռապատկել գինու արտահանման ծավալները: Հաշվի է առնվել այս նախաձեռնության վերաբերյալ գինեգործների կարծիքը, ինչպես նաև աշխատանքներ են տարվել, որպեսզի բրենդի ուղերձը համապատասխանի ապրանքի իրականությանը: Եթե բրենդը շեշտադրում է ապրանքի գերազանց որակը, ապա հարկ է, որ համապատասխան քայլեր ձեռնարկվեն, որպեսզի ապրանքներն իրոք բարձրորակ լինեն: Ահա թե ինչու *Հայկական գինիներ* ծրագրով բացված բրենդի ներքո ընդգրկված գինու որակի մշտադիտարկման լաբորատորիա: Ինչպես և երկրի բրենդի պարագայում է, գինու ոլորտի մարքեթինգային աշխատանքները դեռ մշակման փուլում են:

Ստորև ներկայացվում են արտահանման խթանման ձեռնարկումների և գործիքների միջոցով մարքեթինգային համապարփակ ջանքերի ձևավորման համար անհրաժեշտ քայլերը.

Գործողություն 1. Բարելավել և արդիականացնել գործող մարքեթինգային գործելակերպերը՝ երկրի/ապրանքի բրենդի ստեղծմանն ու կայացմանը աջակցելու նպատակով

Մարքեթինգային ջանքերը պետք է ամենաբարձր մակարդակով կազմակերպվեն սյուժետային գծի և երկրի բրենդի շուրջ, և հաջորդիվ տրոհվեն ոլորտին/ապրանքին ներհատուկ գովազդային մոդելների: Կարևոր է մշակել սյուժետային գիծ Հայաստանի և հայկական ապրանքների մասին (օրինակ՝ հայկական ապրանքներն ունեն բնության կողմից տրված բարձր որակ և օրգանական են՝ պայմանավորված երկրի արևաշատ կլիմայով և մաքուր հողով), որն ուսուցողական կլինի թիրախային շուկաների համար: Սյուժետային գիծը հիշարժան դարձնելու համար պետք է մշակել մեկ միասնական բրենդ: Ներկայումս GK Brand-ի և Cundarai-ի կողմից կատարվող աշխատանքը պետք է շարունակել և հաջող ավարտի հասցնել՝ միաժամանակ չմոռանալով հաջողության նախապայմանների մասին. մարքեթինգային արշավի բոլոր փուլերում

մասնավոր հատվածի ներգրավում և հավաստիացում, որ մարքեթինգային ուղերձը համապատասխանում է առաջարկվող ապրանքների իրականությանը:

Այնուհետև, երկրի բրենդի շուրջ պետք է իրականացվեն կոնկրետ հայկական ապրանքների գովազդման մի շարք մարքեթինգային միջոցառումներ: Վերամշակված մրգերը և բանջարեղենը կարող են հանդես գալ որպես հնարավոր լավ մեկնարկային կետ: Պարենային ապրանքների միասնական բրենդավորումը ոչ միայն ավելի հեշտ է, քանի որ այտեղ շեշտադրվում են որակն ու համը, այլև հնարավոր է նաև այդ պարենային ապրանքները տարանջատել աշխարհագրական և կլիմայական հիմքերով: Նույն կերպ կարելի է ընդգծել Հայաստանի վերամշակված սննդամթերքի հաջողության պատմությունը, երբ Հայաստանը երկար տարիներ իր ապրանքներն է մատակարարել նախկին Խորհրդային Միության և մերձակա տարածաշրջանի երկրներին: Կարելի է ոգեշնչվել ներկայումս հայկական գինու բրենդի մշակման ուղղությամբ տարվող աշխատանքներից:

Գործողություն 2. Հավաքել տվյալներ և տեղում գիտելիք ձևավորել օտարերկրյա շուկաների և պոտենցիալ օտարերկրյա գնորդների մասին

Արտահանման խթանման գործակալությունը պետք է լինի ուսուցողական կենտրոն: Սա նշանակում է ձևավորել շուկայի մասին գիտելիքներ երկու ուղղությամբ՝ ոլորտային և ապրանքային: Օտարերկրյա շուկաների մասին առկա և հեռանկարային գիտելիքները պետք է բաժանել ըստ երկու ոլորտների: Հաջորդիվ այն պետք է տրոհել ըստ արտադրատեսակների: Արտահանումն ուղղորդվում է պահանջարկով, և Հայաստանի արտադրողները պետք է վստահ լինեն, որ իրենք կարող են հարմարվել այդ շուկաների կարգավորումներին և ապահովել որակին առաջադրվող պահանջները, հարմարվել այդ շուկաներում պահանջված ապրանքների մասնագրերին և միտումներին: Ապրանքների առանձին տեսակները կարևորելն էական է, քանի որ յուրաքանչյուր ապրանք ունի առանձին բնութագրիչներ մատակարարման շղթայում: Փաթեթավորումը, սառեցումը, տրանսպորտի տեսակը, մթերման օրերի քանակը և այլն՝ բոլորը կախված են ապրանքների առանձնահատկություններից:

Վերամշակված պարենամթերքի շուկաների հետազոտությունների պիլոտային կենտրոնը կարող է ուղղություն ցույց տալ՝ ստեղծելով արտահանման խթանման գործակալության ուսուցողական վարչություն: Վերամշակված սննդամթերքի շուկաների վերաբերյալ գիտելիքները և շուկայի մասով հետազոտական տվյալները պետք է հաջորդիվ տարբերակել ըստ վերամշակված մթերային ապրանքատեսակների, ինչպիսիք են, օրինակ՝ չիրը (ծիրան, պռմիդոր և այլն), մրգահյութը և այլն: Այս ապրանքների պահանջարկն օտարերկրյա շուկաներում ունի տարբեր միտումներ, սեզոնային ռիսկերը նրանց վրա տարբեր կերպ են ազդում, և տարբեր են պահեստավորման և բեռնափոխադրման մեթոդներն ու ծախսերը. հետևաբար արտահանողները պետք է համապատասխանաբար տեղեկացված լինեն:

Գործողություն 3. Առկա և պոտենցիալ արտահանողներին կրթել միջազգայնացման առանձնահատկությունների վերաբերյալ

Շուկայի հետազոտության արդյունքում ստացված տվյալները և արտահանման խթանման գործակալությունում ձևավորված մարքեթինգային փորձը պետք է փոխանցվեն գործող և հեռանկարային արտահանողներին: Հարկ է օգտվել տեղեկատվության տարածման երեք հիմնական ուղիներից՝ հիմնվելով Արտահանման խթանման գործակալության երկու գլխավոր հաճախորդների վրա:

Գլխավոր հաճախորդներն են.

- ներկայիս արտահանողները, որոնց հավելյալ գիտելիքներ են անհրաժեշտ նոր շուկաների և այնտեղ մուտք գործելու եղանակների մասին,
- արտահանմամբ չզբաղվող այն հայրենական ընկերությունները, մասնավորապես՝ ՓՄՁ-ները, որոնց պետք է աջակցել նրանց բիզնես իրազեկվածությունը և բիզնես գործելակերպերը բարելավելու նպատակով: Հարկ է, որ նրանք սովորեն, թե ինչպես է պետք նախապատրաստվել և մուտք գործել արտահանման շուկա:

Հարկ է ունենալ տեղեկատվության տարածման հետևյալ ուղիները.

1. **Առցանց հարթակ**, որը տրամադրում է ինտերակտիվ և համապատասխանեցված տեղեկատվություն ծախսարդյունավետ եղանակով: Այն պետք է համապատասխանի օտարերկրյա ներմուծողների, ինչպես նաև տեղական ինքնաբավ արտահանողների տարբեր կարիքներին:

2. **Թղթային տարբերակով հաշվետվություններ,** որոնք պետք է հասանելի դարձվեն տեղական և օտարերկրյա տնտեսվարողներին՝ բաժանելով դրանք առևտրի տոնավաճառներում և կառավարություն-բիզնես մերձեցման միջոցառումներում, պետք է առաքվեն ըստ պահանջի կամ փոխանցվեն արտահանման կարողություններ ունեցող թիրախային տեղական ընկերություններին:

3. **Ոլորտային աշխատաժողովներ և համաժողովներ**, ինչպես նաև՝ ՓՄՁ-ների համար հատուկ կազմակերպված վերապատրաստման միջոցառումներ, որոնց ընթացքում արտահանումը պետք է ակտիվորեն խթանվի՝ որպես տեղական շուկայի կենսական հավելում կամ այլընտրանք: Արտահանման խթանման գործակալության մասնագետները պետք է ստանձնեն չարտահանող ընկերություններին արտահանման ռիսկերի, կապիտալին և հաշվեկշռին առաջադրվող պահանջների, այդ ձեռնարկումները սատարող գործող մարմինների և թիրախային շուկաների պահանջների մասին բացատրելու դերը: Սա համապատասխանում է այն ընդհանուր պատկերացմանը, ըստ որի չարտահանող ընկերությունները և հատկապես՝ ՓՄՁ-ները պետք է «ձեռք ձեռքի տված» հանդես գան բիզնես ուսուցման գործընթացում: Հաղորդակցության այս ուղում առանցքային դեր կարող է կատարել Հայաստանի առևտրի պալատը, որն արդեն իսկ ունի նման միջոցառումների կազմակերպման փորձ: Պալատը նաև ունի գործընկեր հաստատությունների լայն կապեր արտասահմանում և կարող է օժանդակել թե՛ կրթությանը և թե՛ մարքեթինգային աշխատանքներին:

Այս ձեռնարկման կայացումից հետո Հայաստանում ապրանքներ ձեռք բերելու կամ Հայաստան ներմուծելու ցանկություն ունեցող օտարերկրյա

ներմուծողները նույնպես կարող են օգտվել մատչելի տեղեկատվությունից և կապերից:

Հաջողության հիմնական գործոններ

- **Կարճաժամկետ.** ինչպես երևում է Գլուխ 2-ից և նկարագրվում Վանդակ 3-ում՝ կարևոր է գնահատել և օգտվել գործող և հեռանկարային արտահանողների համար գործող օժանդակ ծառայություններից: Օրինակ՝ Հայաստանի ՓՄՁ-ներին աջակցող գործակալությունը՝ ՓՄՁ ԶԱԿ-ն, արդեն իսկ, ի թիվս այլ օժանդակող միջոցառումների, ՓՄՁ-ներին տրամադրում է համապատասխանեցված բիզնես վերապատրաստման դասընթացներ և կազմակերպում բիզնես ինկուբատոր հավաքներ: ՓՄՁ ԶԱԿ-ի այս միջոցառումները և նրա անձնակազմի հմտությունները պետք է օգտագործվեն միջոցառումների կրկնորդումներից և միջոցների վատնումից խուսափելու համար: Դրան կարելի է հասանել կա՛մ համատեղ աշխատելով ՓՄՁ ԶԱԿ-ի հետ չարտահանողներին և ՓՄՁ-ներին նախնական բիզնես աջակցության տրամադրման գործում, կա'մ ընդհանրապես նման աշխատանքները պատվիրելով նրանց:

- **Երկարաժամկետ.** Արտահանման խթանման գործակալության մոնիթորինգի և գնահատման մեխանիզմների ձևավորումը շատ կարևոր է: Առաջին հերթին գործակալությունը պետք է ունենա հստակ, չափելի և հասանելի թիրախ՝ իր աշխատանքները այդ թիրախի ձեռքբերմանն ուղղորդելու նպատակով: Վանդակ 11-ում ներկայացված է հնարավոր օրինակներից մեկը:

Վանդակ 11. Արտահանման ընդլայնման չափելի թիրախի օրինակ

Թիրախ. առաջիկա 5 տարիների ընթացքում վերամշակված մրգերի և բանջարեղենի արտահանման ծավալներն ավելացնել 30%-ով: Բացի ներկայիս հիմնական արտահանման երկրներից, ընդլայնել արտահանման երկրների քանակը (նշել թիրախային երկրները): Չափել արտահանման աճը ներկա և թիրախային արտահանման երկրներում:

Ենթաթիրախներ.

1) կատարել խորքային շուկայական վերլուծություններ առաջնային 15 արտահանման երկրների վերաբերյալ
2) կազմել այդ երկրներում հիմնական թիրախային գնորդների տվյալների բազա
3) ներդնել առցանց ինտերակտիվ ուսուցողական գործիք
4) պատրաստել հետազոտված արտահանման թիրախային երկրների վերաբերյալ հաշվետվություն՝ թղթային տարբերակով
5) կիսամյակային կտրվածքով կազմակերպել արտահանման ուղղվածությամբ բիզնես ծրագրերի թեմայով երկու ներքին դասընթաց և ապահովել ակտիվ մասնակցություն
6) տարեկան կտրվածքով Հայաստանի տարբեր մարզերում կազմակերպել առնվազն երեք սեմինար նվիրված արտահանման խթանմանը՝ որպես տեղական ՓՄՁ-ների համար կենսական նշանակության բիզնես տարբերակ:

Կանոնավոր հիմունքներով գործող մոնիթորինգի հանձնաժողովը պետք է գնահատի առաջարկված թիրախների մասով գրանցված առաջընթացը և ապահովի համապատասխան ռեսուրսների հատկացումը: Գործակալության բյուջեն պետք է կապել կատարողականի հետ և համապատասխանեցնել ձեռք բերված թիրախներին և ապագայի պահանջներին:

Գծապատկեր 18-ում ներկայացվում է Հայաստանի արտահանման խթանման գործակալության հնարավոր զարգացումը՝ վերը նկարագրված գործողություններին համապատասխան:

Գծապատկեր 18. Արտահանման խթանման գործակալության հնարավոր ձևանմուշ

Աղբյուրը. ՏՀԶԿ վերլուծություն

Բարելավել մաքսային ընթացակարգերը, հավաստագրումը և արտահանման ենթակառուցվածքը

Վերամշակված մրգերն ու բանջարեղենը, մասնավորապես մրգի չիրը, կարելի է անմիջապես պահուստավորել կենտրոնացված պահեստում: Պահածոյացված, տարրաներում լցված մրգերն ու բանջարեղենը, ինչպես նաև հյութերն ու ջեմերը ավելի ուշ փչացող են, սակայն վերամշակողները նշել են, որ հիմնախնդիրներ կան կապված ոլորտի հատվածական բնույթի և հետաքրքրված գնորդների պահանջած մեծ քանակները ապահովել չկարողանալու հետ: Միասնական պահեստը կարող է լինել նաև շուկա (ինչպես Flora-Holland ծաղկի շուկայի պարագայում է՝ նկարագրված Վանդակ 7-ում), որտեղ շահագրգռված գնորդները կարող են գնել մի քանի փոքր արտադրողներից հավաքված մեծ քանակներ: Ապրանքները կարող

է ստուգվել տեղում՝ հավատարմագրման մարմնի աշխատակիցների կողմից և ներառվել կառավարության հովանու ներքո գործող միասնական բրենդի տակ: Այս կերպ հայրենական արտադրանքները համախմբելը ենթադրում է առանձին ընկերությունների բրենդի կորուստ, սակայն դա պետք է լինի մինիմալ, քանի որ Հայաստանում մրգեր ու բանջարեղեն վերամշակողների հիմնախնդիրն առաջին հերթին սահմանափակ կապերն ու Ռուսաստանի և ԱՄՆ երկրների կենտրոնացված շուկաներից դուրս իրենց բրենդերի մասին անտեղյակությունն է: Միասնական պահեստը նախատեսված է լուծելու արտադրության հատվածականության խնդիրը, փոքր արտադրողներին հնարավորություն ընձեռելու հասնել այն գնորդներին, ովքեր պահանջում են խոշոր քանակների կանոնավոր մատակարարում և, որ ամենակարևորն է, այն կարող է լինել այնպիսի շուկաներ մուտքի առաջին կետը, որոնք մինչ այժմ փակ են եղել հայկական վերամշակված գյուղմթերքի համար:

Ավելին, արտադրողների, վերամշակողների, առևտրականների, մանրածախ և արտաքին գնորդների փոխշփման համար մեկ շուկա ապահովելը կարող է զարկ տալ ցանց ստեղծելու հնարավորություններին և տարածել գիտելիքն ու նորարարությունը, ինչպես նաև տեխնոլոգիական փոխանցումը:

Գլուխ 2-ում ներկայացված միջազգային գործելակերպերը ցույց են տալիս, որ արտահանմանն առնչվող փաստաթղթային ձևակերպումները և ենթակառուցվածների ինտեգրումը այսպես կոչված «մեկ պատուհան»-ում կարող է լինել արդյունավետ եղանակ Հայաստանից ագրոբիզնեսի ոլորտի ապրանքների տեղափոխման գործընթացն արդիականացնելու և բարելավելու համար:

Գծապատկեր 19-ում ամփոփ ներկայացվում են պետական հատվածի և արտահանողների համար մեկ պատուհանի սկզբունքով մաքսային գործընթացի միջոցով արտահանման փաստաթղթային ձևակերպումների բարելավման առավելություններից մի քանիսը:

Գծապատկեր 19. Մաքսային բարեփոխման առավելությունները

Մեկ պատուհանի սկզբունքով մաքսային ընթացակարգի օգուտները
<u>*Կառավարության համար.*</u> - Ստույգ հասույթներ - Առևտրային ընկերության կողմից պահանջների կատարման բարելավում - Հնարավորություն տալ օգտագործել ռիսկերի կառավարման կայացած մեթոդներ վերահսկման և կիրարկման նպատակներով - Ռեսուրսների առավել էֆեկտիվ և արդյունավետ օգտագործում <u>*Առևտրային ընկերությունների համար.*</u> - Միասնական շուկայով պայմանավորված՝ կապերի ստեղծման դրական ազդեցություններ - Ավելի արագ մաքսազերծում և ապրանքների բացթողում - Ավելի քիչ ուշացումներ և ավելի փոքր ծախսեր - Դիմելու կանխատեսելի գործընթաց և կանոնների պարզաբանում - Ռեսուրսների առավել էֆեկտիվ և արդյունավետ օգտագործում

Աղբյուրը. ՏՀԶԿ վերլուծություն

Հայաստանի ենթակառուցվածքի բարելավման համար միջազգային դոնորական համայնքն առաջարկում է իր լայնածավալ աջակցությունը: ԵՄ հարևանության ներդրումային գործիքը (ՀՆԳ) մի ֆինանսական մեխանիզմ է, որը նախատեսում է լրացուցիչ ֆինանսական միջոցների մոբիլիզացում ԵՄ հարևան տարածաշրջաններում տրանսպորտի, էներգետիկայի, բնապահպանական և սոցիալական ոլորտներում անհրաժեշտ ներդրումներ կատարելու համար: Հայաստանը մասնակցում է այս նախաձեռնությանը՝ լինելով Արևելյան հարևանության տարածաշրջանի մաս: Օրինակ՝ Հայաստանը օգտվել է Եվրոպական ներդրումային բանկի 25.5 միլիոն եվրո ներդրումից, որը նախատեսված է գյուղական համայնքներում ջրամատակարարման ենթակառուցվածքների հիմնանորոգման համար, իսկ 5.2 միլիոն եվրո ուղղվելու է Երևանի ջրամատակարարման ենթակառուցվածքի բարելավմանը: Երկու ներդրումների մասով ԵՄ ՀՆԳ-ի շրջանակներում տրամադրվել է տեխնիկական աջակցություն: ՀՆԳ-ն նաև աջակցում է մասնավոր հատվածին՝ ՓՄՁ-ներին ուղղված ռիսկային կապիտալի գործառնությունների միջոցով: (ԵՄ ԵՀՔ՝ http://www.enpi-info.eu/index.php, մուտքը՝ 24-ը սեպտեմբերի, 2014թ):

Միասնական պահուստավորման ենթակառուցվածքի կառուցումը ու շուկայի ստեղծումը՝ համալրված մրգերի ու բանջարեղենի վերամշակման

թվային տեխնոլոգիաներով, համահունչ է այս ծրագրին, և Հայաստանի քաղաքականության պատասխանատուները կարող են և պետք է համատեղեն քաղաքականության մասով տրամադրվող խորհրդատվությունն ու գիտելիքները և առաջարկվող ֆինանսական օժանդակությունը:

Գնահատում. Արտահանմանն առնչվող ոչ բավարար մաքսային ընթացակարգեր և ենթակառուցվածք

Աշխարհագրական առումով Հայաստանն ունի սահմանափակումներ, ինչպես նկարագրվել է Գլուխ 1-ում: Հայաստանը ծովային ելք չունեցող երկիր է, որտեղ գործում են արտահանման միայն երկու ճանապարհներ՝ Վրաստանի հետ հյուսիսային սահմանով և Իրանի հետ հարավային սահմանով: Կարևոր է բարելավել արտահանման ճանապարհները և դյուրացնել հայկական ապրանքների մուտքն արտաքին շուկաներ՝ տեղական ենթակառուցվածքը հնարավորինս բարելավելու միջոցով: «Գործարարությամբ զբաղվելը» վերջին հաշվետվության համաձայն (Համաշխարհային Բանկ, 2013թ.)՝ այսօր արտահանողներից միջինը 16 օր է պահանջվում ապրանքները երկրից դուրս հանելու համար՝ Թուրքիայի 13 օրվա և Վրաստանի՝ 9 օրվա համեմատ:

Երկիրն արդեն իսկ սկսել է մաքսային ընթացակարգերի և արտահանմանն առնչվող ենթակառուցվածքների բարելավման գործընթաց: Այս առումով՝ Հայաստանն ավելի առաջ է, քան որոշ ԱՊՀ երկրներ, ինչպիսիք են Բելառուսը և Ռուսաստանը: Բայցևայնպես, բարելավման տեղ կա, մասնավորապես, տարածաշրջանի այլ երկրների՝ օրինակ Վրաստանի և Թուրքիայի և Արևելյան Եվրոպայի որոշ երկրների համեմատ, որոնք նոր են միացել ԵՄ-ին:

Ներկայումս նախատեսվում են ավտոմոբիլային և երկաթուղային ճանապարհների ցանցի զգալի բարելավումներ: Որոշ ծրագրերով արդեն իսկ իրականացվում է շինարարություն Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի շրջանակներում: Այն մեծ մայրուղու կառուցում է, որը նախատեսում է կիսով չափ նվազեցնել ճանապարհի վրա ծախսվող ժամանակը և կրկնապատկել Հայաստանի արտահանման կարողությունները մինչև 2017թ. (EastInvest.eu, 2014թ.): Այս ծրագիրն աջակցություն է ստանում Ասիական զարգացման բանկի, Ճապոնիայի

միջազգային համագործակցության գործակալության (ՃՄՀԳ) և Եվրոպական Միության կողմից՝ Եվրոպական ներդրումային բանկի միջոցով:

Լոգիստիկայի ոլորտը շարունակում է մնալ թերզարգացած՝ չնայած որոշ առաջխաղացումների: Այս բնագավառում առաջատար ընկերությունն է Սպայկան, որն ամուր ռուսական կապեր ունեցող հայկական բեռնափոխադրող ընկերություն է և մատուցում է տրանսպորտային և լոգիստիկ ծառայություններ ու ունի գյուղմթերքի վերամշակման որոշակի կարողություններ: Այն ներդրումներ է կատարել ագրոբիզնեսի ոլորտի ապրանքների արտահանման համար լոգիստիկ կենտրոններ հիմնելու նպատակով: 2011 թվականին Զվարթնոց օդանավակայանում ազատ տնտեսական գոտի ստեղծելու կառավարության ջանքերին զուգահեռ՝ Սպայկան ձեռնարկեց օդանավակայանի տարածքում լոգիստիկ կենտրոնի ստեղծում արտահանման համար թարմ մրգեր և բանջարեղեն պահեստավորելու նպատակով: Նախատեսվում է, որ այս պահեստավորման և սառնարանային կառույցը գործելու է նաև որպես գնումների կետ: Սպայկան ստեղծել է «Արարատ ֆուդ» և «Արարատ ֆրուտ» ապրանքատեսակները՝ մրգերի և բանջարեղենի մասով նախապատրաստական աշխատանքները և արտահանումը կազմակերպելու նպատակով: Զվարթնոցի տարածքում այս կառույցի հզորությունը բավարար չէ նույնիսկ միայն Սպայկայի արտահանման ամբողջ ներուժի համար. այն 2011 թվականին արտահանել է 6 500 տոննա թարմ մրգեր և բանջարեղեն, ինչը կազմում է Հայաստանի համապատասխան ամբողջ արտահանման 60%-ը: Այնուհանդերձ, սա լավ մեկնարկային կետ է, և այն անշուշտ ճիշտ ուղղությամբ է գնում՝ փորձելով կենտրոնացնել ագրոբիզնեսի ոլորտի արտադրանքի գնումները և առաքման կետերը և բարելավել տրանսպորտային ենթակառուցվածքը:

Ագրոբիզնեսի վերամշակման ոլորտն ունի սառեցման ավելի քիչ կարիք, սակայն նրան ավելի շատ պետք է կենտրոնացված պահպանում, որի դեպքում կարելի է լուծում տալ անհատ վերամշակող ընկերությունների կողմից փոքր արտադրության հիմնախնդրին: Բացի այդ, նրանց պետք է մեկ պատուհանով համակարգ, որտեղ նրանք կարող

են մեկ կետում ավարտին հասցնել մաքսային բյուրոկրատական ընթացակարգերը և որակի ստուգումը:

Աղյուսակ 5-ում բերված են բազմաթիվ ընթացակարգեր, որոնք պահանջվում են, որպեսզի փոխադրվող բեռը անցնի մաքսային և տրանսպորտային վերահսկում: Մեկ պատուհանի համակարգը կարող է թույլ տալ մաքսային մարմիններին և այլ գերատեսչություններին համակարգել կանոնակարգման գործընթացը՝ իր հերթին հնարավորություն տալով վերամշակող-արտահանողներին նվազագույնի հասցնել կորցրած ժամանակն ու գործընթացով պայմանավորված ծախսերը:

Աղյուսակ 5. Մաքսային և տրանսպորտային ընթացակարգերի տիպաբանություն

	Լոգիստիկայի ընթացակարգեր	Վարչարարական ընթացակարգեր
Առաքող երկիր	Պահեստային շինություններ Պահպանման և տրանսպորտային ընթացակարգեր Բեռնում և տեղափոխման նախապատրաստում	Նախաառաքումային ստուգումներ Դասակարգում/որակի ստուգումներ Արտահանմանն առաջադրվող լիցենզավորման կամ թույլտվությունների պահանջներ Արտահանման հարկերի վճարում
Մաքսային մարմին	Ներմուծման/արտահանման մասով մաքսազերծում և բացթողում	Կիրառելի պարտականությունների սահմանում Մաքսային ֆիզիկական ստուգում Վճարների և գանձումների վճարում
Ընդունող երկիր (ավելի քիչ է վերաբերում Հայաստանի քաղաքականությու ն մշակողներին)	Բեռնաթափում Բեռների առաքում (կոնտեյներների/ապրանքնե րի) պահպանում	Ստուգումներ անվտանգության նպատակով Թմրամիջոցների հսկման մասով ստուգումներ Փաստաթղթերին առաջադրվող պահանջ

Հետևյալ գործողությունները կարող են տանել Հայաստանում միասնական պահեստային և մաքսային ենթակառուցվածքի ստեղծման:

Գործողություն 1. Աջակցել տեղական մատչելի հավաստագրման մարմինների ստեղծմանը, որոնք կբարելավեն գործող կարգավորման, սննդի անվտանգության և հարկային մարմինները

Համաշխարհային Բանկի ռիսկերի վրա հիմնված մաքսային գնահատման մեթոդի ներդրման գործող ծրագիրն՝ այլ միջոցառումների հետ մեկտեղ (նկարագրվում է Գլուխ 1-ում) պետք է առավելագույնս օգտագործվի ամբողջ կարգավորման ընթացակարգերն արդիականացնելու նպատակով: Հատկապես պետք է կարևորել սննդամթերքի անվտանգությանը և որակի ստուգումներին, մաքսային կարգավորումներին և արտահանման հարկերի վճարումներին առնչվող ներկայիս ծանր բեռ հանդիսացող ընթացակարգերը (տե'ս վերը՝ Աղյուսակ 5–ում նկարագրված ընթացակարգերը):

Ընթացակարգերն արդիականացնելուց հետո պետք է ստեղծել մաքսային և կարգավորման մեկ պատուհանի համակարգ: Դրա համար ամենաարդյունավետ եղանակը կլինի օգտատերերին (վերամշակողներ, արտահանողներ և ներմուծողներ) համապատասխան կարգավորող գործակալությունների հետ կապող կենտրոնական ՏՏ համակարգի ստեղծումը:

Չնայած առցանց համակարգը ծախսարդյունավետ մեթոդ է՝ արտահանողները պետք է ունենան իրենց փաստաթղթերը թղթային տարբերակով ներկայացնելու հնարավորություն: Այդ նպատակով պետք է կենտրոնական պահեստի և գնումների/շուկայի կառույցի տարածքում հիմնել գրասենյակ, որտեղ օգտատերերը կարող են մեկ փաստաթղթով լրացնել իրենց մանրամասն տվյալները: Այնուհետև դրանք տարբեր գերատեսչությունների մասնագետների կողմից անմիջապես կանցնեն տարբեր ձևակերպումները:

Գործողություն 2. Օգտագործել առկա լոգիստիկ կառույցները արտահանման ենթակառուցվածքի ծրագրի հզորությունը/պահանջարկը/ծախսերը մոտավոր գնահատելու համար

Հարկ է դիտարկել հնարավոր միասնական պահեստի և սառնարանի տեղակայման վայրի մի քանի տարբերակներ: Այն կարող է տեղակայվել արտահանման ընկերությունների տրանսպորտային կենտրոնում կամ դա

կարող է լինել հիմնական սահմանային անցակետում՝ փոխադրման տերմինալի հարևանությամբ, կամ օդանավակայանում: Հայաստանի պարագայում Զվարթնոց օդանավակայանում արդեն իսկ կան մի քանի լոգիստիկ կենտրոններ (օրինակ՝ Սպայկա ընկերության կենտրոնը), և դրանք կարելի է օգտագործել որպես պիլոտ՝ նախքան նոր ծրագիրը սկսելը շինարարության և ընթացիկ ծախսերը գնահատելու համար:

Գործող կենտրոնները ինքնին կարող են համարվել պիլոտային ծրագրեր, քանի որ դրանք հիմնականում կառուցվել են մեկ տեսակի ապրանքի՝ թարմ մրգերի ու բանջարեղենի համար: Ընթացիկ ծախսերը կարելի է հակադրել առկա պահանջարկին, իսկ թե լոգիստիկ կենտրոնի շնորհիվ որքանով կավելանա արտահանման հզորությունը, պետք է նս ուսումնասիրել՝ ավելացումը՝ արդյունքում: Վերամշակված մրգերի և բանջարեղենի պահեստավորման տեխնիկական մասնագրերը հարկ է քննել նախքան պահուստավորման առկա հզորությունները մեծացնելու կամ նոր պահեստներ ավելացնելու վերաբերյալ որոշում կայացնելը:

Գործողություն 3. Ստեղծել մեկ միասնական պահեստ և շուկա, որտեղ արտահանողները կարող են անցնել մաքսային և հավաստագրման մեկ միասնական պատուհանով

Գծապատկերներ 20-ը և 21-ը ընդհանուր գծերով ներկայացնում են ագրոբիզնեսի ոլորտի վերամշակված ապրանքների համար մեկ պատուհանի սկզբունքով կառույցը: Գծապատկեր 20-ում նկարագրված է մեկ միասնական պահեստը և մաքսակետը՝ առավել ընդգրկուն համատեքստում, որտեղ մեկ պահեստային շինությունը և մեկ մաքսային պատուհանը գտնվում են մասնավոր ընկերությունների (վերամշակողներ, արտադրողներ, արտահանողներ և այլն), և տեղեկատվություն ու փաստաթղթեր պահանջող կառավարական գերատեսչությունների փոխգործակցության կենտրոնում: Այդ գծապատկերում ներառված են նաև մաքսային մեկ պատուհանը գործարկող SS համակարգերի մասով որոշ առաջարկություններ: Գծապատկեր 21-ում բերված են մանրամասներ միասնական պահեստի և մեկ պատուհանի սկզբունքով գործող կառույցների վերաբերյալ՝ դրանց տեղեկատվության հավաքագրման և փոխանցման մեխանիզմը նկարագրելու համար:

Գծապատկեր 20. Պահեստավորման/մաքսային/որակի հսկման միասնական կառույցի օրինակ

Աղբյուրը. ՏՀԶԿ վերլուծություն

Գծապատկեր **21.** Մեկ պատուհանի սկզբունքով կառույցն իր մանրամասնություններով



Աղբյուրը. ՏՀԶԿ վերլուծություն

Հաջողության հիմնական գործոններ

- **Կարճաժամկետ.** ներգրավել օգնություն արտաքին ուժերի կողմից (օրինակ՝ խորհրդատվական ընկերություն)՝ պատշաճ ուսումնասիրության (due diligence) և ծրագրի հնարավոր իրականացման համար: Ծրագիրը կշահի արդեն իսկ այդ սխեման իրականացրած և լավագույն գործելակերպի փորձ ունեցող որևէ երկրի մաքսային գործակալության տված խորհրդից:

- **Երկարաժամկետ.** պետք է ձևավորել մոնիթորինգի և գնահատման մեխանիզմներ՝ մեկ պատուհանի սկզբունքով գործող միասնական պահեստավորման և մաքսային կառույցի թափանցիկ և արդյունավետ գործունեության ապահովման նպատակով: Սա լավագույնս իրականացվում է արտաքին անկախ մասնավոր խորհրդատվական ընկերության կողմից:

Քննել նորաստեղծ Արտահանման ապահովագրական գործակալության կապիտալի և առաջարկվող պրոդուկտների ընդլայնման հարցը

Գնահատում. արտահանման համար ֆինանսական միջոցների տրամադրումը դեռ սաղմնային փուլում է

Հայաստանի արտահանողները ստանում են խիստ սահմանափակ ֆինանսական աջակցություն՝ կոնկրետ կարիքների մասով: Հայաստանի նորաստեղծ Արտահանման ապահովագրական գործակալությունը (ԱԱԳ) նոր է սկսել ֆինանսական պրոդուկտներ առաջարկել արտահանմանն աջակցելու համար: Խոշոր բանկերից մի քանիսը առևտրի համար ֆինանսական միջոցներ են տրամադրում մասնավոր հատվածին, որոնք հաճախ աշխատում են ՎԶԵԲ-ի տիպի միջազգային ֆինանսական հաստատությունների հետ միասին: Օրինակ, Հայէկոնոմբանկը և ՎԶԵԲ-ը ակրեդիտիվներ են տրամադրում արտահանողներին, սակայն միայն այն դեպքում, երբ արտահանողն ունի գործող վարկային գիծ: Հայէկոնոմբանկ-ՎԶԵԲ գործընկերության կողմից Հայաստանի ՓՄՁ-ներին առաջարկվող աջակցությունը հիմնականում սահմանափակվում է փոքր գյուղատնտեսական վարկերով:

2003 թվականից Հայաստանը հանդիսանում է Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ, և պետք է հետևի, որպեսզի արտահանողներին տրամադրվող ցանկացած վարկային աջակցության համապատասխանի ԱՀԿ կարգավորումներին: Մասնավորապես, ԱՀԿ-ն թույլատրում է արտահանման վարկեր և արտահանման վարկերի երաշխիքներ, եթե սխեմաները համապատասխանում են ՏՀԶԿ-ի *Պաշտոնապես աջակցվող արտահանման վարկերի ուղեցույցին:*

ՏՀԶԿ-ը գտնվում է բազմաթիվ արտահանման վարկերի և երաշխիքների տրամադրման գործընթացի կենտրոնում: ՏՀԶԿ-ի կազմում գտնվող Առևտրի և գյուղատնտեսության տնօրինությունն ունի Արտահամման վարկերի բաժին, որը մշտադիտարկում և պահպանում է Արտահանման վարկերի պաշտոնական աջակցման ուղեցույցի պահանջները (ՏՀԶԿ, 2014ա): Սա ապահովում է միջազգային համագործակցություն և փորձի փոխանակում այս ոլորտում: Այս առումով ՏՀԶԿ-ն տիրապետում է ներքին գիտելիքների այն մասին, թե ինչպես կազմակերպել պետական աջակցությամբ արտահանման

ֆինանսավորման ծրագրեր, որոնք համապատասխանում են միջազգային լավագույն գործելակերպին:

Այս զեկույցում փաստարկվում է, որ արտահանողներին, մասնավորապես ՓՄՁ-ներին, ֆինանսապես օժանդակելու լավագույն եղանակը պետության կողմից արտահանման ֆինանսավորման պրոդուկտների համակողմանի շարք առաջարկելն է՝ մասնավոր հատվածի ուժեղ մասնակցությամբ: Արտահանման ապահովագրական գործակալությունը, որը ներկայումս գործում է որպես պիլոտային ծրագիր, լավ մեկնարկ է: Այն հիմնվել է պետական հատվածի՝ հինգ նախարարությունների տպավորիչ մասնակցությամբ (տե՛ս Գլուխ 1-ը), սակայն նվազագույն՝ 5 միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք մեկնարկային կապիտալով: Արտահանման ապահովագրումը խիստ կարևոր գործիք է ներկա արտահանմանը աջակցելու համար, որը կնվազեցնի արտահանման գործարքների ծախսը: Այն արդյունավետ է վարկերի, պարտավորությունների և բեռնափոխադրման ռիսկերի մասով, սակայն պակաս արդյունավետ է արտահանողների քանակի մեծացման և թիրախային շուկաների դիվերսիֆիկացման հարցում: Այս նպատակներին հասնելու համար հարկ է, որ արտահանման ֆինանսավորումը տրամադրվի արտադրության ողջ արժեքի շղթային, այլ ոչ միայն արտահանման առաջարկի շղթային:

Գծապատկեր 22-ում բերված է պետական և մասնավոր հատվածներին հասանելի արտահանման ֆինանսավորման գործիքների տեսակների սխեման: Դրանք բաժանվում են ըստ ֆինանսական պրոդուկտների տեսակի (սեփական միջոցներ, ֆինանսներ և ապահովագրություն) և ըստ գործընկերային կողմերի (հաճախորդ/մատակարար, պետական հատված և մասնավոր հատված): Սեփական կապիտալի ֆինանսավորումը երկարաժամկետ տարբերակ է, որը հատկապես տեղին է այն երկրների ընկերությունների համար, որոնք ունեն իրացվելի և կայացած կապիտալի շուկաներ: Ինչպես նկարագրվել է վերը, արտահանման ապահովագրական պրոդուկտները խիստ կարևոր են և հաճախ զուգակցվում են արտահանման ֆինանսավորման պրոդուկտների հետ՝ արտահանման մասով ֆինանսական առավել մեծ աջակցություն ապահովելու համար: Հաճախորդներին և/կամ մատակարարներին հասանելի ֆինանսավորման գործիքների խումբը

գլխավորապես ներառում է վճարումը ժամանակի կտրվածքով բաշխելու պայմանավորվածություն: Մասնավոր հատվածի ֆինանսավորումը ներառում է ստանդարտ բանկային պրոդուկտների ցանկ, ինչպիսիք են՝ օվերդրաֆտը, ակրեդիտիվները, մատակարարման շղթայի ֆինանսավորումը և երբեմն՝ արտահանման վարկերը, մասնավորապես եթե արտահանման ապահովագրությունն արդեն իսկ ապահովվել է: Որոշ բանկային պրոդուկտներ ավելի ներհատուկ են առևտրին. դրանցից են, օրինակ, ֆակտորինգը, վճարման պարտավորագրի ֆինանսավորումը և հաշիվ ապրանքագրի հիման վրա ֆինանսավորումը: Բանկերի կողմից արտահանման ֆինանսավորման հետ կապված գլխավոր խնդիրը, որ կարող է սահմանափակող լինել, այն է, որ հաճախորդներից պահանջվում է ունենալ վարկային լավ պատմություն, գրավի առարկա և առևտրային գործունեության երկար պատմություն: Դա առաջին անգամ արտահանողների և ՓՄՁ-ների համար շատ ծախսատար և դժվար է դարձնում առևտրի համար ֆինանսավորում ստանալը: Արտահանման պետական ֆինանսավորման գործիքների լայնընդգրկուն ցանկ կա, որ կարող է լրացնել այս բացը՝ սկսած արտահանողներին ուղղակի պետական վարկավորումից մինչև արտահանման ֆինանսավորման երաշխիքներ, որի պարագայում պետական հատվածը երաշխիք է տրամադրում առևտրային բանկի վարկի համար:

Գծապատկեր 22. Արտահանման երաշխավորման հիմնադրամի օրինակ



Աղբյուրը. ՏՀԶԿ վերլուծություն

Այս զեկույցում առաջարկվում է արտահանման պետական ֆինանսավորման գործիքներ հավելել Արտահանման ապահովագրական գործակալության պորտֆելին, երբ այն արդեն բավականաչափ կապիտալ ունենա և ստացած լինի առևտրային բանկերի համագործակցությունը: Երաշխավորման պրոդուկտներ տրամադրելը հատկապես կարևոր է: Այս ամենը համահարթեցնող ազդեցություն է ունենալու արտահանման ֆինանսավորման վրա և կարող է վարկավորման հնարավորություն տալ ոչ միայն ներկայիս արտահանողներին, այլ նաև ողջ արժեքի շղթայի պոտենցիալ արտահանողներին: Նման սխեմաները նաև էլ ավելի կզարգացնեն Հայաստանի բանկային ոլորտը:

Ստորև նկարագրված գործողությունները համակարգված քայլեր են առաջարկում Հայաստանի քաղաքականության պատասխանատուներին առ այն, թե ինչպես ընդլայնել պիլոտային Արտահանման ապահովագրական գործակալության կողմից առաջարկվող պրոդուկտների տեսականին:

Գործողություն 1. Արդյունավետ օժանդակություն տրամադրել պիլոտային Արտահանման ապահովագրական գործակալությանը (ԱԱԳ)

Արտահանման ապահովագրական գործակալության հաջող մեկնարկն ապահովելու համար առավելագույն ջանքեր են անհրաժեշտ: Սա վստահարժան օրինակ կլինի մասնավոր ֆինանսական հատվածի համար առ այն, որ ՀՀ կառավարությունը հանձն է առել աջակցել արտահանողներին:

Այս ամենին հասնելու համար ՀՀ կառավարությանն անհրաժեշտ է անցկացնել համապատասխան օրենսդրություն՝ արտահանման ֆինանսավորմանն օժանդակելու (և ԱԱԳ հեռահար, սակայն միաժամանակ ամենայն ճշգրտությամբ սահմանված իրավասությունների շրջանակը ապահովելու) համար, գործի դնել ֆինանսական վերահսկողության պատշաճ մեխանիզմ և սկզբնական կապեր հաստատել առևտրային բանկերի հետ: ԱԱԳ ներկայիս իրավասության շրջանակը վերաբերում է Հայաստանից արտահանման ծավալների ընդլայնմանը: Կարևոր է այս իրավասությունը համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությանը (ՁՀԳ, 2014բ): ԱԱԳ նպատակները կարելի է խմբավորել ըստ ՓՄՁ-ների կողմից արտահանվող ծավալների մեծացման՝ ոլորտ առ ոլորտ, մասնավորապես ըստ ռազմավարության մեջ նշված ոլորտների, ինչպիսին է, օրինակ, վերամշակված գյուղմթերքի ոլորտը, և ըստ թիրախային շուկաների տարբեր խմբերի: Այսպիսի մոտեցումը նաև կդյուրացնի ԱԱԳ հաջողության մոնիթորինգը և գնահատումը:

Հաջորդիվ գործողությունների հաջորդականությունը նկարագրում է արտահանման երաշխավորման հիմնադրամի ստեղծման քայլերը՝ որպես Հայաստանի վերամշակված մրգերի և բանջարեղենի արտահանման շուկայի պիլոտային ծրագիր:

Գործողություն 2. Պիլոտային ԱԱԳ-ը գովազդել մասնավոր բանկերի հեռանկարային գործընկերների շրջանում

Գործընկերությունը տեղական բանկերի հետ շատ կարևոր է: ԱԱԳ ֆինանսական միջոցները պետք է ապահովված լինեն պետական

դրամական միջոցներով, սակայն նրա գործարքները պետք է կատարվեն մասնավոր հատվածի վարկային ռիսկերի և ֆինանսական աջակցության մասնագետների հետ սերտ համագործակցությամբ: Արտահանման կայացած ապահովագրական գործակալության միջոցների հիմնական օգտագործողները, բացի տեղական արտահանողներից, նաև տեղական առևտրային բանկերն են:

Գործողություն 3. Արտահանման ապահովագրումից անցում կատարել արտահանման ֆինանսավորման պրոդուկտների առավել ընդլայնված տեսականու

Երբ ապահովագրման գործարքներն արդեն կայացած լինեն և գործընկեր առևտրային բանկերը՝ ներգրավված, հարկ կլինի ընդլայնել ԱԱԳ կողմից առաջարկվող պրոդուկտների տեսականին: Ինչպես քննվել է վերը, պորտֆելում ներառման ենթակա առանցքային պրոդուկտը արտահանման երաշխիքներն են: Գծապատկեր 22-ում բերված սխեման կարող է ծառայել որպես մեկնարկի կետ:

Գործողություն 4. ԱԱԳ-ը դարձնել արտահանման ֆինանսավորման գիտելիքների կենտրոն, որը կարող է խորհրդատվություն տալ արտահանողներին, հատկապես՝ ՓՄՁ-ներին

Անհրաժեշտ է, որպեսզի ԱԱԳ-ը համակողմանի փորձագիտական կարողություններ ձևավորի արտահանման ֆինանսավորման բնագավառում և գովազդի պրոդուկտները Հայաստանի մասնավոր ֆինանսական սեկտորում, ինչպես նաև արտահանման ճյուղերում: Ներկա և հեռանկարային արտահանողների հետ կապվելը և նրանց արտահանման ֆինանսավորման վերաբերյալ տեղեկատվություն ու վերապատրաստման դասընթացներ տրամադրելը խիստ կարևոր է գործակալության ծառայություններից օգտվողների, մասնավորապես՝ ՓՄՁ-ների, ինչպես նաև ԱԱԳ երկարաժամկետ կայունության ապահովման համար: Ֆինանսական առումով առավել լավ կրթված հաճախորդները կկարողանան ավելի լավ կառավարել իրենց հաշվեկշիռը և ռիսկերը:

Այնուհետ, հարկ կլինի էլ ավելի զարգացնել ԱԱԳ սեփական կարողությունները՝ կազմակերպելով կարողությունների զարգացման

միջոցառումներ՝ ներգրավելով միջազգային ոլորտի խաղացողների, օրինակ՝ SACE-ի և Kredex-ի լավագույն գործելակերպը: Այս առումով օժանդակություն կարող է տրամադրել որևէ միջազգային կազմակերպություն:

Հաջողության հիմնական գործոններ.

- **Կարճաժամկետ.** պետք է գործի անկախ, թափանցիկ և վստահելի աուդիտի մեխանիզմ՝ ԱԱԳ գործունեությունը գնահատելու նպատակով: Գործակալությունը պետք է կարգավորվի և վերահսկվի բազմաշերտ աուդիտի և ռիսկերի հսկման գործընթաց ունեցող անկախ ֆինանսական հաստատության նման:

- **Երկարաժամկետ.** բացի ագրոբիզնեսի ոլորտի արտահանողներին ֆինանսական միջոցների հավելյալ հասանելիություն առաջարկելուց, պետք է խթանել ԱԱԳ գործունեության նկատմամբ պահանջարկը: Սա նշանակում է, որ ներկա և պոտենցիալ արտահանողների մոտ բացատրական աշխատանքներ պետք է տանել գործակալության գոյության և գործունեության մասով, երևի թե, ընդհանուր ֆինանսական բացատրական քարոզարշավի միջոցով:

ՀԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐ

Նախապայմաններ և սահմանափակումներ

Սույն զեկույցում առաջարկվող՝ արտահանմանն առնչվող բարեփոխումների դրական ազդեցությունը մեծապես կախված է ագրոբիզնեսի ողջ արժեքի շղթայի համակողմանի հզորացումից: Հայաստանի գյուղատնտեսությունը մեծապես տուժում է փոքր մասշտաբի և հատվածականության պատճառով: Դա կապված է արտադրողականության մի շարք խոչընդոտների, ինչպիսիք են, օրինակ, ֆինանսական միջոցների սահմանափակ հասանելիությունը, հմտությունների զարգացման համար փոքր ռեսուրսների առկայությունը և նորարարության պակասը: Բացի այդ, հարկ է նաև ամրապնդել արտադրողների և վերամշակողների կապը: Նման քաղաքականություն է հողերի խոշորացման համապարփակ քաղաքականությունը: Մեկ այլ քաղաքականություն է վարելահողերի իրացվելիության շուկա ձևավորելը:

Սկզբնական գյուղատնտեսական արտադրանքի վրա դրական ազդեցության պոտենցիալ ունի ներկայիս կոոպերատիվների շարժումը: Ընթացիկ աշխատանքներ են տարվում Հայաստանում այս շարժումն առաջ մղելու ուղղությամբ: Բացի այդ, քաղաքականության պատասխանատուները կարող են հղում կատարել անցումային երկրներում կոոպերատից շարժման աջակցության քաղաքականության վերաբերյալ ուղեցույցին, որը մշակվել է ՏՀԶԿ Եվրասիայի մրցունակության ծրագրի կողմից՝ Ղազախստանի քաղաքականության բարեփոխման (մեկնարկը՝ 2015 թվականի առաջին կիսամյակին) օրակարգին վերաբերող՝ «Գյուղատնտեսական կոոպերատիվների հզորացումը Ղազախստանում» զեկույցի շրջանակներում:

Իրականացումն ուղղորդող սկզբունքներ

Քաղաքականության մասով առաջարկվող բարեփոխումների հաջողության հիմքում ընկած են մի շարք ուղղորդող սկզբունքներ.

- *Հավաստիանալ, որ ստեղծված գործիքները պայմանավորված են պահանջարկով.* առաջարկված քաղաքականության գործիքների մշակումը պետք է լինի համապարփակ և ծախս-օգուտ տեխնիկական վերլուծության արդյունք: Քաղաքականության գործիքները պետք է բխեն պահանջարկից և հնարավորինս կապված լինեն սպառողների/շահառուների կարիքներին: Պետք է ապահովել նմանատիպ երկրների քաղաքականությունների պատշաճ գործելակերպերի մասով մշտական իրազեկում:

  Օրինակ՝ արտահանման խթանման գործակալությունը պետք է աջակցի պահանջարկից բխող արտահանման գործընթացին՝ թիրախային արտասահմանյան երկրների վերաբերյալ շուկայի հետազոտական տվյալներ տրամադրելու միջոցով:

- *Ապահովել մասնավոր հատվածի մասնակցությունը և աջակցությունը.* մասնավոր հատվածի մրցունակությանը սատարող քաղաքականությունների մշակումը պետք է կատարել համաձայն մասնավոր հատվածի կարիքների:

  Օրինակ, պետք է ստեղծել արտահանման երաշխավորման հիմնադրամ՝ մասնավոր բանկերի գործընկերությամբ: Կառավարման մարմինը պետք է իր կազմում ներառի մասնավոր բանկերի և տեղական արտադրության ներկայացուցիչների: Ռիսկերի գնահատման համար պատասխանատու տեխնիկական անձնակազմը պետք է ունենա մասնավոր հատվածի մասով վերապատրաստում:

- *Բավարար ռեսուրսներ հատկացնել հստակ նպատակների համար.* գործիքի նպատակը պետք է լինի հստակ նախանշված, և պարունակի քաղաքականության գործիքի մնացած բնութագրիչները: Պետք է հատկացնել բավարար ռեսուրսներ այս նպատակի ձեռքբերումն իրականություն դարձնելու համար:

Ավելի լավ է համաձայնության գալ սահմանափակ նպատակի շուրջ և հավաքել բավարար ռեսուրսներ, քան փորձել ամեն ինչ ընդգրկող քաղաքականություն առանց անհրաժեշտ միջոցներն ունենալու:

Որպես այդպիսին, Գլուխ 3-ում առաջարկվող քաղաքականության գործիքներից յուրաքանչյուրը պետք է ունենա հստակ և չափելի թիրախ: Որպես օրինակ կարելի է դիտարկել հետևյալը. արտահանման խթանման գործակալությունը կարող է գնահատվել արտահանման աճի նկատմամբ՝ ժամանակային սանդղակի որոշակի թիրախի միջոցով: Արտահանման ենթակառուցվածքի և կարգավորման արդիականացման ծրագիրը կարող է նպատակաուղղվել որոշակի քանակով արտահանման օրերի կրճատմանը: Արտահանման երաշխավորման հիմնադրամը կարող է ունենալ ՓՄՁ-ների արտահանման մասնաբաժինը որոշակի մարժայով ավելացնելու թիրախ:

- *Ներկառուցել մոնիթորինգի և գնահատման մեխանիզմները ամենասկզբից.* քաղաքականության յուրաքանչյուր գործիք պետք է ունենա ներկառուցված աուդիտի մեխանիզմ՝ թափանցիկության և անկախության սկզբունքներն ապահովելու նպատակով:

Արտահանման խթանման գործակալության և միասնական պահեստավորման և մաքսային մեկ պատուհանի սկզբունքով գործող կառույցի համար դրանք կարող են լինել մոնիթորինգի անկախ հանձնաժողովները: Արտահանման երաշխավորման հիմնադրամը պետք է մշտադիտարկվի այլ ֆինանսական հաստատություններում գործող աուդիտի թիմի տիպի թիմերի կողմից:

Իրականացման համար առաջարկվող ժամանակային սանդղակ

Քաղաքականությանը վերաբերող այս զեկույցում ներկայացվել են այն հիմնական քայլերը, որոնք Հայաստանը պետք է ձեռնարկի իր ազգրբիզնեսի արտահանումն ընդլայնելու համար: Ստորև ներկայացվում է հնարավոր քաղաքականության իրականացման հենասյուների պարզ ճանապարհային քարտեզ: Այն ընդհանուր գծերով նկարագրում է հիմնական ձեռնարկումները, որոնք պետք է կազմակերպել իրականացման գործընթացի տարբեր փուլերում:

Գծապատկեր 23. Իրականացման հնարավոր ճանապարհային քարտեզ

Առաջին առաջարկության մասով ճանապարհային քարտեզ

Երկրորդ առաջարկության մասով ճանապարհային քարտեզ

Երրորդ առաջարկության մասով ճանապարհային քարտեզ

Քննել նորաստեղծ ԱԱԳ-ի կապիտալի և պրոդուկտների տեսականու ընդլայնման հարցը	Կարճաժամկետ *< 1 տարի*	Միջնաժամկետ *1-3 տարի*	Երկարաժամկետ *> 3 տարի*
Արդյունավետ օժանդակություն պիլոտային ԱԱԳ-ին			
• Ապահովել համապատասխան օրենսդրություն՝ արտահանման ֆինանսավորմանը, ֆինանսական վերահսկողությանը և առևտրային բանկերի հետ կապերը ապահովելու համար	■		
ԱԱԳ-ն դարձնել մասնավոր բանկերի հեռանկարային գործընկեր			
• Գործարկել ճիշտ խթաններ մասնավոր հատվածին ներգրավելու համար	■	■	
Արտահանման պիլոտային ապահովագրությունից անցում կատարել արտահանման ֆինանսավորման պրոդուկտների լայն տեսականու, որը ՓՄՁ-ների արտահանման արձանագրման բանալին է		■	■
ԱԱԳ-ն դարձնել արտահանման ֆինանսավորման գիտելիքի կենտրոն, որը կարող է խորհրդատվություն տալ արտահանողներին և հատկապես ՓՄՁ-ներին			
• Զարգացնել արտահանման ֆինանսավորման մասով ներքին գիտելիքները		■	■
• Ապահովել համապատասխան ռեսուրսների առկայություն, որը թույլ կտա գործակալությանը խորհրդատվություն տալ արտահանող ընկերություններին ֆինանսավորման տարբերակների վերաբերյալ		■	■

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ACET (African Center for Economic Transformation) (June 13 2014), “Streamlining customs, seaports, and airports”, ACET website, http://acetforafrica.org/whats-new/post/streamlining-customs-seaports-and-airports/.

ԶՀԳ (Զարգացման հայկական գործակալություն) (2014ա), ‹‹Հայաստանի արտահանվող հիմնական ապրանքները, 2008-2013››, ԶՀԳ վեբ կայք՝ www.ada.am/eng/for-exporters/export-statistics/macroeconomic-indicators/main-export-products-of-armenia, մուտքը՝ 29-ը հուլիսի 2014թ.

ԶՀԳ (2014բ), *Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականություն,* www.ada.am/eng/for-exporters/export-oriented-industrial-policy/.

Ahn, J.B., M.Amiti and D.E. Weinstein (2011), “Trade finance and the great trade collapse”,*The American Economic Review,*Vol. 101(3), pp. 298-302.

Altomonte, C., L.Saggiorato and A. Sforza (2012), “TNCs’ global characteristics and subsidiaries’ performance across European regions”,*Transnational Corporations,* Vol. 21(2), pp. 1-20.

America Bank Group (2013), *Food processing sector in Armenia*, http://www.ameria.am/img/Food_processing_sector_Reseach_Report_eng.pdf (accessed 25 June 2014)

ՀՀ ԱՎԾ (2014ա), ԱՎԾ տվյալների շտեմարան, http://armstatbank.am/, մուտքը՝ 5-ը հունիսի 2014թ.

ՀՀ ԱՎԾ (2014բ),‹‹Հայաստանի Հանրապետության տնտեսական և ֆինանսական տվյալներ››, ՀՀ ԱՎԾ վեբ կայք՝ http://docs.armstat.am/nsdp/, մուտքը՝ 29-ը հուլիսի 2014թ.

Asmundson, I. et al. (2011), "Trade and trade finance in the 2008-09 financial crisis", *IMF Working Paper,* WP/11/16, IMF (International Monetary Fund).

Avetisyan, S. (2010), *Agriculture and Food Processing in Armenia*, Limush Publishing House, Yerevan.

Badinger, H. and T.Url(2012), "*Export credit guarantees and export performance. Evidence from Austrian firm-level data*",*WIFO Working Papers,*No. 423, WIFO (Austrian Institute of Economic Research), Vienna.

Belloca, M. and M. Di Maio(2011), "Survey of the literature on successful strategies and practices for export promotion by developing countries",*IGC Working Paper,* 11/0248, IGC (International Growth Centre), London.

Bernard, A.B. et al. (2007), "Firms in international trade",*NBER Working Paper*, No. 13054,NBER (National Bureau of Economic Research).

Calderón, C. and L.Servén(2004), "The effects of infrastructure development on growth and income distribution",*Policy Research Working Papers*, 270, World Bank Reports.

Chapman, R.J. (2006),*Simple Tools and Techniques for Enterprise Risk Management*, John Wiley & Sons.

Chrichton, D. (2006), "Estonian Credit and Export Guarantee Fund (KredEx), Estonia", OECD LEED Programme,OECD, www.oecd.org/cfe/leed/37963347.pdf.

CIA (Central Intelligence Agency)(2014), *The World Factbook*, CIA, www.cia.gov/library/publications/the-world-factbook, accessed 22 September 2014.

Cline, W.R. (2004),*Trade Policy and Global Poverty*, Peterson Institute for International Economics, Washington, DC.

DuPont (2013),presentation at the Goldman Sachs 17th Annual Agribusiness Conference,New York, 26 February 2013, http://phx.corporate-ir.net/External.File?t=1&item=VHlwZT0yfFBhcmVudElEPTQ5MDA5MDh8Q2hpbGRJRD00OTU1OTM=.

EastInvest (2014), "Armenia at a glance", East Invest website,www.east-invest.eu/en/investment-promotion/armenia-2, accessed 21 July 2014.

EC (European Commission) (2014), SME Internationalisation Portal, https://webgate.ec.europa.eu/smeip/, accessed 22 September 2014.

Economist (19 July 2014), "Bridges to somewere: The variable benefits of investing in infrastructure", *TheEconomist*, www.economist.com/news/finance-and-economics/21607831-variable-benefits-investing-infrastructure-bridges-somewhere.

EU (European Union) (2009), "Annex D: Certification schemes for agricultural products and foodstuffs", in *Agricultural Product Quality Policy: Impact Assessment*, EU, http://ec.europa.eu/agriculture/quality/policy/com2009_234/ia_annex_d_en.pdf.

EV Consulting (2013), *Can Armenia Become a Country of Fine Wine?*, EV Consulting, http://evconsulting.com/brainwork/business-insights/can-armenia-become-a-wine-country (accessed 25 September 2014).

EV Consulting (2012),*Armenia Winemaking Sector Assessment: Development Strategy and Action Plan*, EV Consulting,www.ada.am/files/934/documents/Eng-Wine-Sector-Strategy-Action-Plan-16-10-12.pdf.

EU Neighbourhood Policy (EU ENP): http://www.enpi-info.eu/ (accessed 25 September 2014)

FAO (Food and Agriculture Organization of the United Nations) (2008), "Land consolidation in Central and Eastern Europe: A regional approach", *FAO Good Practices Case Study Series*, FAO, Rome.

FAO (2007), "Regional workshop on EU Rural Development Programme 2007-13 and its application to land consolidation" Regional Office for Europe and Central Asia website,www.fao.org/europe/meetings-and-events-2010/land2007/en/, accessed 11 August 2014.

FAOSTAT (2014), FAOSTAT database,http://faostat3.fao.org/faostat-gateway/go/to/home/E, accessed 29 July 2014.

Ferrantino, M.J. (2012), "Using supply chain analysis to examine the costs of non-tariff measures (NTMs) and the benefits of trade facilitation",*WTO Staff Working Paper*, ERSD-2012-02, WTO (World Trade Organization).

Hamilton, N. (1999),*Professional Policy Making for the Twenty First Century*,Policy Document, UK Department of Public Policy.

Hartvigsen, M. (2013), "Land reform in Central and Eastern Europe after 1989 and its outcome in the form of farm structures and land fragmentation," *FAO Land Tenure Working Papers,* No. 24, FAO, Rome.

IBISWorld, (2013) *Global Fruit and Vegetables Processing: Market Research Report*, IBISWorld, available fromwww.ibisworld.com/industry/global/global-fruit-vegetables-processing.html.

IMF (2014a), *World Economic Outlook 2014: Recovery Strengthens, Remains Uneven*, IMF, Washington, DC.

IMF (2014b), World Economic Outlook database, www.imf.org/external/pubs/ft/weo/2014/02/weodata/index.aspx, accessed 10 October 2014.

Investment Climate Advisory Services (2011), *Armenia Investment Climate Reform Project Factsheet*, Investment Climate Advisory Services, World Bank Group, Washington DC, www.ifc.org/wps/wcm/connect/5be90e004abcec498d189d4220e715ad/ArmeniaICRprojectFactsheet2012_EN.pdf?MOD=AJPERES.

Keller, W. (2004), "International technology diffusion",*Journal of Economic Literature,*Vol. 42(3), pp. 752-82.

KredEx (2014), KredEx website,www.kredex.ee/en, accessed 25 July 2014.

Lederman, D., M. Olarreaga and L. Payton (2009),“Export promotion agencies: Do they work?”,*Journal of Development Economics,* Vol. 91(2), pp. 257-265.

Marin, A. and M. Bell (2010), “The local/global integration of MNC subsidiaries and their technological behaviour: Argentina in the late 1990s”,*Research Policy,* Vol. 39 (7), pp. 919-31.

Marin, D. (2010), “The opening up of Eastern Europe at 20: Jobs, skills, and 'reverse maquiladoras' in Austria and Germany”, *Breugel Working Paper*, 2010/02, Breugel, Brussels.

Miranda, M. and D.V. Vedenov(2001), “Innovations in agricultural and natural disaster insurance”,*American Journal of Agricultural Economics,*Vol. 83(3), pp. 650-55.

Miroudot, S., R.Lanz and A.Ragoussis(2009), “Trade in intermediate goods and services”,*OECD Trade Policy Papers*, No. 93, OECD Publishing, Paris, http://dx.doi.org/10.1787/5kmlcxtdlk8r-en.

Moser, C., T.Nestmann, and M.Wedow(2006), “Political risk and export promotion: Evidence from Germany”,*Deutsche Bundesbank Discussion Paper Series 1: Economic Studies,*No. 36/2006, Deutsche Bundesbank.

Newfarmer, R. and M. Sztajerowska(2012), “Trade and employment in a fast-changing world”, in *Policy Priorities for International Trade and Jobs,* OECD Publishing, Paris, http://dx.doi.org/10.1787/9789264180178-en.

OEC (Observatory of Economic Complexity) (2014), “Armenia (ARM) profile of exports, imports and trade partners”,http://atlas.media.mit.edu/profile/country/arm/, accessed 29 July 2014.

OECD (2014a), *Arrangement on Officially Supported Export Credits*, OECD Publishing, Paris,www.oecd.org/officialdocuments/publicdisplaydocumentpdf/?doclanguage=en&cote=tad/pg(2014)6.

OECD (2014b), *Financing SMEs and Entrepreneurs 2014: An OECD Scoreboard*, OECD Publishing, Paris, http://www.oecd.org/cfe/smes/SMEs-Scoreboard-2014.pdf

OECD (2013),*Interconnected Economies: Benefiting from Global Value Chains*, OECD Publishing, Paris, http://dx.doi.org/10.1787/9789264189560-en.

OECD (2012)*Policy Priorities for International Trade and Jobs*, OECD Publishing, Paris, http://dx.doi.org/10.1787/9789264180178-en.

OECD and FAO (2014), *OECD-FAO Agricultural Outlook 2014*, OECD Publishing, Paris, http://dx.doi.org/10.1787/agr_outlook-2014-en.

OECD and EV Consulting (2014), *Summary Report of Armenian Agro-processors Survey,* OECDand EV Consulting, unpublished.

Oxford Economics (2013),*The Global SME Mindset*, Oxford Economics,www.oxfordeconomics.com/Media/Default/Landing%20pages/SAP%20SME/Research/SME_Global_Mindset.pdf.

Redding, S.J. (2010), "Theories of heterogeneous firms and trade",*NBER Working Paper*, No. 16562, National Bureau of Economic Research.

SAP News Center (2 July 2013), "Oxford Economics survey sponsored by SAP shows SMEs are adopting a global mindset",SAP News Center Blog,www.news-sap.com/oxford-economics-survey-sponsored-by-sap-shows-smes-are-adopting-a-global-mindset/, accessed 29 July 2014.

SKEMA (2014), "EU customs single window", SKEMA website, http://www.eskema.eu/defaultinfo.aspx?topicid=173&infoid=451&index=2, accessed 24 July 2014.

Strategy Unit(2002),*Risk: Improving Government's Capability to Handle Risk and Uncertainty*,Cabinet Office, London.

UNECE (United Nations Economic Commission for Europe) (2005), "Recommendations and Guidelines on establishing a Single Window", *UNECE Recommendation,* No.

33,www.unece.org/fileadmin/DAM/cefact/recommendations/rec33/rec33_trd352e.pdf.

UNCTAD (2009), *Promoting Investment and Trade: Practices and Issues*, Investment Advisory Series, Series A, Number 4, UNCTAD, Geneva.

USDA (United States Department of Agriculture) (2014), Economic Research Service, www.ers.usda.gov,accessed on 23 Sept 2014.

WHO (World Health Organization) and FAO(2003).*Diet, Nutrition and the Prevention of Chronic Diseases: Report of a Joint WHO/FAO Expert Consultation,*WHO Technical Report Series Vol. 916, WHO, Geneva.

World Bank (2014), “Exports of goods and services (% of GDP)”, World Bank database, http://data.worldbank.org/indicator/NE.EXP.GNFS.ZS, accessed 29 July 2014.

World Bank (2013), *Doing Business 2014: Understanding Regulations for Small and Medium-Size Enterprises*, World Bank Group, Washington, DC.

WTO (World Trade Organization) (14 April 2014), “Modest trade growth anticipated for 2014 and 2015 following two year slump”, WTO press release, www.wto.org/english/news_e/pres14_e/pr721_e.htm.

WTO (2010), *Trade Policy Review: Armenia*, WTO.

---

[1] ՏՀԶԿ թիմը հարցազրույց է անցկացրել նորաստեղծ գործակալության պաշտոնյաների հետ կառույցի իրավասությունների շրջանակն ու նպատակները հասկանալու համար, քանի որ գործակալությունը դեռ չի սկսել գործել և որևէ այլ պաշտոնական աղբյուր չկար:

[2] Ինֆորմացիան ստացվել է տեղական շուկայի մասնակիցների, ոչ պետական կազմակերպությունների և Զարգացման հայկական գործակալության հետ ՏՀԶԿ-ի անցկացրած մի շարք հարցազրույցներից, որը եղել է ծրագրի տեղեկատվության հավաքագրման գործընթացի մաս:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ՀԱՐՑԱԽՈՒՅՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ՈԼՈՐՏԻ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

ՏՀԶԿ-ն և նրա տեղացի գործընկեր ԻՎի Քոնսալթինգը հարցախույզ են անցկացրել Հայաստանի սննդի վերամշակմամբ զբաղվող ընկերությունների շրջանում ոլորտի վերլուծության համար նախնական տվյալներ հավաքագրելու նպատակով: Ընդհանուր առմամբ, հարցախույզին մասնակցել են մրգերի ու բանջարեղենի վերամշակմամբ զբաղվող 20 ընկերություններ: Բացառությամբ չորս ընկերությունների՝ հարցված բոլոր ընկերությունները փոքր և միջին ձեռնարկություններ են: Ընտրված ընկերությունների մոտ 55%-ը ունեցել է 50 և պակաս թվով աշխատողներ, և ընկերությունների ընդամենը 20%-ն է ունեցել 200 կամ ավելի աշխատող: Մենք օգտագործում ենք Փոքր և միջին ձեռնարկությունների մասին ՀՀ օրենքում տրված ՓՄՁ սահմանումը:[3] Ընտրանքում ընդգրկված ընկերություններից 19-ը իրականացնում է որոշակի արտահանման գործունեություն:

Ընտրված ընկերությունների մեծությունը (աշխատողների թիվը)





Հարցված ընկերությունների հաճախորդները (շատերն ունեն մեկից ավելի գնորդ, հետևաբար գումարը 100%-ից մեծ է)

Ընդհանուր առմամբ, մրգերի և բանջարեղենի վերամշակման գործընթացում մրգերն ու բանջարեղենը վերածվում են սննդամթերքի, որոնք պահածոյացվում են, շշալցվում, սառեցվում կամ չորացվում (տե՛ս ստորև բերված աղյուսակը): Արժեքի շղթայի այլ ընկերություններից ձեռք են բերվում այլ բաղադրիչներ, ինչպիսիք են, օրինակ, համեմունքները, աղը, շաքարը, կոնսերվանտներն ու գունավորիչները, որոնք խառնում են թարմ մրգերին ու բանջարեղենին վերջնական սպառողական սննդամթերք ստանալու համար: Ոլորտը մեծավ մասամբ ՓՄՁ-ներից է կազմված, բայցևայնպես, արտադրությունը կենտրոնացած է հինգ խոշոր ընկերությունների ձեռքում, որոնք ապահովում են ընդհանուր արտադրության ծավալի ավելի քան 80%-ը:

Չհաշված չրամիրգ արտադրողները՝ Հայաստանում կան միրգ ու բանջարեղեն վերամշակող ընդամենը 23 գործող ընկերություններ: Մրգերի ու բանջարեղենի չիր արտադրողները առանձին ենթախումբ են: Կազմակերպությունների ռեգիստրի տվյալներով՝ կան մրգի ու բանջարեղենի չրի մոտ 5400 արտադրողներ, ովքեր միասին տարեկան արտադրում են մոտ 1200 տոննա: Ոլորտը խիստ կենտրոնացված է

արտադրության առումով, և ընդամենը 20-30 ընկերություններ են, որ տարեկան 5 տոննայից ավելի են արտադրում:

Վերամշակված ՄևԲ ենթախմբերն ու արտադրանքները Հայաստանում

Վերամշակված ՄևԲ ենթախումբ	*Արտադրանք*
Կոնսերվացված մրգեր	Ջեմեր, մուրաբաներ, շշալցված մրգեր, մրգերի կոնսերվանտներ, սառեցված մրգեր
Կոնսերվացված բանջարեղեն	Ապակե և երկաթյա տարաներով փաթեթավորված բանջարեղեն
Մրգահյութ	100% մաքուր հյութեր, ներկտարներ, հյութ-ըմպելիքներ
Տոմատի հյութ	Տոմատի հյութ
Մրգի չիր	Հիմնականում չորացված ծիրան և սալոր, ինչպես նաև չորացված դեղձ, թուզ, խնձոր և այլն
Բանջարեղենի չիր	Չորացված լոլիկ, չորացված սմբուկ, չորացված կանաչ ոլոռ և այլն

Հարցախույզին մասնակցած 20 ընկերություններից 11-ը զբաղվում է մրգերի ու բանջարեղենի վերամշակմամբ (չհաշված մրգերի ու բանջարեղենի չիր արտադրողները), և ներկայացնում է Հայաստանում կոնսերվացված մրգերի ու բանջարեղենի և հյութերի արտադրությամբ զբաղվող ընկերությունների ընդհանուր թվի 52%-ը: Կազմակերպությունների պետական ռեգիստրից ընտրված ընկերությունների մոտ 10%-ը այլևս գործունեություն չեն իրականացնում, 19%-ը հրաժարվել է պատասխանել և ևս 19%-ը անհասանելի է եղել: Մրգերի ու բանջարեղենի չրարտադրությամբ զբաղվողներից թիրախավորվել են միայն արտահանման փորձ կամ արտահանման պոտենցիալ ունեցողները: Վերջիվերջո, հարցվել են 11 չրամիրգ արտադրողներ (որպես 20 ներկայացուցչից բաղկացած ընտրանքի մաս, չրամիրգ արտադրողներից մի քանիսը նաև զբաղվում է այլ ապրանքների վերամշակմամբ):

Ընտրությունը կատարել է ԻՎի Քոնսալթինգը՝ ելնելով շուկայում աշխատելու իրենց երկարամյա փորձից: Սա, անշուշտ, բերել է ընտրանքի կանխակալության, սակայն մեզ թույլ է տվել հատկացված սահմանափակ միջոցների շրջանակում ապահովել պատասխանի բարձր աստիճան և տեղինություն: Տեղինությունը կարևոր չափանիշ է, քանի որ հարցաշարերը ուղղված են եղել արտահանող կամ նման նկրտումներ ունեցող ընկերություններին: Այս զեկույցի պարագայում ընտրանքի նման կանխակալությունը խնդիր չէ, քանի որ հարցման տվյալները նախատեսվում է օգտագործել ոչ թե վիճակագրական կամ էկոնոմետրի աշխատանքի համար, այլ որպես որակական և էպիզոդային փաստեր:

Հարցված ընկերությունների 40%-ը բացվել է առավելագույնը 10 տարի առաջ: Ոլորտի ընկերությունների գրեթե կեսը գլխավորապես հիմնվում են ներքին կապիտալի վրա: Երեք ընկերություններ համատեղ ձեռնարկություններ են բացել օտարերկրյա ներդրողների հետ (ընտրանքի 15%-ը):



Ընկերությունների ավելի քան կեսը ուղղահայաց ինտեգրմամբ ընկերություններ են, որոնցից ընդամենը 40%-ն է զբաղվում բացառապես գյուղմթերքի վերամշակմամբ: Մնացածն առաջ է բերում առաջնային արտադրական հզորությունների, և տրանսպորտային ու լոգիստիկայի բաժինների, ինչպես նաև վերամշակման մասի անհրաժեշտություն: Արտադրողների կողմից գյուղատնտեսությամբ զբաղվելը նպատակ ունի մեղմացնել առաջարկի պակասով պայմանավորված ռիսկերը, ինչպես նաև հատվածավորված գյուղացիական տնտեսությունների հետ կապվելու ծախսատար պրոցեսը և արտահանման հետ կապված դժվարությունները: Հարցվածների մեկ երրորդը զբաղվել է բացառապես մրգերի ու բանջարեղենի չրի արտադրությամբ: Գործունեության ամենատարածված տեսակը մրգերի ու բանջարեղենի պահածոների և հյութերի

արտադրությունն է: Հարցված բոլոր ընկերությունները, բացի մեկից, արտահանում են իրենց արտադրանքը, միաժամանակ նրանց մեկ երրորդը իր ներկայությունն ունի նաև ներքին շուկայում: Ավելի քան կեսն ունի արտահանման կողմնորոշվածություն, և նրանց եկամուտների ավելի քան 50%-ը ստացվում է արտաքին շուկաներում իրացումից:



Հարցված ընկերությունների գերակշռող մեծամասնությունը սահմանափակ պատասխանատվությամբ մասնավոր գործընկերություններ են կամ փակ բաժնետիրական ընկերություններ: Ձեռնարկությունների մեկ երրորդի շրջանառությունը փոքր է՝ տարեկան առավելագույնը 250 000 ԱՄՆ դոլար, և ընդամենը 10%-ն է նշել, որ ունի տարեկան ավելի քանի 5 միլիոն ԱՄՆ դոլար շրջանառություն: Գլոբալ մասշտաբով՝ գյումթերքի վերամշակմամն զբաղվող նույնիսկ խոշոր հայկական ընկերությունները (> 250 աշխատող) ռեսուրսների առումով փոքր են թվում: Սա բավականին խոսուն վիճակագրություն է՝ Հայաստանի ագրոբիզնեսի ճյուղի փոքր մասշտաբի և հատվածականության համընդհանուր հիմնախնդրի լույսի ներքո:



Հարցախույզն իրականացնող կազմակերպությունը՝ ԻՎի Քոնսալթինգը առանձնահատուկ ջանքեր է գործադրել անձամբ այդ ընկերությունների գործադիր տնօրենների, արտահանման գծով մենեջերների և այլ ղեկավարների հետ հարցազրույցն անցկացնելու համար: Դա կարևոր է եղել՝ հաշվի առնելով ուսումնասիրության ուղղվածությունը, որը բացահայտում է արտադրության, առևտրի, պետական հատվածի հետ կապեր հաստատելու և պահելու, ներդրումային ծրագրերի և ռեսուրսների կառավարման մասով առկա խոչընդոտները: Հարցված անձանցից շատերը եղել են ընկերությունների տնօրեններ կամ ղեկավար պաշտոն զբաղեցնողներ:

Աշխատանքային պաշտոն	*քանակ*
Արտահանման և որակի կառավարիչ	1
Նախագահ	1
Տնօրեն	7
Ֆինանսական տնօրեն	1
Տնօրենի տեղակալ	2
Արտահանման կառավարիչ	1
Արտադրական հարցերով տնօրեն	1
Ներմուծման-արտահանման կառավարիչ	1
Գործադիր տնօրենի անձնական օգնական	1
Մարքեթինգի կառավարիչ	1
Գործադիր տնօրեն	2
Հիմնադիր տնօրեն	1
Ընդամենը	20

Ընդհանուր առմամբ, հարցախույզի արդյունքները մատնանշում են Հայաստանի ագրոբիզնեսի ոլորտում, մասնավորապես՝ մրգերի ու բանջարեղենի վերամշակման ոլորտում առկա որոշ հիմնական միտումներ: Գլուխ 3-ում ներկայացված առաջարկությունները նախատեսված են պատասխանելու հարցման, ինչպես նաև ՏՀԶԿ թիմի կատարած լրացուցիչ փաստահավաք և վերլուծական աշխատանքների արդյունքներով վերհանված հիմնախնդիրներին:

Ամբողջական հարցման արդյունքները՝ հարցերի հետ միասին, կտրամադրվեն ըստ անհրաժեշտության: Ստորև հակիրճ ներկայացված են Հայաստանի ագրոբիզնեսի ճյուղի, և մասնավորապես, մրգերի և բանջարեղենի վերամշակման ոլորտի աճին խանգարող գործոնների վերաբերյալ հիմնական ուղերձները և այն բնագավառները, որտեղ ցանկալի է տեսնել կառավարության միջամտությունը՝ հատկապես մրգերի ու բանջարեղենի վերամշակման ոլորտի արտահանման պոտենցիալը խթանելու առումով: Այս ամենն առավել մանրամասն նկարագրված է զեկույցի հիմնական շարադրանքում:



Հայաստանի ագրոբիզնեսի ոլորտում առկա խոչընդոտները
Հայաստանի ագրոբիզնեսի ոլորտում առկՀումքի առկայություն և գին
Ցածր գնային մրցունակություն
Ֆինանսների սահմանափակ հասանելիություն
Շուկայի սահմանափակ հասանելիություն
Գյուղատնտեսական ապահովագրության բացակայություն
Ցածր արտադրողականություն
Լոգիստիկ և տրանսպորտային խնդիրներ
Արտահանման ապահովագրության բացակայություն
Սահմանափակ տեխնիկական հնարավորություններ
Բարդ իրավակարգավորումներ
Կառավարման սահմանափակ հմտություններ
Այլ
Դժվարանում է պատասխանել ա խոչընդոտները
45%
40%
40%
35%
30%
25%
20%
15%
10%
10%
5%
5%
10%

Մրգերի և բանջարեղենի վերամշակման ոլորտի արտադրողականության աճի խոչընդոտները
Սկզբնական ոլորտի ցածր արտադրողականություն 59.2%
Ֆինանսական խոչընդոտների հասանելիություն 52.5%
Աշխատուժի հմտությունների և որակավորումների պակաս 48.3%
Էլեկտրաէներգիայի ծախս 45.0%
Հմուտ աշխատուժի առկայություն 45.0%
Տեղական մատակարարների և հաճախորդների կարողություն և հուսալիություն 44.2%
Օտարերկրյա հեռանկարային հաճախորդների հետ ուղղակի կապերի պակաս 42.5%
Փոխադրման և պահեստավորման հետ կապված խնդիրներ 40.0%
Հաճախակի տեսչական ստուգումներ 37.5%
Հնացած սարքավորումներ և տեխնոլոգիա 37.5%
Ներդրվող միջոցների, բնական պաշարների առկայություն 30.0%
Պահանջարկը տեղական հաճախորդների շրջանում 27.5%
Կոռուպցիա 26.7%
Պահանջարկը օտարերկրյա հաճախորդների շրջանում 23.3%
Աշխատուժի մասով մեծ ծախսեր 22.5%
Տարանցիկ երկրների հետ կապված հիմնախնդիրներ 12.5%
Հաղորդակցության և տեղեկատվության առկայություն 5.0%
Այլ 7.5%

Հարցվողները մասնացույց են արել ագրոբիզնեսի ոլորտի և մրգերի ու բանջարեղենի վերամշակման ենթաոլորտի զարգացման խոչընդոտները: Ամենակարևորները սկզբնական ոլորտի ցածր արտադրողականությունն է, ֆինանսական միջոցների սահմանափակ հասանելիությունը, աշխատուժի սահմանափակ հմտությունները և շուկաների առավել հեշտ մուտքի անհրաժեշտությունը: Պարզ է, որ հարկ կլինի առավել լայնընդգրկուն բարեփոխումներ իրականացնել ագրոբիզնեսի ոլորտում մաշտաբի և հատվածականության հարցերը, հմտությունների պակասը և սկզբնական արտադրողների ցածր արտադրողականության խնդիրը լուծելու համար: Այդուհանդերձ, այս զեկույցի առանցքը շուկայի հասանելիության և արտահանման պոտենցիալ խնդիրներն են: Այս առումով, խոսուն են կառավարության ցանկալի աջակցության նշված ուղղությունները:

Հարցվածների գերակշռող մեծամասնությունը նախանշել է ՀՀ կառավարության աջակցության անհրաժեշտությունը արտահանման թիրախային շուկաների վերաբերյալ հետազոտությունների և տեղեկատվության տրամադրման հարցում: Ի լրումն, նրանք նաև

կցանկանային տեսնել պետական հատվածի միջամտությունը հայկական ապրանքների մարքեթինգին, հավաստագրման գործընթացի և իրավակարգավորման դաշտի օպտիմալացմանը, արտահանման համար ֆինանսական միջոցների տրամադրմանը, երկրի արտահանման ենթակառուցվածքների բարելավմանը: Այս բոլոր ուղղությունները գնահատվել են ՏՀԶԿ վերլուծության մեջ, և այս խնդիրների լուծման համար առաջարկվել են քաղաքականության մեխանիզմներ: Կառավարության միջամտության ցանկալի բնագավառ է նաև կրթական համակարգի բարեփոխումը, սակայն այդ խնդիրը սույն զեկույցի շրջանակներից դուրս է, և այդ իսկ պատճառով բաց է թողնված վերջնական առաջարկություններից:

---

[3] Ընկերությունը կարող է դասվել ՓՄՁ-ների խմբին միայն եթե աշխատողների թիվը 250-ից փոքր է, իսկ շրջանառությունը՝ 3.6 միլիոն ԱՄՆ դոլարից պակաս:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՏԶՀԿ-ը յուրօրինակ ֆորում է, որտեղ կառավարությունները միասին աշխատում են լուծելու գլոբալիզացիայով պայմանավորված տնտեսական, սոցիալական և բնապահպանական մարտահրավերները: ՏՀԶԿ-ի գործունեության կենտրոնում կառավարություններին հասկանալն ու օգնելն է, որպեսզի վերջիններս արձագանքեն նոր զարգացումներին և խնդիրներին, ինչպիսիք են՝ կորպորատիվ կառավարումը, տեղեկատվական տնտեսությունը և ծերացող բնակչության խնդիրները: Կազմակերպությունը ապահովում է մի միջավայր, որտեղ կառավարությունները կարող են համեմատել քաղաքականության փորձը, փորձել պատասխաններ գտնել ընդհանրական հիմնախնդիրներին, նախանշել հաջող գործելակերպերը և աշխատել ներքին ու միջազգային քաղաքականությունների համակարգման ուղղությամբ: ՏՀԶԿ անդամ երկրներն են՝ Ավստրալիա, Ավստրիա, Բելգիա, Կանադա, Չիլի, Չեխիայի Հանրապետություն, Դանիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Գերմանիա, Հունաստան, Հունգարիա, Իսլանդիա, Իռլանդիա, Իսրայել, Իտալիա, Ճապոնիա, Կորեա, Լյուքսեմբուրգ, Մեքսիկա, Նիդերլանդներ, Նոր Զելանդիա, Նորվեգիա, Լեհաստան, Պորտուգալիա, Սլովակիայի Հանրապետություն, Սլովենիա, Իսպանիա, Շվեդիա, Շվեյցարիա, Թուրքիա, Միացյալ Թագավորություն և Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Եվրոպական Միությունը մասնակցում է ՏՀԶԿ աշխատանքներին:

www.oecd.org

ՏՀԶԿ ԵՎՐԱՍԻԱՅԻ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ՏՀԶԿ Եվրասիայի մրցունակության ծրագիրը, որը մեկնարկել է 2008 թվականին, օգնում է արագացնել տնտեսական բարեփոխումները և բարելավել գործարար միջավայրը տնտեսական կայուն աճի և զբաղվածության հասնելու համար երկու տարածաշրջաններում՝ Կենտրոնական Ասիա (Աֆղանստան, Ղազախստան, Կիրգիզիայի Հանրապետություն, Մոնղոլիա, Թուրքմենստան և Ուզբեկստան) և Արևելյան Եվրոպա ու Հարավային Կովկաս (Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Մոլդովայի Հանրապետություն և Ուկրաինա):

www.oecd.org/globalrelations/eurasia.htm

Կոնտակտային անձ
Անտոնիո Սոմա
ՏՀԶԿ Եվրասիայի մրցունակության ծրագրի ղեկավար

CONNECTING ARMENIAN SMEs TO GLOBAL VALUE CHAINS
The case of agribusiness

Agribusiness is a strategically important sector in the Armenian economy. Linking to Global Value Chains can benefit small and medium-sized Armenian agribusinesses, but challenges remain, related to export promotion, infrastructure and finance. This Handbook presents recommendations to better link Armenia to the global agribusiness value chain.

This Handbook was peer reviewed on 27 November 2014 at the OECD Eurasia Competitiveness Roundtable. The Roundtable is a policy network for knowledge sharing on the implementation of competitiveness reforms and gathers OECD members and Eurasian partner countries.

ROUNDTABLE
EURASIA COMPETITIVENESS PROGRAMME

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ՈԼՈՐՏԻ ՓՄՁ-ՆԵՐԸ ԳԼՈԲԱԼ ԱՐԺԵՔԻ ՇՂԹԱՆԵՐԻՆ ԿԱՊԱԿՑԵԼԸ

Ագրոբիզնեսը Հայաստանի տնտեսության կարևոր ռազմավարական ոլորտ է: Գլոբալ արժեքի շղթաներին կապակցելը կարող է շահավետ լինել Հայաստանի ագրոբիզնեսի ոլորտի փոքր և միջին ձեռնարկությունների համար, սակայն արտահանման խթանման, ենթակառուցվածքների և ֆինանսական միջոցների մասով դեռևս առկա են մարտահրավերներ: Այս ձեռնարկում բերված են առաջարկություններ առ այն, թե ինչպես կարելի է Հայաստանը ավելի լավ կապակցել ագրոբիզնեսի գլոբալ արժեքի շղթաներին:

Ձեռնարկն անկախ փորձագիտական գնահատման է ենթարկվել ՏՀԶԿ Եվրասիայի մրցունակության հարցերով կլոր սեղանի՝ 2014 թվականի նոյեմբերի 27-ին կայացած նիստի ընթացքում: Կլոր սեղանը քաղաքականության հարթակ է, որտեղ հավաքվում են ՏՀԶԿ անդամ երկրները և Եվրասիական գործընկեր երկրներն ու միմյանց տեղեկատվություն են ներկայացնում մրցունակության բարեփոխումների իրականացման վերաբերյալ:

With the financial assistance of the European Union

german cooperation
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by:
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH